It is not accidental that soon - on September 1–7 – at the congress of the peoples of the East in Baku, convened on the initiative of the Communist International, the Bolsheviks, appealing to the Muslim peoples, came out against the infidels with a call to carry out a socialist revolution. It is noteworthy that Azerbaijan, which was already Soviet, was proclaimed at the Congress as the stronghold of the international proletariat, and the Republic of Armenia replete with refugees - the den of imperialism. In order to crush it and establish the Soviet order there, it was supposed to use the armed forces of the Kemalist Turks. A few days after that anti-Armenian Congress, the Kemalists, with the connivance and support of the Soviet government, invaded the territory of the Republic of Armenia. The Bolsheviks, among whom were also figures of Armenian nationality, began propaganda in the Armenian Army, urging not to fight against Russia's allies – the Kemalist Turks. This circumstance had a negative impact on the combat capability of the Army. On October 30, the enemy captured the Kars fortress.

On November 29, 1920, the Military Revolutionary Committee of Armenia, with the help of the 11th Army, entered Ijevan from Azerbaijan and declared Soviet power in Armenia. The government of the last Prime Minister Simon Vratsian was forced to relinquish power on December 2, in Yerevan. The Armenian-Turkish agreement signed in Alexandropol on the night of December 3 ended the war. According to this truce, the territory of Armenia was significanty diminised. The Armenian-Turkish border was to pass along the Akhurian-Araks line. The province of Sourmalu, which was not part of the Ottoman Empire, was transferred to Turkey; a special administration under the control of the Turks was to be established in Nakhchivan.

According to the figurative expression of the last Prime Minister of the Republic of Armenia S. Vratsian, Armenia was crushed between the Bolshevik hammer and the Turkish anvil. It is clear that in such conditions the collapse of the Republic was inevitable.

Despite the fall, the existence of the Republic did not remain without consequences. The Bolsheviks were forced to create a new Republic – Soviet Armenia on its basis. During the period of almost 70-year history of Soviet Armenia the

Armenian people experienced an economic and cultural boom. In fact, on the basis of the First Republic, although in conditions of a completely different political and administrative system, the ground was prepared for the formation of the Third Independent Republic.

From the distance of a century, that is the historical account of the restoration of independent statehood in May 1918.

1918–1920 ԹԹ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ա.

Ամփոփում

Չնայած 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության պատմության վերաբերյալ ստեղծված գիտական և քաղաքական բնույթի ահռելի գրականությանը, այսօր էլ կան հիմնահարցեր, որոնց ուսումնասիրությունն ունի ոչ միայն զուտ գիտական, այլ նաև ճանաչողական, քաղաքական ու գործնական մեծ նշանակություն:

Նկատի առնելով թուրք-ադրբեջանական պատմագրության կողմից խնդրո առարկա հիմնահարցի ոլորտում կեղծարարության օրեցօր աճը, արդիական է, մասնավորապես, մի քանի հարցերի քննությունը, որպիսիք են հանրապետության ստեղծման պատմական և գաղափարաքաղաքական նախադրյալները, նորաստեղծ պետության մեջ ժողովրդավարական գործընթացները, կառավարության վարած քաղաքականությունը, Առաջին հանրապետության դասերը, պետականության շարունակականության խնդիրը՝ երեք հանրապետությունների օրինակով:

Հանրապետությունը կարճ կյանք ունեցավ, սակայն նրա գոյությունն անհետևանք չմնաց: Նրա հիմքի վրա բոլշևիկները պարտավորված ստեղծեցին նոր հանրապետություն՝ Խորհրդային Հայաստանը, որն էլ իր հերթին հող նախապատրաստեց Երրորդ՝ անկախ հանրապետության ձևավորման համար:

Այս է շուրջ հարյուրամյա հեռավորությունից 1918 թ. մայիսին անկախ պետականության վերականգնման պատմական խորհուրդը:

ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ПРОВОЗГЛАШЕНИЯ И СТАНОВЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ 1918–1920 ГГ.

МЕЛКОНЯН А.

Резюме

Хотя и по истории Республики Армения 1918–1920 гг. издан огромный массив литературы научно-политического характера, но на сегодняшний день есть множество вопросов, изучение которых имеет не только сугубо научное, но и познавательное, политическое и практическое значение.

Поскольку турецко-азербайджанская историография изобилует бесчисленными фактами фальсификаций по данной проблеме, то по сей день весьма актуальным остается изучение ряда вопросов, к каковым относятся: исторические и идеолого-политические предпосылки создания республики, демократические процессы, имевшие место в новосозданной республике, политическая линия правительства республики, уроки Первой республики, вопрос преемственности государственности на примере трех республик.

Первая республика просуществовала недолго, но на ее основе большевики создали новую республику – Советскую Армению, которая в свою очередь подготовила почву для формирования Третьей – независимой республики.

В этом и заключается, спустя почти столетие, историческое значение восстановления независимой государственности в мае 1918 года.

THE MAIN STAGES OF THE FORMATION OF THE KURDISH NATIONALISM IN IRAQ AND IRAN AFTER THE SECOND WORLD WAR

AGHASARYAN V.
v.aghasar@gmail.com

Today the Kurdish question is considered as one of the most complex geopolitical problems of the Middle East. Kurds live in Iraq, Turkey, Syria and Iran. Their number reaches 30 million. Considering the important role of the Kurdish factor in the internal political processes of the abovementioned countries, as well as the overall geopolitical situation in the world, it should be noted that it plays a fundamental role in the resolution of the Syrian crisis.

In this article we have tried to explore the main stages of the formation of the Kurdish nationalism in Iraq and Iran after the Second World War, as well as the geopolitical factors that had influenced its formation and development

In the 1930s, in comparison with Turkey, the conditions in Syria and Iraqi Kurdistan were favorable for strengthening the national Kurdish movement. Since the Kurdish ethnic area was divided by 4 state borders, the Kurdish national movement had a local character that promoted the Kurdish political nationalism.

The emergence of the Kurdish intellectuals had played a fundamental role in the development of Kurdish nationalism. The latter blatantly declared their Kurdish identity.

The Kurdish tribes in Iraq, which had been subjected to arabization in the period of the British mandate, gradually began to experience the impact of new unifying factors that had weakened the Kurd's tribal attachments and strengthened their national identity. The situation was difficult in Iranian Kurdistan. In 1941, after the fall of the Shah's regime, power passed to tribal leaders, who relied on the armed detachments of their fellow tribesmen. Reza Shah conducted discriminatory policy towards Kurds. He prohibited them to wear national costumes, limited Kurdish books, banned them to live in cities. Kurdish tribal leaders were arrested. The situation changed after the allied troops had been deployed.

Reza Shah's policy became a basis for the oppositional mood of the most influential Iranian Kurdish tribes, who got weapons through smuggling or from their hiding places.[1]

The Formation of the Republic of Mahabad.

In 1941, as a result of the Operation Countenance, Iran was occupied by the Soviet and British armed forces. The USSR was controlling the northern part of Iran (Eastern Kurdistan and Southern Azerbaijan, Caspian ports and Iranian-Turkish border), and the southern territories of Iran (oilfields and southern ports) were under England's control.

The Soviet Union was extremely interested in strengthening the border with Turkey, as well as in amplification of its influence in Southern Azerbaijan. As a result of these processes, two states were formed in the north of Iran: the Democratic Republic of Azerbaijan and the Republic of Mahabad.[2]

Kurdish autonomy was proclaimed on 24th of January, in 1942 in Iranian Kurdistan, in the region of Mahabad, which was recognized as a neutral territory by the agreement between the USSR and Great Britain. The organization "Komala" had played a huge role in this process, as well as the fact that the Soviet Union was interested in the proliferation of its influence in the south of Iran. The USSR was extremely interested in separating the region from Iran and joining the latter to Soviet Azerbaijan.

The ruler of Mahabad Kazi Mohammed was invited to Baku in 1945 and received a proposal from Moscow to annex the Republic of Mahabad to Soviet Azerbaijan on the rule of autonomy, however this proposal was rejected, and it was decided to use only Moscow's assistance in organizing a large Kurdish party in Iranian Kurdistan.[3]

In October 1945, Kazi Mohammed was elected as the head of the Democratic Party of Kurdistan.

The Iranian Kurds were inspired by the proclamation of the Democratic Republic of Azerbaijan and, seizing the moment, had proclaimed the independence of the Mahabad Republic. Immediately after independence, the

---

[1] **Вертяев К.В., Иванов С.М.** Курдский национализм, М., 2015, с. 175.
[2] https://ria.ru/spravka/20160825/1475040623.html
[3] **Вертяев К.В., Иванов С.М.,** op. cit., p. 184.

Kurds went over to organizing of the defense of the republic, as they understood that Tehran would no longer tolerate 2 newly-arising states on its territory.

Considering the fact, that the Kurdish tribal elite was in close ties with Pahlavi, it was decided to form armed forces that would consist of Kurds from the tribe Barzan and be led by Mahmoud Barzani.

Three detachments with up to 1500 people were formed, and Barzani received a title of General and led the military formations. Already in April, 1946, under Sekkez, the general managed to repel Iranian troops, which at that time did not have serious resources.

After that battle, the Kurds adopted the constitution of the Mahabad Republic, according to which, the Kurdish language was proclaimed the official language. Already in the shortest time possible educational centers, hospitals, scientific and educational centers were opened. The Mahabad government had begun to publish newspapers and magazines in Kurdish, as well as it formed post offices and laid communication lines.[4]

Given the fact that the Democratic Republic of Azerbaijan included territories with a Kurdish population that didn't seek to recognize the power of the DRA, the organization of united defense was ineffective.

Soon the threat of Shah's Iran nevertheless accompanied the unification of the detachments of Tabriz and Mahabad under the leadership of Mahmoud Barzani, even though any political union between DRA and KAR had not been reached.

After Iran's request to the UN Security Council to hold bilateral negotiations, the USSR insisted on the extension of its troops in Iran for an indefinite period, as well as on managing the oil resources of Caspian Iran.[5]

Only after Truman's statement on sending troops to Iran on March 21, 1946, the USSR decided not to aggravate the situation and declared that it would withdraw its troops within 45 days.

After two weeks the Soviet troops including 60 thousand people were withdrawn from Iran, enabling the Iranian army to resolve its issues with Tabriz and Mahabad.

---

[4] **Jwaideh W.,** p. 253.

[5] https://holicin.livejournal.com/8681438.html

In August 1946, during a meeting in Tehran with the Prime Minister of Iran Qavam al-Saltane, Kazi Mohammed was trying to negotiate to provide Kurds with autonomy within Iran. But his suggestion was rejected.

In December, 1946 the Iranians entered Tabriz and launched an attack on Mahabad. In view of the fact, that Kurds were left alone with government forces, disagreements over further policy had arisen between Barzani and Kazi Mohammed. The latter didn't want to be disposed to the mountains, because he didn't want to endanger the Kurdish population. So he was executed with other leaders of the movement, and Barzani had retired to the mountains with his detachment numbering 500 people. The Republic of Mahabad suffered a crashing defeat.

Kurdish people did not manage to eliminate the tribal disunity and the close ties of their leaders with Shah's regime. But it should be noted that the Republic of Mahabad played a key role in Kurds' identity and gave a new impetus to their movement.

During the Iranian revolution (1978-1979), the Iranian Kurds tried to raise the question of the formation of Kurdish autonomy within Iran and consolidation of their rights in the Constitution of the Islamic Republic of Iran, but they didn't manage to reach an agreement with the leadership of Iran.

Mustafa Barzani's National Liberation Movement in Iraq

In the postwar years, Sulaimania became a Communist hotbed for the whole Iraq, meanwhile being a stronghold of Kurdish nationalism. The urban population grew, and the working class had gradually began to form. Most peasants found themselves in difficult situation, as land owners increased the pressure on them, trying to boost production of agricultural products. As a result of these processes, the slogan "Land to Peasants" became very popular.[6]

The pro-communist newspaper "Azadi" became a stronghold of the young Kurdish population in Iraq, that called for the creation of common political alliance between Kurds and Arabs.

In 1952, Bahaheddin Nuri, a Kurd by nationality, became the secretary general of the Iraqi Communist Party, and already in 1953, the latter and the Democratic Party of Kurdistan, on a common roll, took part in Iraqi parliamentary elections.

[6] **Вертяев К.В., Иванов С.М.,** op. cit., p. 188.

In 1956, at the Congress of ICP, it was decided to include the acts, enshrining the rights of Kurds in party's program.

Kurds, who had lived in Egypt since the time of the Ottoman Empire, were contributing to the development and improvement of relations with Naser's government. Already in 1957, Cairo radio began broadcasting in the Kurdish language.[7]

The Kurds had supported the military, who staged a coup in the country and overthrew King Faisal II, who was supporting the course of rapprochement with the West. A republican system was established in Iraq, and Abd-al Karim Qasim became the leader.

According to the new Constitution, adopted after 12 days since King's overthrow, the rights of Kurds and Arabs should have been guaranteed by the Constitution within the borders of the united Iraq.[8]It was planned to establish Kurdish educational centers and schools, as well as to legalize DPA.

In 1958 Barzani with his associates returned from the USSR and received Iraqi citizenship. He received weapons and strengthened his position in Iranian Kurdistan, which Kurdish tribes Jaff and Pishdar didn't like. They helped Iraqi government to expel Barzani in 1945.

However, this time Mahmoud Barzani succeeded in defeating Kurdish tribes Pishdar and Bradost, that had rebelled against him. He killed their leader and destroyed villages in the north of Iraqi Kurdistan. After that, Barzani's associates attacked other tribes, such as Harki and Surchi.

Abd-al Karim Qasim wasn't satisfied with the fact, that Barzani was trying to expand his power throughout the whole Iraqi Kurdistan. So, he launched a cooperation with the hostile tribes of Barzani.

An even greater aggravation in relations between Barzani and Karim was caused by the celebration of 15 years of the Revolution.[9] It aroused anti-Kurdish moods among the Arab population, that considered such events secessionist.

Barzani's visit to the USSR had played a key role in further relations. There the question about the mediation of the Soviet Union in the relations between Barzani and Iraqi government was raised.

---

[7] **Gstrein H.,** Avukatsizhalkkurtler, Ist., 1977, p. 21.

[8] История Курдистана, М., 1999, с. 341.

[9] Хабат, 13.08. 1960.

At the end of 1960, Iraqi government began a very strict policy towards Barzani, fearing a split in the country. Qasim supported Barzani's hostile tribes trying to split the Kurds.

The branches of the Democratic Party of Kurdistan in Kirkuk and Mosul began to close, the Kurds were dislocated to the south of Iraq, and the most active representatives were arrested.

On July 30, 1960 a memorandum was issued "About the seriousness of the situation in Kurdistan", which stated Barzani's requirements to determine the status of Iraqi Kurdistan and to open educational institutions, where the teaching was to be in the Kurdish language. [10]

Qasim didn't accept the regulations of this memorandum. He had decided to strengthen the military forces in Iraqi Kurdistan. Soon, an overwhelming uprising began.

On September 7, 1961 an armed conflict started between the the Kurdish detachments and the Iraqi army, which began to bomb territories, where the Barzan tribe lived.

Qasim believed that Great Britain and the United States were the sponsors of Kurdish separatism. He had mentioned about it at the conference on April 1961.[11] The Democratic Party of Kurdistan, in turn, was appealing to organizations, such as the Red Cross, the Committee on human rights, etc. declaring that the Kurds didn't want to fight against Arabs. They only wanted to end the pressure of Qasim's regime, who didn't recognize the rights of the Kurdish people.[12]

Despite the fact that the Iraqi government had been using aviation and controlling big Kurdish cities, Barzani succeeded in resisting governmental forces and keeping the balance of power due to good organization and mobility of his small detachments.

There were fewer and fewer people in Iraq, who believed Qasim, and the situation was becoming more difficult, as the Kurds weren't going to give up.

[10] **Вертяев К.В., Иванов С.М.,** op. cit., p. 190.

[11] **Жигалина О.И.** Мустафа Барзани: политический портрет, М., 2013, с. 145.

[12] История Курдистана, op. cit., p. 354.

On February 8, 1963 Qasim's regime fell. Oppositional nationalist forces that came to power had reached an agreement with the Kurds before the coup, promising them autonomy in return for their support.[13]

However, the Baathists, who came to power, began to carry out stricter policy. Repressions of the KDP members began.

A month after the revolution, the government published a plan for a solution to the Kurdish issue. The plan was aimed at giving a limited autonomy to Kurds in Suleymaniyah, meanwhile depriving them of oil-rich Kirkuk.

In March 1963, the Kurds dissatisfied with those decisions, convened a Congress in Sanjaq Koy, in which the memorandum about the formation of Kurds autonomy was adopted.

This step had a very negative impact on the relations between the rebels and the new government, as a result of which an award of 14 million franks was promised for Barzani's head.[14]

Military actions broke out between the rebels and the Iraqi government, which also attracted Turkey, Iran and Syria to suppress the Kurdish insurgency.

It should be noted that because of the difficult political situation in the country, a rift had developed between Talabani and Barzani Kurdish clans. The members of Barzani were supporters of complete independence of Kurdistan, which wasn't acceptable for Talabani supporters. In June 1964, at the 6th Congress of the DPA, Talabani and its supporters were expelled from the party.

As early as October 1964, the Kurdish Revolutionary Council was created, the main purpose of which was to establish broad autonomy within Iraq.[15]

The Revolutionary council had its own military forces called "Peshmerga"[16].

Already in early 1965, government troops, numbering 100,000 people, began a military operation against the forces of Barzani, while Talabani came to the aid to the latter. Iraqi forces failed to achieve any major victories.

The complex political situation in Iraq led to several changes of power; Tahir Yahya, Abduzzaz Aref, Abdul Rahman Bezzaz. All of them were convinced that

---

[13] **Талабани Дж.** Курдистан и курдское национальное движение(на арабском яз.), Багдад, 1970, с. 26.

[14] **Вертяев К.В., Иванов С.М.,** op. cit., p. 194.

[15] **Эммин Сами Эль-Гамрави.** История курдов северного Ирака, Каир, 1967, с. 19.

[16] Пешмерга–военные формирования Иракского Курдистана, дословный перевод: «идущие на смерть».

Barzani was a tool of other states, that wanted to take control over rich oil sources located in Northern Iraq.

In 1966, President of Iraq, Abdul Salam Alif was killed in an air crash, and his brother Abdul Rahman replaced him. Despite the fact that he was a supporter of negotiations with the Kurds, Iraq's army Chief of staff wanted to solve the Kurdish issue by military means. Hostilities resumed on May 1, 1966, despite the fact that the Kurds had proclaimed a truce. After 15 days, the bloodiest battle of all five years took place near the Revanduz, which resulted in a strategic victory of Barzani.[17]

This war caused the destruction of several hundred villages and the economic decline of a whole region. Aware that military actions were causing tremendous damage to the country and population, both sides made a decision to conclude reconciliation agreement, which was adopted on June 29, 1966. According to the above-mentioned settlement, the sides were obliged to accept the conditions of Iraqi Prime minister's declaration.

However, Barzani demanded greater autonomy and declared that Kurds are ready to fight for several decades to eliminate Iraqi dictatorship and achieve full independence of Kurdistan.[18]

At the end of very difficult negotiations between Barzani and Bazzaz, a program of country's decentralization was adopted. The above-mentioned program consisted of 12 points, three of which referred to the formation of the separate autonomy in Mosul, the release of Kurdish political prisoners and the recognition of the Kurdistan Democratic Party's activities as legitimate. The Kurdish language was getting official in areas inhabited by the Kurds.[19]

However, these agreements weren't approved by the security forces of the BAATH party, and as early as on June 30, 1966 a new change of power took place in Baghdad. Naji Talib, a former general, coming to power, didn't consider it necessary to adhere to agreements adopted by the former government. But he was ready to launch new negotiations.

The ongoing struggle of the Kurds had a temporary success, and on March 11, 1971 the Kurdish autonomy region was created in the north of Iran. Kurdish

---

[17] http://www.kurdistan.com.ua/history-of-kurds

[18] **Жигалина О.И.,** op. cit., p. 177.

[19] **Вертяев К.В., Иванов С.М.,** op. cit., p. 198.

leaders promised to stop hostilities and not to interfere with the government in the territory of Kurdistan. Within 4 years, the Iraqi government was obliged to create all conditions, ensuring that the Kurdish language be recognized as regional, and the Kurds would be able to carry out the state and military service, independently controlling the situation in the autonomous region.[20]

However, contrary to the given agreements, Iraqi authorities didn't rush to provide the Kurds with the promised rights. Moreover, the policy of forcible location of the Kurds was resumed.

In 1974, however, the autonomy was created in Dokhuk, Suleymaniyah and Erbil. But in 1975 Iraq signed an agreement with Iran not to provide assistance to the Iraqi Kurds. The Kurds were no longer able to keep the balance. As a result of military operations thousands of soldiers and peaceful Kurds were killed, and the rest were forced to move to the mountainous regions of Turkey, Iran and Iraq.

Mustafa Barzani had immigrated to the USA.

The Kurds have failed to achieve their goals in Iraq. The reason was the reluctance of other states to encourage the creation of Kurdish autonomies in Iraq, Turkey and Iran. After the collapse of the Soviet Union, the Unites States began to actively intervene in the domestic affairs of Iraq in order to overthrow Saddam Hussein's regime. At the end of the 20th century, Iraqi Kurdistan became a semi-independent region, where the Kurds were able to establish their own legislative and executive authorities.

Ultimately, most initiatives to create Kurdish autonomy in 1920s–1970s weren't successful. The USA, the USSR and other countries weren't interested in the formation of Kurdish autonomy in Iran, Turkey and Transcaucasia. During the cold war, the United States and the Soviet Union had been building their foreign policy in the Middle East primarily taking into account their interests in relations with Turkey, Iran, Iraq and Syria. The Kurdish question had often been used to put pressure on those countries. The Kurds, in turn, were organizing protests and uprisings while facing discriminatory harassment. It's important to note that the Kurdish movements in Syria, Iraq, Iran and Turkey had differences and their own specific features.

---

[20] Ibid, p. 199.

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ԻՐԱՆՈՒՄ

ԱՂԱՍԱՐՅԱՆ Վ.

Ամփոփում

Քրդական հարցը այսօր Մերձավոր Արևելքի ամենաբարդ աշխարհաքաղաքական խնդիրներից մեկն է: Քրդերը ապրում են Իրաքում, Թուրքիայում, Սիրիայում և Իրանում, նրանց ընդհանուր թիվը կազմում է մոտ 30 միլիոն մարդ: Քրդական գործոնը կարևորագույն դեր ունի վերը նշված երկրների ներքին քաղաքական գործընթացներում, ուստի արդիական գիտական արժեք է ստանում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Իրաքում և Իրանում քրդական ազգայնականության ձևավորման և զարգացման հիմնական փուլերի և դրանց վրա ազդած աշխարհաքաղաքական գործոնների ուսումնասիրությունը:

ОСНОВНЫЕ ЭТАПЫ ФОРМИРОВАНИЯ КУРДСКОГО НАЦИОНАЛИЗМА В ИРАКЕ И ИРАНЕ ПОСЛЕ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

АГАСАРЯН В.

Резюме

Курдский вопрос сегодня является одной из самых сложных геополитических проблем Ближнего Востока. Курды живут в Ираке, Турции, Сирии и Иране, их общая численность составляет около 30 млн. человек. Учитывая важную роль курдского фактора во внутриполитических процессах вышеперечисленных стран, а также общую геополитическую ситуацию в мире, следует отметить, что курдский фактор является фундаментальным в урегулировании сирийского кризиса. В данной статье мы попытались рассмотреть основные этапы формирования курдского национализма в Ираке и Иране после Второй мировой войны, а также геополитические факторы, которые повлияли на его становление и развитие.

ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ՀԻՆ ԵՎ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ (II–IX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

ՍՎԱԶՅԱՆ Հ.

Աղվանքի հոգևոր առաջնորդները, ինչպես քրիստոնյա արևելքի բոլոր հովվապետերը, ունեին իրենց նստավայրերը, որտեղից կազմակերպում և ուղղորդում էին իրենց իրավասության տակ գտնվող կրոնական հաստատությունների գործունեությունը: Հիմնադրվելով նոր դավանական ուղղության հետ գրեթե միաժամանակ՝ դրանք տարբեր ժամանակներում տարբեր նշանակության հանձնառույթներ էին իրականացնում և ամեն կերպ նպաստում տարածաշրջանում քրիստոնեության տարածմանն ու ամրապնդմանն ուղղված աշխատանքներին: Քրիստոնեության տարածման վաղ շրջանում այդ նստավայրերը հաստատվում էին ըստ քարոզչավայրերի և ժամանակավոր կացարանների բնույթ ունեին, քանի որ գոյատևում էին մինչև քարոզչի նոր վայր տեղափոխվելը: Աղբյուրները որևէ կոնկրետ ժամանակավոր կացարան չեն մատնանշում, սակայն, հետևելով այդ շրջանում Հայոց Արևելից կողմերում, Բուն Աղվանքում և Չողա երկրում քարոզչական աշխատանքներ տարած առաջին լուսավորիչներ և Թադեոս առաքյալի աշակերտներ Սբ. Եղիշայի՝[1] Դադիում (Դադի, Դադո) ու Խաղ եպիսկոպոսների[2] ընթացուղուն, պետք է կարծել, որ նման կացարաններ հաստատվել են Չողում, որը Սբ. Եղիշայի քարոզչական գործունեության մեկնակետն էր, Բուն Աղվանքում. (հավանաբար Կապաղակում/, Ուտիքում, ավելի ստույգ՝ նրա Սուհառն քաղաքում, Գիս ավանում, Զերգունի դաշտում և Արցախում՝ Խորաձոր կոչվող վայրում, որտեղ հետագայում՝ Դադիում քարոզչի պատվին վանք է կառուցվում, որը վերանվանվում է «Դադիի վանք»: «Խորաձոր,- գրում է Մովսես Կաղանկատվացին,- որ

---

[1] **Սվազյան Հ.,** Սբ. Եղիշան Հայոց Արևելից կողմանց, Չողա երկրի և Աղվանից աշխարհի լուսավորիչ («Լրաբեր հասարակական գիտությունների», 2000, № 2, էջ 55–65):

[2] Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 536 (այսուհետև՝ Գիրք Թղթոց), տես նաև՝ Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, յօրինեալ եւ հաւաքեալ ի Հ. Ղեւոնդեայ վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1901, էջ 47, նաև՝ էջ 47, ծանոթ. 2 (այսուհետև՝ Հայապատում):

կոչի Դադոյի վանք»[3]: Այս կացարանները, որտեղ գործում էին վերոհիշյալ անձինք, նմանապես ծառայել են հիշատակված սրբերի հաջորդներին, որոնք իրենց գործունեությամբ ապահովում էին քրիստոնեության ընթացքի շարունակականությունը:

IV դարի վերջերին Գրիգոր Լուսավորչի հանդես գալով, սկսվում է քրիստոնեության Աղվանք և կից երկրներ ներթափանցման նոր փուլ, որի ժամանակ նորածագ ուսմունքը նշված տարածքներ է մուտք գործում Մեծ Հայքից ուղարկված քարոզիչների միջոցով[4]: Եկեղեցական ավանդությունը պահպանել է նրանցից շատերի անունները, բայց առանձնակի հիշողությամբ պարուրել Գրիգոր Ա Պահլավունու թոռ Մանուկ Գրիգորիսի՝ որպես ժամանակաշրջանի խոշոր կրոնական գործչի անունը: Աղբյուրների տեղեկությամբ, վերջինիս քարոզներով են լուսավորվել Հայոց Փայտակարան նահանգն ու Բուն Աղվանքը, ուր նա գործուղվել էր իր Լուսավորիչ պապի կողմից՝ այդ երկրների ներկայացուցիչների խնդրանքով[5]: Պատանի քարոզիչը նույն կարգի աշխատանքներ է տարել նաև Արցախում և նոր վարդապետության հիմքերն ամրապնդել նաև այս հայկական նահանգում[6]: Այնուհետև, ըստ նույն աղբյուրների, նա իր առաքելությունը շարունակում է Մասքթաց աշխարհում, որտեղ և ընդունում է նահատակության պսակը[7]:

Մանուկ Գրիգորիսի ողջ գործունեության բաղդատումն ըստ աշխարհագրական վայրերի, բերում է այն աներկբա հետևության, որ նա գործել է հիմնականում Արցախում և հատկապես նրա Մյուս Հաբանդ գավառում՝ իր Ամա-

---

[3] **Մովսես Կաղանկատվացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 340 (այսուհետև՝ Մովսես Կաղանկատվացի):

[4] Տես՝ **Ավագյան Հ.,** Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը («Պատմաբանասիրական հանդես», 2002, № 2, էջ 131–141):

[5] **Մովսես Խորենացի,** Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Ե., 1991, էջ 259 (այսուհետև՝ Մովսես Խորենացի), **Մովսես Կաղանկատվացի,** էջ 14–15, **Մխիթար Գոշ** (Մովսես Կաղանկատվացի, Յաւելուած Բ), էջ 350, Հայապատում, էջ 384:

[6] Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Բնագիրը Ք. Պատկանեանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Ե., 1987, էջ 26 (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ): Տես նաև՝ Մովսես Կաղանկատվացի, էջ 39:

[7] **Փավստոս Բուզանդ,** էջ 26: Նշված կողմերում Մանուկ Գրիգորիսի գործունեության մասին տես՝ **Ավագյան Հ.,** Աղվանից կաթողիկոս Մանուկ Գրիգորիս («Էջմիածին», 2003, № Զ, էջ 55–65), նաև՝ **Մովսես Կաղանկատվացի,** էջ 38:

րաս կենտրոնով: Գալով Արցախ և հաստատվելով Ամարասում, որը հայտնի էր դեռևս Գրիգոր Լուսավորչի կառուցած եկեղեցիով, կրտսեր Գրիգորիսը ավարտին է հասցնում կիսակառույց եկեղեցու շինարարությունը[8], կառուցում նորերը, քարոզներ կարդում և աշակերտներ ուսուցանում: «Իբրև եկաց սա (Մանուկ Գրիգորիսը – Հ.Ս.) ի յիւրում պաշտամանս,- գրում է Փավստոս Բուզանդը՝ ընդհանրացնելով նրա գործունեությունը ողջ տարածաշրջանում, - մինչդեռ մանուկն եւս էր, շինեաց, նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնցիկ եւ ձգեցաւ ի գաւառակողմանցն Ատրպատականի: Քարոզ ճշմարտութեան հաւատոցն Քրիստոսի լինէր նա, եւ առաջի իսկ ամենեցուն էր սքանչելի եւ զարմանալի. խստագոյն ու դժուարագոյն անհամարք ծանրաբեռն վարացն կրթութիւնք խստամբերութեանն, պահօք եւ սրբութեամբ, տքնական հսկմամբ անձանձրոյթ աղօթիցն ջերմութեան առ Տէր Աստուած կանխելոյ վասն ամենայն մարդոյ: Ջաւետարանական ընթացսն եւ զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ շնորհօքն աստուծոյ առանց պակասութեան տանէր. առաւել եւս փութայր, գուն եդեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն, զցայգ եւ զցերեկ պահօք եւ աղօթիւք եւ ուժգին խնդրուածովք եւ բարձրակալ կատարման հաւատովքն՝ մերձաւորաց եւ հեռաւորաց զհոգեւոր եռանդն աձէր. իբրեւ զպատերազմասէր նահատակ միշտ զանձն ի կրթութիւն եւ ի պատրաստութեան ունէր ամենայն փորձութեանց եւ վշտաց, առ ի տալ պատասխանի ամենայն համարձակութեամբ, վասն ճշմարտութեան հաւատոցն մարտնչել որ վասն Քրիստոսի»[9]:

Մյուս Հաբանդում կրտսեր Գրիգորիսի ծավալած աստվածահաճո գործերի շուրջ դրվատանքով է խոսում նաև Մովսես Կաղանկատվացին. «եկեալ ի Հաբանդ գաւառ, ուսուցանէր եւ խրատէր պահել զպատուիրանս Որդւոյն Աստուծոյ. անդ արկանէր հիմն եկեղեցւոյն ի գիւղաքաղաքին Ամարասայ. եւ կացուցանէր գործօնս եւ հրամանատարս՝ շինել եկեղեցի»[10]: Իր սրբամատույց գործունեությամբ Լուսավորչաց տոհմի այս շառավիղը շուտով մեծ հեղինակություն է ձեռք բերում հավատացյալների շրջանում և վայելում նրանց առանձնահատուկ սերն ու նվիրվածությունը: Դրա մասին է վկայում այն փաստը, որ Մասքթաց աշխարհում (Վատնյան դաշտում) նրա նահատակվելուց հետո աշակերտները, վերցնելով իրենց ուսուցչի խոշտանգված դին, բերում

---

[8] **Ջալալեանց Ս.,** Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842, էջ 196:

[9] **Փավստոս Բուզանդ,** էջ 24:

[10] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 35:

ամփոփում են Ամարասում: «Եւ ապա,- գրում է Փավստոս Բուզանդը, - բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, և բերին ի գաւառն իւրեանց ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց ի Հաբանդ ի գեօղն անուանեալ կոչի Ամարազ, եւ եդին զնա առ եկեղեցական զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի»[11]: Սույն իրադարձության մասին պատմում են նաև Մովսես Խորենացին և Մովսես Կաղանկատվացին[12]: Որ Մանուկ Գրիգորիսն ամփոփվել է Ամարասում, հաստատում է նաև Ստ. Օրբելյանը, գրելով, որ այնտեղ «կայ գերեզման նորա (Մանուկ Գրիգորիսի – Հ.Ս.)»[13]:

Մանուկ Գրիգորիսի ամփոփումն Ամարասի եկեղեցու բակում պատահական չէր: Այսպես ժողովուրդն իր երախտիքի տուրքն է մատուցել դարաշրջանի իրենց հոգևոր առաջնորդին՝ նրա ծավալած երկարամյա և քրիստոնեական անձնվեր գործունեության համար: Տարածաշրջանի հոգևոր կյանքում ունեցած իր այս մեծ դերակատարության շնորհիվ է նաև, որ նրա գերեզմանը շրջակա բնակչության կողմից վերածվել է սրբավայրի, ուր ամեն տարի հավաքվելով տոնել են նրա հիշատակը. «Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ եւ աշխարհաց գավառացն այնոցիկ, զոր տօնին զյիշատակ քաջութեան ցնծան»[14]:

Ամարասի ընտրությունն իբրև Մանուկ Գրիգորիսի վերջին հանգրվանատեղի ուղղակի բերում է այն հետևության, որ Ամարասը նախատակ սրբի՝ տարածաշրջանում գործելու ժամանակ եղել է նրա նստավայրը: Իր ուսումնասիրությունների արդյունքում նման եզրակացության է հանգել նաև Հայոց, Վրաց և Իմերեթիայի թեմակալ առաջնորդ Ս. վ. Ջալալյանը, որը գրում է, որ Ամարասը վաղ ժամանակներում «էր կաթողիկոսական աթոռ աշխարհին Աղուանից»[15]: Ասվածն, ի դեպ, ունի նաև իր մատենագրական հիմքը՝ վկայված դեռևս XIII դարի պատմիչ Ստ. Օրբելյանի կողմից: Իր աշխատության

[11] **Փավստոս Բուզանդ,** էջ 26:

[12] **Մովսես Խորենացի,** էջ 260, **Մովսես Կաղանկատվացի,** էջ 39:

[13] Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան, արքեպիսկոպոս Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 470 (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան): 1969 թ. Ամարասում անցկացված պեղումների ժամանակ բացվել է հայերեն գրությամբ մի դամբարան («Սա է Սուրբ Գրիգորի իմաստուն այրի գերեզմանը»), որն ուսումնասիրողների կարծիքով պատկանում է հենց Մանուկ Գրիգորիսին (Տես՝ **Геюшев Р.Б.** Христианство в Кавказской Албании, Баку, 1984, էջ 25:

[14] **Փավստոս Բուզանդ,** էջ 26:

[15] **Ջալալեանց Ս.,** Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Ա, էջ 196:

մեջ Ամարասը կոչելով «մեծ աթոռն Աղվանից», նա առանձին շեշտադրությամբ գրում է, որ այն «ի հինուն (հնուց – Հ.Ս.) լեալ էր աթոռ կաթողիկոսաց նոցին (աղվանացիների – Հ.Ս.)»[16]: Ուրեմն, անտարակույս է, որ IV դարում Աղվանից հայրապետների նստավայրը եղել է Ամարասը և կարծիքը, թե «Աղվանից եկեղեցու կենտրոնը IV դարում Կապաղակ մայրաքաղաքն է»[17], չի համապատասխանում պատմական իրականությանը:

Հիմնադրված լինելով IV դարում՝ Ամարասի այս հոգևոր կենտրոնն իր խնդիրներով ու գործելաոճով էականորեն տարբերվում էր ըստ քարոզչական վայրերի բարձրացած վերոհիշյալ ժամանակավոր կացարաններից: Մանուկ Գրիգորիսի առաջնորդությամբ այս կենտրոնի ծավալած եռանդուն գործունեության շնորհիվ առաքելական հավատը տարածաշրջանում կարճ ժամանակում լայն ճանաչում է ստանում, տարածվում ու խորանում: Մեծ էր Ամարասի եպիսկոպոսության հռչակն այստեղ կառուցված իր Աստծո տաճարով, որը խոր ակնածանք էր ներշնչում և VII դարում անգամ Աղվանից հոգևորականության համար մնում էր որպես «Սուրբ կոչարան» և «Լուսատու յԱմարասայ»[18]:

Ամարասի առաջնորդանիստը գոյատևում է մինչև իր հիմնադրի՝ Մանուկ Գրիգորիսի վախճանը 363 թ.[19]: Վերջինիս նահատակությունից հետո քաղաքական մի շարք հանգամանքների ճնշման տակ եկեղեցու հայրերը Աղվանից հայրապետական աթոռը Ամարասից տեղափոխում են Մասքթաց երկիր և հաստատում նրա Չող (Չողա, Չողայ, Չորայ, Ճորայ) մայրաքաղաքում: Այն մասին, որ խնդրո առարկա աթոռն Ամարասից տեղափոխվել է Չող և Մանուկ Գրիգորիսին հաջորդած հայրապետներն այսուհետ հովվել են այնտեղից, վկայում է Մխիթար Գոշը: Այսպես, իր կազմած ցուցակում Մանուկ Գրիգորիսին նշելուց հետո նա անցնում է նրան հաջորդող հայրապետների թվարկմանը՝ նախապես շեշտելով, որ նրանք հովվել են Չողում: «Եւ այսոքիկ են, որ ի Չող հայրապետք նստան», - գրում է նա և նշում նրանց անունները՝ Զաքարիա, Դավիթ, Յոհան, Երեմիա[20], հասնելով մինչև Տեր Աբաս, ով բա-

---

[16] **Ստեփանոս Օրբելյան,** էջ 470:

[17] **Мамедова Ф.** Политическая история и историческая география Кавказской Албании, Баку, 1986, с. 235.

[18] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 209:

[19] Հայ ժողովրդի պատմություն, հատ II, Ե., 1984, էջ 179:

[20] **Մխիթար Գոշ,** Մովսես Կաղանկատվացի, Յաւելուած Բ, էջ 350, Հայապատում, էջ 284:

ցում է Աղվանքի կաթողիկոսների շարքը և 552 թ. նստավայրը Չողից տեղափոխում Պարտավ[21] (Պերոզապատ, Պերոզ Կավատ, Պերոժ Կավատ), ինչն ինքնին խոսում է Չողի աթոռանիստ լինելու օգտին: Վերջինիս ստանձնած այս նոր պարտավորության մասին նշում են նաև այլ ուսումնասիրողներ[22]: Երկրի հոգևոր կենտրոնը Չող տեղափոխելով՝ Աղվանքի եկեղեցական հայրերը, աշխարհիկ տերերի հետ մեկտեղ, կարծում ենք, նպատակ էին հետապնդում ուժեղացնել քարոզչական աշխատանքները տեղում, շարունակել Մանուկ Գրիգորիսի կիսատ մնացած գործը, բարբարոս ցեղերին հակել դեպի քրիստոնեություն և այդ եղանակով կանխել նրանց ավերիչ արշավանքները դեպի Աղվանից աշխարհ և ավելի հեռու ընկած երկրներ: Բացի այդ, հավանական ենք համարում այն, որ հոգևոր կենտրոնի փոխադրումը հատկապես Չող այն հեռավոր ժամանակների արձագանքն էր, երբ այստեղ իր առաջին քարոզչական աշխատանքներն էր տանում և ժամանակավոր կացարանների հիմքերը դնում Սբ. Եղիշան:

Աղբյուրներում առկա տեղեկությունների վերլուծությունը հուշում է, որ հոգևոր կենտրոնի փոխադրումը կարող էր տեղի ունենալ Տեր Զաքարիա Ա-ի օրոք և նրա կողմից:

Հաստատվելով Չողում՝ Աղվանքի հայրապետները շարունակում են իրենց նպատակաուղղված գործունեությունը. կազմակերպում և ուղղորդում են երկրի հոգևոր կյանքի ընթացքը, նպաստում քրիստոնեության վերելքին, գործնականում մասնակցում ծավալվող կրոնական, քաղաքական ու տնտեսական անցուդարձին: Սակայն, ինչպես երևում է տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններից, նրանց լեցուն գործունեությունը Չողում երկար չի շարունակվում: Արդեն իսկ Տեր Զաքարիա Ա-ի հաջորդ Տեր Դավիթ Ա-ին փոխարինած Տեր Յոհանը /Հովհաննեսը/ անհայտ հանգամանքներում նշանակվում է Հոնաց աշխարհի եպիսկոպոս[23] և պետք է կարծել, որ սկսում է ինքնուրույն գործել, իսկ Երեմիան, նույն մատենագրական տվյալների համաձայն, իր պաշտոնավարման շրջանն անցկացնում է Աղվանից երկրի մայրա-

---

[21] Տես՝ ստորև:

[22] **Акопян А.А.** Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Е., 1987, с. 133.

[23] «Սուրբն Յովհան, որն հոնացն եղեւ եպիսկոպոս տէր հայրապետական շնորհիւ զորապէսն չգիտեմք» (**Մովսես Կաղանկատվացի,** էջ 342), նաև՝ **Կիրակոս Գանձակեցի,** Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 195 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի):

քաղաք Կապաղակում: Կորյունի մի հաղորդմամբ Աղվանից գրերի գյուտից հետո, դրանց մշակման և կատարելագործման նպատակով գալով Աղվանք[24], Մեսրոպ Մաշտոցը երկրի թագավոր Եսվաղենի ու եպիսկոպոսապետ Երեմիայի հետ հանդիպում է Կորյունի խոսքերով *«ի թագաւորական տեղիսն»*[25], այն է՝ մայրաքաղաքում, որն էր Կապաղակը (Cabalaca-ն): «Եւ ապա, - գրում է Մաշտոցի վարքագիր Կորյունը, - …հրաժարեալ (Մաշտոցը – Հ.Ս.) գնալ ի կողմանս Աղուանից: Եւ երթեալ իջանէր յաշխարհն եւ հասեալ թագաւորական տեղիսն տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, եւ զնոցին թագաւոր, որում Արսուաղ էր անուն, ամենայն զատօք հանդերձ»[26]: Վկայակոչված աղբյուրում թագավորի և ավագանու կողքին եպիսկոպոսապետ Երեմիայի անվան հիշատակությունն անմեկնելի պարզությամբ ցույց է տալիս, որ V դարի սկզբներին երկրի հայրապետը ևս նստում էր Կապաղակում և պետության առջև ծառացած խնդիրները լուծում այստեղ, և ոչ թե Չողում: Ուրեմն, ինչպես կարելի է եզրակացնել այս փաստից, Չողը լինելով առաջնորդանիստ կենտրոն, գործնականում չէր մասնակցում երկրի հոգևոր գործերին: Հետևաբար, սխալ չի լինի կարծել, որ առաջնորդանիստ կենտրոնի գոյությունը Չողում ուսումնասիրվող շրջանում դարձել էր անվանական և նրան վերապահված առաքելական պարտականությունները գործ-

---

[24] Հարցի շուրջ առկա խնդիրների քննությունը տես՝ **Սվազյան Հ.,** Մեսրոպ Մաշտոցը Աղվանից գրերի հեղինակ: **Բենիամին երեց,** Հայոց պատմության հարցեր, թիվ 6, Ե., 2005, էջ 76–92:

[25] Ելնելով Կորյունի այս արտահայտությունից՝ Հ. Աճառյանը, ապա և Բ. Ուլուբաբյանը գտնում են, որ հիշյալ ժամանակներում Աղվանքի մայրաքաղաքը Չողն էր, որտեղ նստում էին երկրի թագավորն ու եպիսկոպոսապետը (Տես՝ **Աճառյան Հ.,** Հայոց գրերը, Ե., 1968, էջ 219, **Ուլուբաբյան Բ.,** Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմությունից (V–VII դդ), Ե.,1981, էջ 96: Մ. Բարխուտարյանցն առհասարակ այն համարում է Աղվանքի առաջին մայրաքաղաքը (Տես՝ **Բարխուտարյանց Մ.,** Աղուանից երկիր և դրակից (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 105), սակայն մեծարգո հեղինակները իրավացի չեն: Կորյունի նշած «թագաւորական տեղիսն» Կապաղակն էր, որն արդեն մ.թ. V դարում Cabalaca լատինական հնչողությամբ հիշատակվում է որպես Աղվանքի մայրաքաղաք (Տես՝ Pliny, Natural History, VI, 11), իսկ ուսումնասիրություններն էլ ցույց են տվել, որ այն գլխավոր քաղաքի իր դերը պահպանել է մինչև V դարի կեսերը՝ մինչև թագավորական իշխանության վերացումն ու 461 թ. մարզպանության կազմավորումը (տես՝ **Սվազյան Հ.,** Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Ե., 2006, էջ 199–207:

[26] **Կորյուն,** Վարք Մաշտոցի, Ե., 2005, էջ 72 (այսուհետև՝ Կորյուն):

նականում իրականացվում էին եպիսկոպոսների գլխավորությամբ՝ Կապաղակում:

Այսպիսով, ինչպես պարզվում է վերոշարադրյալից, V դարի սկզբներից, որպես Աղվանից հայրապետների փաստացի նստավայր, հանդես է գալիս երկրի մայրաքաղաք Կապաղակը: Իրավացիորեն կարծելով, որ Կորյունի նշած «թագաւորական տեղիսն» երկրի մայրաքաղաք Կապաղակն է, Ա. Հակոբյանը նույնպես գտնում է, որ IV–V դարի սկզբներին Կապաղակն էր հանդիսանում Աղվանից եպիսկոպոսապետների նստավայրը[27]: Նրան համամիտ է նաև Մ. Բալայանը[28]:

461 թ. կազմավորվում է Աղվանից մարզպանությունը[29]: Նորաստեղծ վարչաքաղաքական միավորի մայրաքաղաք է հռչակվում Ուտիքի Ուտի Առանձնակ գավառի կենտրոն Պարտավ (Բարդա) քաղաքը, որտեղ կենտրոնացել էին աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների վարչական մարմինները: Պարսից արյաց արքա Վաղարշ Ա-ի (484–488) բարեհաճությամբ իշխանության գլուխ է անցնում տեղական ազնվականության ներկայացուցիչ, ծագումով Արշակունի[30] Վաչագան Գ Բարեպաշտը (485–510), որի օրոք մարզպանությունն ապրում է քաղաքական, տնտեսական ու մշակութային աշխույժ կյանքով: Նրա լծակիցը հոգևոր ոլորտում Երուսաղեմից եկած Շուփհաղիշո անվամբ եպիսկոպոսապետն էր, որը աղբյուրներում ներկայացված է «Պարտաւայ արքեպիսկոպոս»[31] կամ «աւագ եպիսկոպոսապետ»[32] տիտղոսներով և Աղվանից հայրապետների ցանկերում նշվում իբրև նրանցից մեկը[33]: Թեպետ վերջինս դրանցում հիշատակվում է Մանուկ Գրիգորիսից հետո՝ երկրորդ կամ երրորդ հորիզոնականներում, սակայն քննությամբ պարզվել է, որ նա 12-

---

[27] **Акопян А.А.,** նշվ. աշխ., էջ 133–134:

[28] **Բալայան Մ.,** Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2009, էջ 42:

[29] Հանգամանորեն տես՝ **Սվազյան Հ.,** Աղվանից աշխարհի պատմություն, էջ 199–207:

[30] **Սվազյան Հ.,** Աղվանից Վաչե Բ և Վաչագան Գ Բարեպաշտ արքաների դինաստիական պատկանելիության հարցի շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2009, թիվ 3, էջ 32–44:

[31] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 89, Կանոնագիրք Հայոց, Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Ե., 1971, էջ 91:

[32] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 85:

[33] Նույն տեղում, էջ 342, **Մխիթար Գոշ** (Մովսես Կաղանկատվացի), Յաւելուած Բ, էջ 350, Հայապատում, էջ 384, **Կիրակոս Գանձակեցի,** էջ 194, **Մխիթար Այրիվանեցի,** Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 19 (այսուհետև՝ Մխիթար Այրիվանեցի):

րդն էր և հաջորդել է Տեր Երեմիային[34]: Դատելով նրան տրվող «Պարտաւայ արքեպիսկոպոս» տիտղոսից, կարելի է անսխալ եզրակացնել, որ Շուփհաղիշոն, լինելով Աղվանից աշխարհի հոգևոր առաջնորդը, գլխավորել է նաև Պարտավի եպիսկոպոսությունը և, ուրեմն, նստել այստեղ: Արձանագրելով այս փաստը՝ վստահաբար գտնում ենք, որ Աղվանից մարզպանության կազմավորումից ու Պարտավը նրա մայրաքաղաք դառնալուց հետո, Աղվանից հայրապետաց նստավայրը Կապաղակից տեղափոխվել է Պարտավ և հանգրվանել նորահռչակ մայրաքաղաքում: Այդ պատճառով էլ 488 թ. Ուտիքի Աղվեն գավառում Վաչագան Գ Բարեպաշտի նախաձեռնությամբ գումարված Սահմանադրական ժողովի մասնակիցների թվում Շուփհաղիշոն հիշատակվում է Կապաղակի եպիսկոպոս Մանասեից առաջ և անմիջապես երկրորդը՝ Վաչագան Գ թագավորից հետո[35]: Եվ դա այն դեպքում, երբ Չողն առհասարակ ներկայացված չէր մեծ կարևորության այդ ժողովում[36], ինչն անհարիր էր առաջնորդանիստ համարվող կենտրոնի համար: Հետևաբար, տարակույս չկա, որ մարզպանության շրջանում Պարտավն էր դարձել քրիստոնյա Աղվանքի հոգևոր կենտրոնատեղին:

* * *

Համաձայն Աղվանից հայրապետաց գավազանագրքերի, Տեր Երեմիային, բայց իրականում Շուփհաղիշոյին[37], հաջորդում է Արցախ նահանգի Մեծիրանք (Մեծ Առանք) գավառի եպիսկոպոս Տեր Աբասը և աթոռակալում քառասունչորս ԽԴ[38] (տարբերակ՝ «չորեքտասան»[39]) տարի: Մովսես Կաղանկատվացու վկայությամբ, Աբասի նշանակումը տեղի է ունեցել հայոց թվականության առաջին տարում, այն է՝ փրկչական 552 թ., որը հայ պատմագիտության մեջ ընդունված է որպես հայկական օրացույցի առաջին տարի: «Յորժամ, - գրում է նա, - զսկիզբն հայ թուականին եդին… նստոցին (աղվանացիները – Հ.Ս.) հայրապետ զտէր Աբաս ի գաւառէն Մեծիրանց, որ կալեալ զաթոռն ամս ԽԴ»[40]: Ձեռնադրվելով հովվապետ, վերջինս իր պաշտոնավար-

[34] **Սվազյան Հ.,** Աղվանքի հոգևոր առաջնորդները նախակաթողիկոսական շրջանում, «Պատմա-բանասիրական հանդես», Ե., 2004, թիվ 3, 189–198:

[35] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 89–90, Կանոնագիրք Հայոց, Բ, էջ 91–92:

[36] Նույն տեղերում:

[37] **Սվազյան Հ.,** նույն տեղում, էջ 189–198:

[38] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 342–343:

[39] **Կիրակոս Գանձակեցի,** էջ 135:

[40] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 119:

ման հենց սկզբից ծավալուն աշխատանքներ է տանում երկրի հոգևոր կյանքն առավել բարձր հիմքերի վրա դնելու, բարեփոխումներ անցկացնելու և քրիստոնյա աշխարհում Աղվանից եկեղեցու հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ ու հասնում շոշափելի արդյունքների: Նրա գահակալության հենց առաջին տարում Աղվանից եկեղեցու հոգևոր իշխանության գերագույն մարմինը վերաճում է կաթողիկոսության[41], որի գլուխ անցնում է ինքը՝ Տեր Աբասը[42]: Այս մասին, բայց աթոռակալության տարիների զգալի տարբերությամբ, գրում է նաև Մխիթար Գոշը. «Նստուցին կաթողիկոս զտէր Աբաս, որ կալաւ ամս ԻԳ[43], - ասում է նա և ավելացնում, - Եւ նախնեացն այսպիսի իմն սովորութիւն էր՝ զօրինակ պատրիարկի թղթոցն յաջորդէին այսպէս. Աղուանից, Լփնաց եւ Չոլայ կաթողիկոսէ»[44]: Հնուց եկող այս սովորության մասին վկայում է նաև Մովսես Կաղանկատվացին, մասնավորապես գրելով. «Առ սովաւ (Աբասի ժամանակներից – Հ.Ս.) կալան սովորութիւն գրել ի պատրիարկ թղթի՝ Աղուանից, Լփնաց և Չորայ կաթողիկոսի»[45]: Այսպիսով, ինչպես հետևում է սույն տվյալներից, Աղվանքի կաթողիկոսությունը ձևավորվում է Տեր Աբասի օրոք, անշուշտ, նրա նախաձեռնությամբ ու ինքն էլ դառնում է երկրի առաջին վեհապետը, ով սկսում է կրել «կաթողիկոս» բարձրապատիվ տիտղոսը[46]: Սա է իրականությունը, որն ուժ է ստանում նաև պատմիչների նշած մի հավելմամբ, համաձայն որի, միայն Աբասի և նրա հաջորդների մենաշնորհն է դառնում հրովարտակներում իրենց անվանց կողքին ավելացնել «Աղուանից, Լփնաց և Չորայ կաթողիկոսէ» վերտառությունը: Դառնալով կաթողիկոս՝ Տեր Աբասն իր նստավայր է ընտրում Պարտավը, որը դեռևս V դարի կեսերից դարձել էր Աղվանից հայրապետների փաստացի նստավայրը, և հայրապետական աթոռը պաշտոնապես ամրակայում այստեղ: «Տէր Աբաս,- նշում են գավազանագրքերի հեղինակները, - ի սկզբանն թուականիս Հայոց

[41] Աղվանից կաթողիկոսության ձևավորման հանգամանքների շուրջ տես՝ **Ուլուբաբյան Բ.,** Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Ե., 2001, էջ 98, **Բալայան Մ.,** Հայոց Աղվանից եկեղեցին, էջ 36–46:

[42] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 119:

[43] Անշուշտ սա սխալմունք է, ԽԴ և ԻԳ տարեթվերի նմանության հետևանք, ուստի ուղղելի է ԽԴ-ի:

[44] **Մխիթար Գոշ** (Մովսես Կաղանկատվացի, Յաւելուած Բ), էջ 350, Հայապատում, Բ, էջ 384:

[45] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 343:

[46] Հմմտ. **Ուլուբաբյան Բ.,** Հայոց Արևելից կողմանց եկեղեցին, էջ 110–118:

փոխեաց զաթոռ հայրապետութեանն ի Չորայ ի Պարտավ»[47]: Նույն աղբյուրների համաձայն, նստավայրի տեղափոխությունը և Տեր Աբասի նշանակումն իրականացվել է միևնույն տարում՝ «*ի նոյն ամին*»[48], այսինքն, արդեն նշված 552 թ., որն ի դեպ, արժանացել է համընդհանուր ընդունելության[49]:

Նստավայրի տեղափոխումը Չողից Պարտավ ինքնանպատակ չէր: Աշխարհագրորեն հեռու ընկած Չողի առաջնորդարանը չնայած պահպանել էր իր անվանական գոյությունը, բայց շատ անհարմարությունների տեղիք էր տալիս և ժամանակի պահանջների համեմատ դարձել էր անհամատեղելի: Ուստի, Տեր Աբասն իր պայքարով լուծում էր ժամանակաշրջանի առաջ քաշած խնդիրը և Աղվանից եկեղեցու վերահսկողությունը դնում միակենտրոն իշխանության կառավարման ներքո: Նման ձևով վերանում էին նաև երկու նստավայր ունենալու հետևանքով առաջացած շատ անհարմարություններ, դյուրանում էր թեմերի ղեկավարումը մեկ ընդհանուր՝ գրեթե երկրի միջնամասում գտնվող կենտրոնից, ամրապնդվում էին կապերը և կարգավորվում հարաբերությունները նրանց ու մարզպանության ողջ տարածքով մեկ սփռված կրոնական հաստատությունների միջև: Բացի դրանից, ուսումնասիրվող շրջանում խիստ սաստկացել էին քոչվոր ցեղերի արշավանքները, որոնք մեծ չափով վտանգում էին առաջնորդարանի խաղաղ գոյությունը: Մովսես Կաղանկատվացու վկայությամբ, այդ շրջանում «գերեցաւ ի Խազրաց աշխարհս Աղուանից, իրկէզ եղեն եկեղեցիք»[50]: Հայտնվելով նման իրավիճակում, Աղվանքի հոգևոր հայրերը կենտրոնի անվտանգությունն ապահովելու նպատակաուղղվածությամբ շտապում են հիմնավորվել Պարտավ մայրաքաղաքում՝ այստեղ տեղակայված աշխարհիկ իշխանություններին մոտ լինելու և հարկավոր պահերին նրանց ապավինելու ակնկալիքով:

Առաջնորդարանի Պարտավ տեղափոխումը Աղվանից եկեղեցու պատմության նոր փուլի սկիզբ է դնում, որն ընդունված է անվանել «Պարտավյան շրջան»: Գործելով համեմատաբար անվտանգ պայմաններում, այն իր գոյութ-

---

[47] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 342–343, **Մխիթար Գոշ** (**Մովսես Կաղանկատվացի,** Յաւելուած Բ), էջ 350, Հայապատում, Բ, 384:

[48] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 119:

[49] **Ակինեան Ն.,** Մովսես Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւնն Աղուանից, «Հանդէս Ամսօրեայ», 1953, թիվ 10–12, էջ 576, **Еремян С.Т.** Идеология и культура Албании III–VII вв. (Очерки истории СССР III–IX вв., М., 1958, с. 324); **Акопян А.А.,** նշվ. աշխ., էջ 135, **Ուլուբաբյան Բ.,** Հայոց Արևելից կողմանց եկեղեցին, էջ 119, **Բալայան Մ.,** Հայ Աղվանից եկեղեցին, էջ 43–44:

[50] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 119:

յունը պահպանում է շուրջ երկուսուկես դար և միայն IX դարի շեմին է իր տեղը զիջում Բերդակ կամ Բերդակուր կոչվող ավանին[51], որը, սակայն, նույնպես վերջինը չեղավ Աղվանից կաթողիկոսների համար:

THE DIOCESAN CENTERS OF AGHVANK IN THE EARLY AND LATE MIDDLE AGES

(THE 2ND CENTURY AND THE BEGINNING OF THE 9TH CENTURY)

SVAZYAN H.

Summary

At the end of the 4th century the spread of Christianity reached a new stage both in Aghvank and its neighbouring countries. It was at this stage that Grigor I Pahlavuni's grandson Manuk Grigoris distinguished himself as a fervent preacher. His activity was mainly connected with Artsakh and its province of Khaband, Amaras being its center. The Amaras diocesan center existed up to its founder Manuk Grigoris' death. In 363, conditioned by political circumstances the Catholic see was moved from Aghvank to the country of Masktats namely, to its capital Chor (Chora). However, at the beginning of the 5th century the Catholicos' see of Aghvank was situated in Kapalak. It was here and not in the titular center Chor that the ecclesiastical issues were dealt with.

One of the successors of Manuk Grigoris was Ter-Abbas who founded the institution of Catholicosate in Aghvank.

In 552, the residence was moved from Chora to Partav, which was a really positive change from both political and ecclesiastical perspectives. "The Partav Period" lasted two centuries and a half, and just at the beginning of the 9th century Partav yielded its place to Berdak (Berdakur).

[51] Նույն տեղում, էջ 345:

ЕПАРХИАЛЬНЫЕ ЦЕНТРЫ ДУХОВНОЙ ВЛАСТИ В НОВОМ И РАННЕСРЕДНЕВЕКОВОМ АЛУАНКЕ (II В. – НАЧАЛО IX В.)

СВАЗЯН Г.

Резюме

В конце IV в. начался новый этап проникновения христианства в Алуанк и прилегающие к нему страны, и на этом этапе своей энергичной проповеднической деятельностью отличился внук Григора I Пахлавуни – Манук Григорис. Его деятельность в основном была связана с Арцахом и его провинцией Хабанд с центром в Амарасе. Амарасский епархиальный центр существовал до самой смерти ее основателя Манука Григориса. В силу политических обстоятельств в 363 г. католикосский престол был перенесен из Алуанка в страну Масктац – в ее столицу Чор (Чора). Однако в начале V в. престол католикоса Алуанкской страны находился в Капалаке, именно здесь вершились церковные дела, а не в сугубо номинальном центре Чор.

Одним из преемников Манука Григориса был Тер-Абас, положивший начало институту католикосата в Алуанке.

В 552 г. резиденция из Чора была переведена в Партав, что было весьма положительным сдвигом как с политической точки зрения, так и церковной. «Партавский период» длился около двух с половиной веков, и лишь на пороге IX в. Партав уступил место селению Бердак (Бердакур).

ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱՆՈՒ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԼՋՈՒԿ-ԹՈՒՐՔԵՐԻՆ (XI ԴԱՐԻ 70-ԱԿԱՆ ԹԹ. – XIII Դ.)

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ.

1071 թ. Մանազկերտում թուրք-սելջուկներից կրած պարտությունից հետո Բյուզանդիան հայտնվեց ռազմա-քաղաքական ճգնաժամի ճիրաններում[1]: Ջանալով պաշտպանել իր արևելյան սահմանները, կայսրությունը տեղահանում էր հայ բնակչությանը՝ գաղթեցնելով սահմանամերձ տարածքներ, էականորեն նվազեցնելով Հայոց բնաշխարհի պաշտպանունակությունը[2]: Հայ ազատանին, ապավինելով սեփական ուժերին, դիմակայում էր սելջուկ-թուրքական նվաճողներին: Ըստ մի ենթադրության, հայ ժամանակագիրները գոհունակությամբ ողջունել են Մանազկերտում բյուզանդական զորքի կրած պարտությունը[3]: Այդ բախտորոշ ճակատամարտում բյուզանդական բանակի առավել հզոր թևը գլխավորում էր հայազգի զորապետ Փիլարտոս Վարաժնունին, «քաջաբար մարտնչելով» թուրքական հրոսախմբերի դեմ[4]: Կայսրության կրած պարտությունից հետո նա շարունակեց պայքարը՝ Հայաստանի համար այդ ծանր ժամանակաշրջանում: Մերժելի է նաև այն պնդումը, որ հայերը նեղվելով բյուզանդացիներից, իբր հաճությամբ են ընդունել սելջուկ-թուրքերին Փոքր Ասիայում[5]:

Հայ ազատանին սելջուկ-թուրքերի կողմից զրկվեց հայրենի անդաստանից՝ ապաստանելով հարևան անմատույց վայրերում: Փիլարտոս Վարաժնունին, ամրանալով Բարձր Հայքի Անի-Կամախ քաղաքի մերձակա Մշար ամրո-

---

[1] **Пселл М.** Хронография, М., 1978, с. 191.

[2] **Honnigman E.,** Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363-bis 1071, Bruxelles, 1935, էջ 177:

[3] **Գրուսէ Ռ.,** Պատմութիւն խաչակրաց և Երուսաղէմի ֆրանկ թագավորութեան, հ. I, Փարիզ, 1934, էջ 200:

[4] **Միքայել Ատտալիատես,** Պատմություն, թարգմանություն և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի, Ե., 2015 թ., էջ 70 (այսուհետև՝ **Միքայել Ատտալիատես**):

[5] **Гордлевский В.** Государство сельджукидов Малой Азии, М.-Л., 1941, с. 82.

ցում,[6] կարողացավ անառիկ դարձնել Դարանաղի գավառը՝ «բազում հայերից ու փախստական մարդկանցից կազմելով մարտունակ բանակ»[7]:

Փիլարտոսը փորձեց հնազանդեցնել նաև Սասունի իշխանին՝ Թոռնիկ Մամիկոնյանին (Մուշեղի որդուն), որը, սակայն, կտրուկ մերժեց նրա առաջարկը: Ուստի Փիլարտոսը զորքը շարժեց նրա դեմ, բայց չկարողացավ հասնել Սասուն, քանի որ Ծոփքի Հանձիթ գավառի Ալելույա դաշտում սասունցիների զորաբանակը մարտի բռնվեց դեպի Սասուն շարժվող Փիլարտոսի զորքի հետ և պարտության մատնեց նրան: Այդ ճակատամարտից հետո Փիլարտոսը հրաժարվեց Սասունի դեմ որևէ քայլ ձեռնարկելուց և վերադարձավ իրեն ենթակա Հանձիթ գավառի Խարբերդ բերդաքաղաք[8]: Սակայն այստեղից էլ նա ստիպված էր անցնել Միջագետք: Վերջինս կլանել էր հայ բնաշխարհի ազատանու ռազմունակ ուժերին, որոնք տեղի տալով թուրքական գերակշիռ ուժերի հարաճուն ճնշմանը, ստիպված էին անցնել հայահոծ բնակչություն ունեցող այդ երկրամաս: 1078 թ. Փիլարտոսի զորապետ Վասիլը գրավեց Միջագետքի Եդեսիա քաղաքը[9], որի բացարձակ մեծամասնություն կազմող հայ բնակչությունը համախմբվեց նրա շուրջ և դիմադրեց թուրք-սելջուկներին: 1078 թ. Փիլարտոսը թուրք-սելջուկներից ազատագրեց նաև Ասորիքի Անտիոք նշանավոր քաղաքը[10], որը սակայն շարունակեց մնալ օտար ցեղերի հարաժամյա հարձակումների թիրախ և 1084 թ. վերստին ընկավ նրանց գարշապարի տակ[11]: Իսկ Եդեսիան Վասիլ զորապետի մահվանից հետո մնաց Փիլարտոսի գերիշխանության տակ[12]: 1094–1097 թթ. Եդեսիայի կուրապաղատ է հիշվում հայ զորապետ Թորոսը (Թեոդորոս), որի գլխավորած հայկական զորամասերը 1097 թ. խաչակիր զորագնդերի հետ միասին ջախջախեցին Եդեսիայի վրա հարձակվող սելջուկ-թուրքական հրոսակներին: Նույն թվականին հայկական զորամասերը թուրքերի հարձակումներից պաշտպա-

---

[6] **Մատթէոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 206 (այսուհետև՝ **Մատթէոս Ուռհայեցի**):

[7] **Միքայել Ասորի** **Ատտալիատես,** էջ 160:

[8] **Մատթէոս Ուռհայեցի,** էջ 208:

[9] Նույն տեղում, էջ 216:

[10] **Dedeyan G.,** Les Armeniens entre Grecs, Musulmans et Croises, I, Lisbonne, 2003, p. 61.

[11] **Անանուն Եդեսացի,** Ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Տեր-Պետրոսյանի, Ե., 1982, էջ 31 (այսուհետև՝ **Անանուն Եդեսացի**):

[12] **Տեր-Պետրոսյան Լ.,** Խաչակիրները և հայերը. հ. Ա, Ե., 2005 թ., էջ 196:

նում էին նաև Մելիտենե քաղաքը: Հայերի զորապետ է հիշվում Գաբրիել (Խոռիլ) զորավարը, որն իր զորակիցներով «ամենայն քաջութեամբ» դիմադրում էր սելջուկ-թուրքական զորքին, ուստի վերջինս «զաւուրս բազումս ոչինչ կարաց առնել»[13]:

Թշնամիների կողմից հայ ազատանուն հայրենի երկրից դուրս մղելուց հետո Փիլարտոսի և մյուս հայ զորապետների ջանքերով հայերը կարողացան պահպանել իրենց ռազմական ուժերը: Ամրանալով Կիլիկիայի դժվարամատույց բարձունքներում, Փիլարտոսը հետզհետե այն անմատչելի դարձրեց թշնամիների համար, և այդպիսով, հայ ազատանին, Ռուբինյաններից ավելի վաղ, լեռնաստանում դրեց հայոց նոր պետականության հիմքերը:

1076 թ. Փիլարտոսի հրամանով Կիլիկիայում, Ադանայի գավառի Ջահան գավառակի Հոնի բերդաքաղաքում գումարվում է եկեղեցաժողով, որտեղ կաթողիկոս է ձեռնադրվում Սեբաստիայի Ս. Նշան վանքի եպիսկոպոս Սարգիսը[14]: Նույն տարում բյուզանդացիների դավով սպանվում է Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավունին՝ Անտիոքի դուքսը, որ հարուցեց այդ քաղաքի հայ բնակչության բուռն դժգոհությունը: Ամրանալով Անտիոքի միջնաբերդում, հայ զինվորները քաղաքը հանձնում են Փիլարտոսին[15], որին սակայն չի հաջողվում վերացնել թուրք-սելջուկների հարաճուն սպառնալիքը: Վերջիններս չէին հանդուրժում իրենց դիմակայող հայ ազատանու գոյությունը: Ալփասլան սուլթանը (1063–1072), հայ ազատանուն հնազանդեցնելու նպատակով, Երզնկա քաղաքից արևմուտք՝ մինչև Հալիս գետի ակունքները տարածվող գավառները դրեց թուրք ամիր Դանիշմենդ Ահմեդ Ղազիի գերիշխանության տակ և հանձնարարեց թուլացնել քրիստոնյա (այդ թվում՝ հայազարմ) իշխանությունները և հայերին ընտելացնել թուրք-սելջուկների գերիշխանությանը: Դանիշմենդ ամիրը, ելնելով այն իրողությունից, որ իր իրավազորության տակ դրված շրջաններում հայ բնակչությունը բացարձակ մեծամասնություն էր կազմում, նրա հանդեպ վարում էր հանդուրժող, երբեմն սիրաշահող քաղաքականություն: Թեև Վարդան պատմիչը գրում է, որ այդ ամիրը «աւէն յազգէն Հայոց»,[16] օտար հեղինակները նրան հայ չեն համարում, այլ թուրքմեն, երբեմն՝ պարսիկ:

[13] **Մատթէոս Ուռհայեցի,** էջ 252:

[14] **Վարդան Վարդապետ,** Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 104 (այսուհետև՝ **Վարդան Վարդապետ**): **Մատթէոս Ուռհայեցի,** էջ 210:

[15] **Վարդան Վարդապետ,** էջ 104:

[16] Նույն տեղում, էջ 112:

Աhմեդ Թայլուն կարողացավ հնազանդեցնել իր գերիշխանությանը ենթակա հայաբնակ գավառները, իսկ հետագայում (1177 թ.) դրանք զիջեց Իկոնիայի սուլթանությանը: Վերջինս ամեն կերպ ջանում էր Հայաստանը պահել իր գերակայության տակ և օգտվել նրա հարստություններից: XI դարի արաբ աշխարհագիր Իդրիսիի բնութագրմամբ «Հայաստանը հարուստ է, այնտեղ կարելի է ձեռք բերել ամեն ինչ»[17]:

Սելջուկ-թուրքերը ջանում էին տիրանալ նաև Միջագետքին, որը ևս ուներ հայահոծ բնակչություն և գերիշխող հայ ազատանի: 1089 թ. Մելիք շահ սուլթանի (1072–1092) հրամանով Պուզան ամիրը գրավեց Եդեսիան: Փիլարտոսը հարկադրված մեկնեց Մելիք շահ սուլթանի մոտ և ընդունելով մահմեդականություն, այդ գնով պահպանեց իր իշխանությունը[18]: Հետագայում նա վերստին դավանեց քրիստոնեական հավատը: Միջագետքում հաստատված հայ ազատանին երբեմն ստիպված էր դիմակայել նաև այդ երկրամասին տիրացած ֆրանկ խաչակիրներին: Վերին (Հայոց) Միջագետքի Պիր (Բիր) անառիկ բերդաքաղաքում 1070-ական թթ. հաստատվել էր Ապլղարիբ իշխանը՝[19] Վասակ Պահլավունու որդին: Բայց Եդեսիային տիրացած Բալդուինը «բազում ֆրանկ զինվորների հետ» պաշարում է այդ բերդաքաղաքը: Ապլղարիբը թեև այն հանձնում է Բալդուինին[20], սակայն Եդեսիան թուրք-սելջուկներից շարունակում էր պաշտպանել հիմնականում հայոց ռազմուժը: 1097 թ. թուրքերը վերստին հարձակվում են Եդեսիայի վրա, սակայն հանդիպում են հայ ռազմիկների դիմադրությանը: Վերջիններիս զորապետ Թեոդորոս (Թորոս) կուրապաղատը «իմաստութեամբ և քաջութեամբ պահէր զքաղաքն»[21]:

Հայոց զորքը պաշտպանում էր նաև Փոքր Հայքը: 1097 թ. թուրքական հրոսակախմբերը ներխուժեցին այնտեղ և փորձեցին գրավել Մելիտենե քաղաքը, սակայն պարտություն կրեցին հայ զինվորների կողմից[22]: Վերջիններիս զորապետ Գաբրիելը Փիլարտոսի զինակիցներից էր[23]: Հայկական զորա-

---

[17] Geographie d'Edrisi, II, Paris, 1840, p. 326.

[18] **Վարդան Վարդապետ,** էջ 107:

[19] **Անանուն Եդեսացի,** էջ 56:

[20] Նույն տեղում:

[21] **Վարդան Վարդապետ,** էջ 109:

[22] **Տարեգիրք Սմբատայ Սպարապետի,** Փարիզ, 1859, էջ 99–100: **Վարդան Վարդապետ,** էջ 109–110:

[23] **Գրուսէ Ռ.,** նշվ. աշխ., էջ 207:

մասերը պաշտպանում էին նաև Անտիոք քաղաքը՝ զորակցելով խաչակիրներին: Նրանց գլխավորում էր Փիրուզ զորապետը[24]:

Բյուզանդիան նույնպես ջանում էր հայ ազատանուն գրավել իր կողմը և կանխել կայսրությանն սպառնացող խաչակիրների[25] հնարավոր հարձակումները: Այդ նպատակով 1097 թ. Ալեքսիոս Կոմնենոս կայսրը հայազգի Թաթուլ զորապետին ճանաչեց Կիլիկիայի Մարաշ քաղաքի տիրակալ[26]:

Հայ ազատանին շարունակում էր հիմնականում ապավինել սեփական ուժերին: Փիլարտոսին հաջորդած Վասիլը՝ հանկարծակի ու սրընթաց հարձակումների պատճառով «Գող» մականվանյալը, 1082–1112 թթ. իր զորեղ իշխանությամբ հուսալիորեն պաշտպանում էր հայերի ազգային և կրոնական ինքնությունը[27]: Նա անհրաժեշտության դեպքում զինական աջակցություն էր ցույց տալիս խաչակիրներին, կամենալով ձեռք բերել նրանց զորակցությունը: 1103 թ. Գող Վասիլը սելջուկ-թուրքերի գերությունից ազատեց Եդեսիայի դուքս Բեմունդին[28]: Վարդան Վարդապետը Գող Վասիլի իշխանությունը համարում է «Հաւաքարան թագաւորազանց և ազատաց Հայոց և Աթոռ հայրապետաց»[29]:

XII դ. առաջին կեսին Միջագետքում պատկառելի զորուժ ուներ նաև Վասակ Պահլավունին (Ապլղարիբի որդին), որը եղբոր հետ իր զորայիններով ամրանալով Եդեսիայի իշխանության Թլպաշար և Պիր (Բիր) ամրոցներում, պաշտպանվում էին «ի թուրքաց մեծաւ քաջութեամբ»[30]:

Վասակ Պահլավունին հակամարտության մեջ էր խաչակիրների զորապետ Պաղտինի (1118-ից Երուսաղեմի թագավոր) հետ և զինված առճակատումից հետո ի վերջո նրան զիջեց իր տիրույթները[31]: Դրան, անշուշտ, նպաստեց այն հանգամանքը, որ «ֆրանսիացիների և հայերի միջև չկային ազգային և դավանաբանական նախապաշարումներ»[32]: Սակայն հայ ազատանին բնավ չէր հրաժարվում իր տերունական առանձնաշնորհումներից, որոնց պահապանը իրենց զորքն էր:

---

[24] **Мишо Г.** История крестовых походов, М.-СПб., 2004, с. 35–36.

[25] **Գրուսէ Ռ.,** նշվ. աշխ., էջ 207:

[26] **Մխիթարայ Այրիվանեցւոյ,** Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 61:

[27] **Գրուսէ Ռ.,** նշվ. աշխ., էջ 207:

[28] **Վարդան Վարդապետ,** էջ 112:

[29] Նույն տեղում, էջ 117:

[30] Նույն տեղում, էջ 117–118:

[31] Նույն տեղում, էջ 118:

[32] **Grousset R.,** l'Epopee des croisades, Libraire plon, 1939, p. 71.

1107 թ. Մարաշ քաղաքի մատույցներում Գող Վասիլի զինվորները ծանր պարտության մատնեցին թուրքերին, գերի վերցնելով նաև նրանց հինգ ամիրներին: Շարունակելով մաքառումները նաև հաջորդ տարում, հայերը նորանոր հաղթանակներ տարան թուրքերի դեմ՝ ազատելով գերեվարված շատ քրիստոնյաների[33]: 1112 թ. վախճանվեց Գող Վասիլը՝ «մեծ իշխանն Հայոց… առ նա էին ժողովեալ մնացեալ զօրքն Հայոց և ամենայն ազգն Բագրատունեացն և Պահլաւունեացն և որդիք թագաւորացն Հայոց»:[34] Իբն ալ-Ասիրը Գող Վասիլի մահը դնում է 1114 թ.՝ նշելով որ նա »Հայոց թագավորներից մեկն էր»[35]:

Գող Վասիլի մահվանից հետո նրա իշխանությունը ժառանգում է իր որդեգիրը՝ 25-ամյա Վասիլը՝ «Տղայ» մականվանյալը, ով մորական կողմից սերում էր Կամսարական տոհմից և հայտնի էր որպես «այր քաջ և պատերազմող… նմա հնազանդեցան ամենայն զօրքն»[36]: Սակայն խաչակիր իշխանությունները երբեմն չէին հանդուրժում հայկական ինքնուրույն իշխանությունների գոյությունը: Բալդուինը չբավարարվեց միայն Եդեսիայի իշխանությամբ: 1115 թ. նա զորքը նետեց Վասիլ Տղայի դեմ և «քակեաց զամենայն իշխանութիւն Գող Վասլին, փախստական արար զամենայն դասս ազատաց»[37]:

Թեև հայոց ազատանին թուրքերի կողմից դուրս էր վանվել հայրենիքից, սակայն Հայոց բնաշխարհը գերազանցապես բնակեցված էր մնում հայերով, ուստի մոտ 1100 թ. Տարոն-Տուրուբերանում հիմնված թուրքական ամիրայությունը կոչվեց Շահ-ի Արմեն («Հայոց թագավորներ») անունով, գոյատևելով մինչև 1207 թվականը[38]:

Միջագետքում ևս հայերը շարունակում էին պահպանել իրենց ազդեցությունը, զորակցելով Եդեսիայում հաստատված ֆրանկներին՝ ընդդեմ թուրք-սելջուկների: Վերջիններս 1121 թ. վերստին հարձակվեցին Եդեսիայի վրա, սակայն հանդիպելով ֆրանկների ու հայերի դիմադրությանը, ի զորու չեղան գրավել այդ նշանավոր քաղաքը: Նույն թվին թուրքերին հաջողվեց

---

[33] **Տարեգիրք,** էջ 128–129:

[34] **Մատթէոս Ուռհայեցի,** նշվ. աշխ., էջ 323:

[35] **Իբն ալ-Ասիր,** թարգ., առաջաբանը և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 1981, էջ 24: Սամուէլ Անեցին Գող Վասիլի մահը դնում է ՇԾԹ (1110) թվականին (Սամուէլի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 122 (այսուհետև՝ **Սամուէլ Անեցի**):

[36] **Մատթէոս Ուռհայեցի,** էջ 324:

[37] Նույն տեղում, էջ 338:

[38] **Թուրշյան Հ.,** Շահ-ի Արմեններ («Պատմաբանասիրական հանդես», 1964, № 4):

գրավել Խարբերդը[39]: Նրանք չէին հրաժարվում նաև Եդեսիան գրավելու մտքից: 1146 թ. Իրաքի փոխարքա Զանգի աթաբեկը կարողացավ գրավել Եդեսիան, կոտորածի ու գերեվարման ենթարկելով նրա քրիստոնյա բնակչությանը[40]: Այդ կոտորածը դրվում է 1146 թ. սեպտեմբերի 14-ին[41]:

Եդեսիայի գրավումը առիթ դարձավ Խաչակրաց երկրորդ արշավանքի (1147 թ.) համար, ինչը, սակայն, անհաջող անցավ: Հայ ազատանին ստիպված հեռացավ նաև Միջագետքից, ամրանալով Բյուզանդիային պատկանող Կիլիկիայի բարձունքներում: Չդադարելով սելջուկ-թուրքերին դիմակայելուց, հայերը զորակցում էին ֆրանկներին, որոնց համար «բարեբախտություն էր, – գրում է Ռ. Գրուսեն, – դաշնակից ունենալ հայերի պես «պնդակազմ ու քաջասիրտ քրիստոնյա մի ժողովուրդ»[42]:

Թուրք-սելջուկների դեմ անհավասար դիմակայությունը չէր դադարեցնում Սասունը:

Հայ ազատանին չէր համակերպվում անկոչ և այլահավատ նվաճողների գերիշխանությանը և շարունակում էր պահպանել իր ներքին ինքնավարությունը, քրիստոնեական կրոնը: 1154 թ. հայկական ազատազորքը Թորոս զորապետի գլխավորությամբ Մարաշ քաղաքի մատույցներում փայլուն հաղթանակ տարավ սելջուկ-թուրքերի դեմ, ոչնչացնելով «անթիւ զտաճիկսն»[43]:

Սակայն սելջուկ-թուրքերը Հայաստանի նկատմամբ ոչ միայն չդադարեցրին հարձակումները, այլև ջանում էին գրավել Հյուսիսային Հայաստանն ու Վրաստանը: Բայց նրանց հակահարված տվեցին Վրաց և Հայոց զորամասերը: 1205 թ. Մշո Առաքելոց վանքում օրինակված Ճառընտիրի հիշատակարանում նշված է, որ այդ թվականին «սուլթանն Սեւաստիոյ ժողով արարեալ անհուն բազմութեամբ…եհաս ի Թէոդուպալիս», կամենալով այդտեղից շարժվել դեպի Հյուսիսային Հայաստան և Վրաստան: Սակայն Կարինի մատույցներում վրաց-հայկական միացյալ զորքերը Զաքարե զորապետի և նրա եղբոր՝ Իվանեի գլխավորությամբ ջախջախեցին սելջուկ-թուրքական հրոսակներին[44]:

---

[39] **Իբն ալ-Ասիր,** էջ 244–245:

[40] **Անանուն Եդեսիացի,** էջ 88–92: Եդեսիացիների կոտորածը ողբակոծում է Ներսես Շնորհալին իր «Ողբ Եդեսիոյ» պոեմում (տե՛ս **Ներսես Շնորհալի,** աշխատասիր. Գր. Հակոբյան, Ե., 1968):

[41] **Grousset R.,** l'Epopee des croisades, p. 190-191.

[42] **Գրուսէ Ռ.,** նշվ. աշխ., էջ 280:

[43] **Սամուէլ Անեցի,** էջ 135:

[44] **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Գ, Ե.. 1977, էջ 145-146:

Այդպիսով հայ-վրացական շահերը համընկնում էին նաև հարավ-արևմտյան Հայաստանում: Տակավին XI դարի 20-ական թվականներից Կարինը, Բասենը, Դերջանն ու Տայքը հիշվում են «Իբերիա» անունով[45]: Սակայն այդ երկրամասերի բնակչությունը հիմնականում բաղկացած էր հայերից: Վրաց թագավորները կարիք ունեին հավատարիմ և ուժեղ դաշնակիցների: Ճանաչելով Զաքարյանների իրավունքները, նրանք կամենում էին շահել հայ բնակչության համակրանքը և նրան դարձնել Վրաստանի հավատարիմ դաշնակիցը[46]: Հայերի զինադաշինքը վրացիների հետ ամրապնդվում էր երկու ժողովուրդների ընդհանուր՝ քաղաքական և կրոնական շահերով: Անշուշտ, հիմնավորված չէ այն կարծիքը, որ իբրև թե Զաքարե ամիրսպասալարը պատրաստ էր... դավանաբանական զիջումներ անել Վրաց թագավորին՝ նրա կողմից «արքայական տիտղոս շահելու համար»[47]:

Անընդունելի է նաև այն ենթադրությունը, որ իբր թուրք-սելջուկյան տիրակալները «աջակցում էին Հայ եկեղեցու հեղինակության բարձրացմանը»[48]: Հայոց եկեղեցին, նրա ծոցից դուրս եկած մատենագիրները փառաբանում էին հայ ռազմիկներին, դրվատում նրանց տարած հաղթանակները: Թուրքերը Հարավային Հայաստանից դուրս էին մղել ոչ միայն ռազմիկ տարրը, այլև հայոց եկեղեցու ականավոր առաջնորդներին, որոնց օրհնությամբ վրաց և հայոց զորքերը ջանացին ազատագրել նաև Հարավային Հայաստանը, ակնկալելով նրա բնակչության զորակցությունը: Սակայն քանի որ, ինչպես նշվեց, հայ ազատանին իր զորագնդերով դուրս էր մղվել հայրենի երկրից, ուստի վրաց-հայկական զորքերը սպասված օգնությունն այնտեղ չգտան և ստիպված նահանջեցին: Զաքարեին հաջորդած Շահնշահի սպարապետության ժամանակ վրաց-հայկական միացյալ զորքերը դադարեցրին հարձակումները օտար հրոսակների դեմ[49]: Մինչդեռ վերջիններս շարունակում էին իրենց ավարատենչ նկրտումները:

---

[45] **Ադոնց Ն.,** Երկեր, հ. Ե, Ե., 2012, էջ 479:

[46] **Բաբայան Լ.,** Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը, XIII–XIV դարերում, Ե., 1964, էջ 31:

[47] **Հովհաննիսյան Ա.,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. I, Ե., 1957, էջ 291:

[48] **Բոռնազյան Ս.,** Հայաստանը և սելջուկները XI–XII դդ., Ե., 1980, էջ 234:

[49] Դիվան հայ վիմագրության, պրակ I, կազմեց Հ. Օրբելի, Ե., 1966, էջ 6–7: Շահնշահը հորից հետո հիշվում է որպես «Հայոց և Վրաց ամիրսպասալար», իսկ Իվանեն՝ «աթաբեկ» (Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանեանց. Ս. Պետերբուրգ, 1913, էջ 67):

Հայաստանը և Վրաստանը գրավելու նպատակով Իրաքում և Ատրպատականում իշխող Ջելալեդդին սուլթանը 1218 թ. հարձակվեց Հայաստանի և Վրաստանի վրա: Թեև նրան դիմակայեցին հայերի, վրացիների ու ալանների միացյալ զորամասերը, սուլթանի գերակշիռ ուժերը կարողացան հաղթանակ տանել քրիստոնյաների դեմ: Սուլթանի զորքը ներխուժեց նաև Հայաստանի հարավային գավառներ և 1229 թ. գրավեց Խլաթ քաղաքը, կոտորելով, գերեվարելով նրա բնակչությանը[50]: Այդ քաղաքը մահմեդականները դիտում էին որպես Հայաստանի կենտրոն: Արաբ մատենագիր Աբուլ Ֆիդան (1273–1333) իր կազմած «Ժամանակագրության» մեջ Խլաթը համարում է Հայոց երկրի մայրաքաղաք[51]:

Խլաթից հետո նույն սուլթանը գրավեց նաև Տարոն գավառը: Բայց Սասունը պահպանեց իր ներքին ինքնավարությունը: Դժվար է համաձայնվել այն կարծիքի հետ, որ իբր 1221 թ. Սասունն արդեն քրդացվել էր[52]:

Հայությունն իբրև ներքին ինքնուրույնությամբ օժտված միավոր, հիմնականում պահպանում էր իր լեզուն, բարքերն ու քրիստոնեական հավատը: Ուստի, տվյալ պատմաշրջանի օտարալեզու սկզբնաղբյուրներում Հայաստանը հիշվում է որպես առանձին երկիր: XIII դարի պարսիկ պատմագիր Իբն Բիբիի հեղինակած «Սելջուկ նամե» երկում նշվում է, որ Ռումի (Իկոնիայի) սուլթան Քեյքաուսը (1219–1236) հաջողությամբ հարաբերություններ էր պահպանում «խաչակիրների և Հայաստանի հետ»[53]:

Հայաստանը, որպես առանձին երկիր, հիշվում է նաև արաբերեն վիմագիր աղբյուրներում: 1213 թ. Բայբուրդ քաղաքի ամրոցի որմին փորագրված արձանագրության մեջ Ռումի (Իկոնիայի) սուլթանը հիշատակվում է որպես «Ռում և Հայաստան երկրների թագավոր»[54]: Իսկ Այրարատի Աբեղյանք գավառի Մժնկերտ բերդաքաղաքում 1233-ով թվագրված արձանագրության մեջ հիշատակվում է «Ռումի, Հայաստանի, Դիյարբաքրի և Դիյար Ռաբբիի թա-

---

[50] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Ե., 1965, էջ 212:

[51] **Рашид-ад-Дин.** Сборник летописей, II, М.-Л., 1960, с. 27–29.

[52] **Markwart J.,** Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, S. 405.

[53] **Masse H.,** Sultan Seldjoukide Kejkobad I-er et l'Armenie («Revue des Etudes Armeniennes», IX, 1929, p. 113).

[54] **Хачатрян А.** Корпус арабских надписей Армении VIII-XVI вв., вып. I, Е., 1987, с. 63.

գավորը»[55]: Ռաշիդ ադ-դինը իր կազմած ժամանակագրության մեջ հիշում է «Ռումի սուլթանի և Սիրիայի, Հայաստանի մելիքներին»[56]:

THE RESISTANCE OF THE ARISTOCRACY TO SELJUK TURKS IN SOUTH-WESTERN ARMENIA (THE 70S OF THE 11TH CENTURY UP TO THE 18TH CENTURY)

VARDANYAN V.

Summary

After being defeated by Seljuks in the battle of Manzikert (1071), the Byzantine Empire tried to protect its eastern borders through violent resettlements of Armenians, which significantly decreased Armenia's capacity of self-defence. Meanwhile the Armenian aristocracy kept fighting with the Seljuk invaders. Pilart Varazhnuni, the Edessa curopalate, military leader Toros (Teodoros) and military leader Gabriel (Khoril) (the second half of the 11th century) were among them. Leaving their homeland Armenians fortified their positions in inaccessible mountains, which thanks to Pilart, became unassailable even for Seljuks. The aforementioned leads to the conclusion that the Armenian aristocracy sought to lay the foundation of the new Armenian state even before the Rubinyans' era. The self-defence battles in Edessa, Lesser Armenia and Antioch (1097) were the highlights of the successful fight of the Armenian aristocracy with Seljuk Turks within the last 30 years of the 11th century. It was then that the Armenian troops fighting with the Crusaders, backed them at the same time without carrying out a servile policy towards the Byzantine Empire. Thus, the Armenians counted mainly on themselves, preserving their national and religious identities (Gokh Pronce Vasil, 1082-1112, Vahan Pahlavuni), as testified by the foreign sources of the given historical period.

[55] Նույն տեղում, էջ 63:

[56] **Рашид-ад-Дин,** նշվ. աշխ., էջ 27:

ПРОТИВОСТОЯНИЕ АРИСТОКРАТИЧЕСКОЙ ПРОСЛОЙКИ ЮГО-ЗАПАДНОЙ АРМЕНИИ ТУРКАМ-СЕЛЬДЖУКАМ (70-е гг. XI в. – XVIII в.)

ВАРДАНЯН В.

Резюме

После поражения в битве с сельджуками при Маназкерте (1071 г.). Византия старалась защитить свои восточные границы путем насильственного переселения армян, что существенно снизило обороноспособность Армении. Между тем армянская аристократическая прослойка продолжала оказывать сопротивление сельджукским захватчикам. Среди них были Пиларт Варажнуни, Эдесский куропалат, полководец Торос (Теодорос) и полководец Габриел (Хорил) (вторая половина XI в.). Покинув родину, армяне укрепились на труднодоступных высотах, которые, благодаря Пиларту, стали неприступными для сельджуков. Сказанное приводит к заключению, что армянская аристократия, еще до Рубинянов, пыталась заложить основы новой армянской государственности. Отражением успешного сопротивления армянской аристократии сельджукам в последнее тридцатилетие XI в. явились оборонительные бои в Эдесии, Малом Айке, Антиохе (1097), когда армянские войска, сражаясь с крестоносцами, в то же время оказывали им поддержку, но не без угоднической политики Византии. Тем самым армяне в основном надеялись на собственные силы, сохраняя свою национальную и религиозную идентичность (Гох князь Васил, 1082–1112 гг., Ваан Пахлавуни и др.), о чем свидетельствуют иноязычные первоисточники этого исторического периода.

ՄԱՍՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

ՄՈՎՍԻՍՅԱՆ Ֆ.
history-vph@mail.ru

Մասոնության կամ «ազատ որմնադիրների» գաղտնի չորս ընկերությունների կողմից 1717 թ. հունիսի 24-ին Լոնդոնում հիմնադրած Անգլիայի Մեծ Օթյակը[1] իր գործունեության հիմնական խնդիրը համարում էր Սողոմոնի խորհրդանշական տաճարի կառուցումը[2], մարդկանց բարոյական կատարելագործումը և նրանց համախմբումը եղբայրական սիրո, հավասարության, փոխօգնության և հավատարմության սկզբունքների հիման վրա[3]: «Տիեզերքի Մեծ ճարտարապետի»[4] մասին մասոնական ուսմունքը, «մասոնության պատմահայր»[5] Ջեյմս Անդերսոնի 1723 թ. կազմած «Ազատ որմնադիրների» սահմանադրության գաղափարական դրույթներն ու հիմնարար սկզբունքները միտված էին տիեզերքի քաղաքացու ձևավորմանը և նպատակ էին հետապնդում ազատ ու խաղաղ առաջընթացի միջոցով հաստատել հավերժ ու համընդհանուր իրավունք, նպաստել ընդհանուր բարեկեցության ապահովմանը, մարդու հոգևոր վերափոխմանը, մարդկությունը մեկ միասնական եղբայրական ընտանիք դարձնելուն[6]: Մասոնները կամ «համաշխարհային պատմությունը կերտող մարդիկ»[7] շրջապատող աշխարհի և մարդկանց վերափոխման մասին իրենց

---

[1] Տե՛ս **Calvert A.F.** History of the Grand Lodge of England. London, 1916.

[2] Մասոնական ուսմունքի գլխավոր առասպելներից մեկը վերաբերում է հրեաների թագավոր Սողոմոնի տաճարի կառուցմանը, որն իրականացրեց Հիրամ Աբիֆը (Ադոնիրամը): Նրա անունը մի քանի անգամ հիշատակվում է Աստվածաշնչում: Տե՛ս **Джонсон П.** Популярная история евреев. Пер. с англ., М., 2003, с. 76–77; **Найт К., Лимас Р.** Ключ Хирама. Фараоны, масоны и открытие тайных свитков Иисуса. Пер. с англ., М., 1996.

[3] **Лучицкий Г.** Франкмасонство. Энцик. словарь Ф.А. Брокгауза и И.А. Ефрона, т. XXXVI А, СПб., 1902, с. 502; Масонство в его прошлом и настоящем. Под ред. Мельгунова С.П. и Сидорова Н.П., т. 1, М., 1991, с. 2–4.

[4] Մասոնական ուսմունքը Տիեզերքի Մեծ արարիչ կամ ճարտարապետ համարում է Աստծուն, ով քաոսից արարեց աշխարհը: Տե՛ս **Найт К., Лимас Р.** Масонский завет. Наследие Хирама. Пер. с англ., М., 1998.

[5] **Уайт А.** Новая энциклопедия масонства (великого искусства каменщиков) и родственных таинств: их ритуалов, литературы и истории, СПб.-М.-Краснодар, 2003, с. 18.

[6] **Борзаковский Д.** Франкмасонство и тайные общества древнего и нового мира, М., 1900, с. 3; **Спаров В.** Полная история масонства в одной книге, М., 2010, с. 258.

[7] **Ридли Дж.** Фримасоны. Люди, творящие мировую историю. Пер. с англ., М., 2007.

գաղափարները դուրս բերեցին Եվրոպայի սահմաններից ու սփռեցին աշխարհի բոլոր կողմերում:

Մասոնության հետ հայերի առաջին առնչությունների մասին վկայում է Էդինբուրգի «Cannangate» օթյակի 1762 թ. արձանագրություններից մեկը: Ըստ այդ փաստաթղթի՝ Անգլիայի Մեծ Օթյակի Գերագույն Վարպետ էրլ Ֆերեսը Մերձավոր Արևելքում, Հալեպում և Պարսկաստանում մասոնությունը տարածելու նպատակով չորս մեծ վարպետ է նշանակել, որոնցից մեկը հայազգի Դիոնիսիոս Մանասն էր: Օթյակները համախմբող մարմինը կոչվում էր «All Armenia in the East Indies», որը 1805 թ. հետո այլևս չի հիշատակվում[8]:

XVIII դարի առաջին կեսին մասոնության գաղափարների տարածման փորձ արվեց նաև Օսմանյան կայսրությունում: Ըստ լոնդոնյան «St. James's Evening Post» թերթի՝ 1738 թ. մայիսին Կ. Պոլսից ստացված մի նամակ հայտնում էր, որ Կ. Պոլսից ավելի վաղ Զմյուռնիայում և Հալեպում «ազատ որմնադիրները յաջորդաբար օթեակներ կը հիմնեն»: 1748 թ. Կ. Պոլսում անգլիացի վաճառականները մասոնական օթյակ ստեղծեցին, որի հավաքատեղին Բերա թաղամասում գտնվող անգլիական դեսպանատան թարգմանի տունն էր: Այստեղ Փարիզից եկած ֆրանսիացի դը Պալոնը մասոնության գաղափարները հայերի ու հույների շրջանում քարոզելու նպատակով այնպիսի բուռն գործունեություն ծավալեց, որ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ռեիս փաշան Ֆրանսիայի դեսպան կոմս Ռոլան դը Ալլեորից պահանջեց նրան հեռացնել Կ. Պոլսից: Դեսպանը ոչ միայն կատարեց նախարարի պահանջը, այլև Զմյուռնիայի հյուպատոս Շառլ-Կլոդ դը Բեյսոնելին հրահանգեց ֆրանսիացի վաճառականներին արգելել հաճախել տեղի մասոնական օթյակի հավաքներին[9]:

Օսմանյան կայսրությունում մասոնության տարածման համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին հատկապես XIX դարի առաջին կեսին, երբ սուլթան Աբդուլ Մեջիդը քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարը կանխելու և կայսրությունը փլուզումից փրկելու նպատակով հարկադր-

---

[8] **Ֆէնէրճեան Ա.** Ազատ որմնադրութիւնը Մօտաւոր Արեւելքի մէջ: Կեանք եւ Արուեստ, 1936 հոկտեմբեր, թիվ 8, էջ 225; **Բէրբէրեան Ռ.,** Հայ մասոնները և «Սէր» օթեակը Պոլսոյ մէջ, Հայրենիք 1937, թիվ 6, էջ 128; **Jamgocyan O.,** Les Francs-Maçons Arméniens; Paris, 2017, p. 53.

[9] **Պէյլէրեան Ա.,** Ազատ-որմնադրութեան մուտքը Օսմանեան կայսրութիւն եւ Պոլսոյ հայկական «Սէր» օթեակը ԺԹ դարուն, Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրութ, 2001, էջ 144–145:

ված եղավ 1839 թ. նոյեմբերի 3-ին հռչակել Գյուլհանեի Հաթթը-Շերիֆը՝ սկիզբ դնելով թանզիմաթի դարաշրջանին[10]:

1848–1852 թթ. եվրոպական բազմաթիվ երկրներում մասոնական օթյակների նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ իրականացրած հեղափոխական, ազգային-ազատագրական և միավորման համար պայքարը[11], որն ընթացավ ֆրանսիական մեծ հեղափոխության «ազատություն, հավասարություն, եղբայրություն» մասոնական կարգախոսով[12], բարերար ազդեցություն ունեցավ Օսմանյան կայսրության ճնշվող ժողովուրդների ազգային ինքնագիտակցության բարձրացման վրա: Կատարելով 1856 թ. մարտի 30-ի Փարիզի հաշտության պայմանագրի 9-րդ հոդվածով Թուրքիային ներկայացված բարեփոխումների պահանջը՝ սուլթան Աբդուլ Մեջիդը «Հաթթը հյումայուն»-ի հրովարտակով առանձին արտոնություններ շնորհեց քրիստոնյա հպատակներին[13]: Դրանից և Թուրքիան եվրոպականացնելու քաղաքական ընթացքից շտապեցին օգտվել անգլիական և ֆրանսիական մեծ օթյակները, որոնք ձեռնամուխ եղան մասոնության տարածմանը թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների շրջանում: Օսմանյան նավատորմում ծառայող մի խումբ անգլիացի ծովայիններ 1856 թ. նոյեմբերի 25-ին Կ. Պոլսի Հասքյոյ թաղամասում՝ «Անգլիայի Մեծ օթյակի» արտոնագրով հիմնեցին Թուրքիայում առաջին կանոնավոր մասոնական օթյակը[14]: «Oriental» (Արևելյան) թիվ 687 անունն ստացած այս օթյակի հիմնադիրներից երկուսը հայ էին՝ ճարտարապետ Ս. Ազնավուրը և վաճառական Կոզմա Աղջիկյանը: Սերովբե Ազնավուրը որոշ ժամանակ անց դարձավ այս օթյակի բարձրաստիճան մասոններից մեկը: Օթյակի բացման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ 1857 թ. օգոստոսի 7-ին: Օթյակին հետագայում անդամագրվեցին ևս 15 հայ ազատ

[10] **Миллер А.Ф.** Краткая история Турции, М., 1948, с. 68–69; **Шабанов Ф.** Государственный строй и правовая система Турции в период Танзимата, Баку, 1967, с. 42–50.

[11] **Вейл Ж.** История республиканской партии во Франции с 1814 по 1870 гг., М., 1906, с. 57; **Ланин П.** Тайные пружины истории (Молодая гвардия, 1991, N 8, с. 252); **Ридли Дж.,** նշվ. աշխ., էջ 252–257:

[12] **Пименова Л.А.** Идея свободы во французской революции XVIII века (Новая и новейшая история, 1992, № 1, с. 62).

[13] **Փափազյան Ա.,** Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թվականներ), Ե., 2002, էջ 27–35:

[14] Մասոնության մեջ կանոնավոր համարվում է այն օթյակը, որն ստեղծվել է որևէ Մեծ օթյակի, Ազգային օթյակի կամ Մեծ արևելք օթյակի արտոնագրով: **Карпачев С.** Масоны. Словарь, М., 2008, с. 334.

որմնադիրներ, որոնց թվում՝ Գրիգոր Մանասը, Սրապիոն Հեքիմյանը, Սերովբե Թագվորյանը և Միքայել Ալիշանը: 1911 թ. ապրիլի 7-ին «Oriental» օթյակին անդամագրվեց Օսմանյան բանկի տնօրեններից Պերճ Քերեսթեճյանը[15]: Օթյակի ամենաերևելի մասոններից մեկը Կ. Պոլսում Սերբիայի դեսպանատան առաջին թարգման Թադեոս Թերխանն էր[16]: Օթյակը գործեց բավական երկար՝ իր աշխատանքներն ընդհատելով միայն Առաջին աշխարհամարտի տարիներին: 1935 թ. հոկտեմբերի 10-ին «Oriental»-ը փակվեց՝ ի թիվս այլ օթյակների, որոնց ամբողջ գույքը պետականացվեց[17]: 1948 թ., երբ Թուրքիայում արտոնվեց մասոնական օթյակների գործունեությունը, «Oriental»-ը վերսկսեց իր աշխատանքները և 1949 թ. վերջնականապես փակվեց[18]:

1850–1860-ական թթ. սկիզբը դարձան հայ հասարակական մտքի զարգացման մի նոր և յուրատեսակ փուլի, որով սկսվեց «խիստ կարևոր դարագլուխ»[19]: Այս շրջանում ծավալված ազգային սահմանադրական շարժումը, գրական, հասարակական, գիտական և թատերական կյանքի աշխուժացումը, հայ մտավորականության ու «եվրոպականացած» վաճառականների բազմաթիվ այցելությունները Եվրոպա[20] և շփումները մասոնական օթյակների հետ ճանապարհ հարթեցին արևմտահայության շրջանում մասոնության ձևավորման համար:

Մինչև առաջին հայկական մասոնական օթյակի ստեղծումը հայ մասոնների թիվը «քառասունը հազիվ էր անցնում», որոնց մեծ մասը մտավորականներ էին և սոցիալական ծագումով ներկայացնում էին հայության ինչպես ունևոր, այնպես էլ չունևոր խավերին[21]: Նրանցից ոմանք 1858 թ. ապրիլի 26-ին անդամագրվեցին «Ֆրանսիայի Մեծ Արևելք» մայր օթյակի հովանավորությամբ Կ. Պոլսում հիմնված երկրորդ օթյակին: «l' Etoile du Bosphore» (Բոսֆորի աստղ) անունը կրող այս օթյակի ղեկավարներն ու անդամները ֆրանսիացիներ էին: Օթյակի հայ անդամներից հայտնի են զինվորական Միհրան Մարաշյանը և 1884 թ. վարպետի աստիճան ստացած Հովհաննես

---

[15] **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 151–152.

[16] **Ֆէնէրճեան Ա.,** Ազատ որմնադիրութիւնը մօտաւոր Արեւելքի հայութեան մէջ, Կեանք եւ Արուեստ, 1935, էջ 79:

[17] Նույն տեղում, էջ 78, Զ տարի, 1936, հոկտեմբեր, թիվ 8, էջ 225–226; Նույնի՝ «Սէր» օթեակը: Հայրենիք, 1955, յունիս, թիվ 6, էջ 90–91:

[18] **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 152:

[19] **Ֆէնէրճեան Ա.,** «Սէր» օթեակը: Հայրենիք, 1956, յունիս, թիվ 6, էջ 90:

[20] **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 149:

[21] Հայրենիք, 1937, մարտ, թիվ 5, էջ 82:

Արշակունին: Ֆինանսական վատթար վիճակի պատճառով 1901 թ. դեկտեմբերի 16-ին այս օթյակը փակվեց[22]:

1850-ական թվականների վերջերին քաղաքական ասպարեզ իջած արևմտահայ ազգային սահմանադրական շարժման մի խումբ գործիչներ, Սերովբե Ազնավուրի գլխավորությամբ, մամուլում հանդես էին գալիս ոչ միայն սահմանադրության ընդունման անհրաժեշտության օգտին և հետադիմական ուժերի ու խավարամիտների քննադատությամբ, այլև քարոզում էին եվրոպական երկրներում տարածում գտած «տիեզերական եղբայրության բարոյագիտական ուսմունքը»[23]:

1860 թ. սուլթան Աբդուլ Մեջիդի շնորհած Ազգային սահմանադրությունից արևմտահայությունը հանկարծակիի չեկավ և ուրախությամբ ընդունեց այն՝ ակնկալելով օգտվել նրա ընձեռած հնարավորություններից ու «անոր տալիք բարիքներէն»[24]: Արևմտահայ սահմանադրական շարժման գործիչները եվրոպական կրթություն ստացած և եվրոպական երկրներում մասոնական օթյակներում ձեռնադրված երիտասարդ մտավորականներ էին: Նրանց շարքերում էին մասոնական նոր օթյակներ հիմնադրողները:

Մինչ 1860 թ. Ազգային սահմանադրության ընդունումը, արևմտահայ իրականության մեջ մասոնական եղբայրության, միության և համերաշխության գաղափարները «լոկ անկայուն իղձեր ու ցանկություններ էին, ոչ ավելի»[25]: Այս գաղափարները կենսունակ դարձնելու իմաստով Ազգային սահմանադրությունը և 1860 թ. սեպտեմբերի 1-ին Կ. Պոլսի Բերա թաղամասում մի խումբ սահմանադրականների նախաձեռնությամբ «Սիրո և միության» նշանաբանով ստեղծված «Բարեգործական ընկերությունը»՝[26] իր լուսավորչական գործունեությամբ, արևմտահայերի համար բացում էին նոր կյանքի և նոր իրողության հեռանկարներ: Սակայն շուտով ակնհայտ դարձավ, որ սահմանադրությունն իր երեսփոխանական, կրոնական, քաղաքական, գավառական ժողովներով ու տարբեր խորհուրդներով սոսկ հիասթափություն և հուսա-

---

[22] **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 152:

[23] **Карпачев С.П.** Краткий очерк истории западноевропейского и русского масонства XVII–XIX веков (Масонство и масоны, сб. статей, М., 1997, с. 4).

[24] Հայրենիք, 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 93:

[25] Հայրենիք, 1937, մարտ, թիվ 5, էջ 82:

[26] Հանդէս ամսօրեայ, 1952, էջ 136: «Յայտարարութիւն բարեգործական ընկերութեան հայոց», Կ. Պոլիս, 1860, էջ 14–15:

լքություն առաջ բերեց հատկապես առաջադեմ մտավորականության շրջանում:

1862 թ. Զեյթունի ապստամբության եղերական հետևանքները, հայության իրավազրկությունը, հարկային ծանր բեռը, քրդերի կողմից հայության ունեցվածքի պարբերական թալանը, կանանց և աղջիկների առևանգումը, բռնի կրոնափոխությունն ու հալածանքները հայ մտավորականությանը և հասարակական գործիչներին հարկադրեցին ապավինել մասոնական օթյակների զորությանը:

Մասոնությունը, իր շարքերում համախմբելով ժամանակի արևմտահայ մտավորականության սերուցքը և եվրոպական ազատամտական համամարդկային, լուսավորության ու բարոյական բարձր գաղափարներով անկեղծորեն տոգորված երիտասարդությանը, ջանում էր հաղթահարել «Կ. Պոլսի բարոյական հեղձուցիչ մթնոլորտը»[27], գոտեպնդել հայությանը և ուժ տալ նրա ազգային ոգուն: Իր ուժերի ներածին չափով հայ մասոնությունը ձգտում էր «ազգային կոշտ քարը հղկել, վէմը հղկել, հարթեցնել[28], մեղմել հայ հանրային բարքերը, ամրացնել մարդկային և ազգային բարի զգացմունքներն ու համերաշխութիւնը, տարածել համբերատարութեան գաղափարը, կռուիլ ազգային ստրկամտութեան դէմ ... ու այդպիսով աւելի բարեյաջող հորիզոնների մօտեցնել ազգը»[29]:

Մասոնությանը հարելու «հմայքներից» մեկն էլ 1859 թ. ապրիլին սկսված իտալական ազգային ազատագրական պայքարն էր, որը գլխավորում էին բարձրաստիճան մասոններ՝ Պիեմոնտի թագավոր Վիտորիո Էմանուիլ II-ը, վարչապետ Կամիլո Կավուրը և Ռիսորջիմենտոյի երևելի գործիչներ Ջուզեպե Գարիբալդին ու Ջուզեպե Մացցինին:

---

[27] Նույն տեղում:

[28] Մասոնական գաղափարախոսությունում քարը հղկել, հարթեցնել և խորհրդանշական Սողոմոնի տաճարի շինարարությունում օգտագործելը նույնացվում է մարդու հոգևոր վերափոխման հետ: Իր գիտակցական գործունեության ընթացքում ազատ որմնադիրը պարտավոր է հղկել «իր հոգու կոշտ քարը», ձգտել բարոյական կատարելագործման: Մասոնական օթյակում ազատ քարագործների պիտույքների թվում պարտադիր առկա է անտաշ քար, որը խորհրդանշում է կոպիտ բարոյականություն, քաոս: Տե՛ս **Соловьев О.Ф.** Масонство. Словарь-справочник, М., 2001, с. 248; **Курбатов В.И.** Тайное общество масонов, М., 2007, с. 67; **Карпачев С.П.** Краткий очерк истории западноевропейского и русского масонства..., с. 203.

[29] **Բերբերյան Ռ.,** նշվ. աշխ., Հայրենիք, 1937, մարտ, թիվ 5, էջ 75:

Միության, համերաշխության և ազատության նպատակին էր միտված հայ մասոնական օթյակների գործունեությունը, որոնք ստեղծվեցին Կ. Պոլսում[30] և Զմյուռնիայում: Մինչ այստեղ հայ առաջին օթյակների հանդես գալը 1850-ական թվականներին մի խումբ հայ երիտասարդներ Եվրոպայում գտնվելու տարիներին անդամագրվել էին մասոնական տարբեր օթյակների: Նրանցից Ստեփան Ոսկանյանը, որ 1848 թ. փետրվարի ֆրանսիական հեղափոխության օրերին մի խումբ մարդկանց հետ առաջիններից մեկը ներխուժել էր թագավորական Թյուիլրի պալատը, իտալական «Liberta» օթյակի անդամ էր[31]: Փարիզում Օսմանյան դեսպանատան խորհրդական Հակոբ Կրճիկյանը և պոլսահայ դրամատեր Միքայել Երամյանը ֆրանսիական «La Persévérante Amitié» (Հարատևող բարեկամություն) օթյակի անդամ էին[32]:

Սերովբե Ազնավուրը և «Ազդարար Բյուզանդեան» թերթի խմբագիր-հրատարակիչ Խաչատուր Օսկանյանը 1854 թ. փետրվարին Լոնդոնում անդամագրվել էին անգլիական «Jordan» (Հորդանան) թիվ 201 մասոնական օթյակին և «Odd Fellows» «փոխադարձ օգնության և եղբայրության գաղտնի ընկերությանը»[33]: Արևմտահայ մտավորականներից ոմանք մասոն էին ձեռնադրվել Կ. Պոլսում գործող անգլիական և ֆրանսիական օթյակներում: Նրանցից թատերագիր և բանաստեղծ Սրապիոն Հեքիմյանը և վաճառական Միքայել Ալիշանը 1857 թ. անգլիական «Oriental» թիվ 687 օթյակի անդամ էին: Կոզմա Աղջիկյանը Մանչեսթրի «Integrity» (Ուղղամտություն) թիվ 168 օթյակի անդամ էր[34]: «Մեղու» հանդեսի հիմնադիր խմբագիր, 1859 թ. ազգային սահմանադրության նախագիծը պատրաստող հանձնաժողովի անդամ Հարություն Սվաճյանը և հրապարակախոս, «Բարեգործական ընկերության» հիմնադիրներից Սերովբե Թագվորյանը «Grand orient de France» (Ֆրանսիայի Մեծ Արևելք) օթյակի արտոնագրով Կ. Պոլսում հիմնված օթյակի անդամ էին[35]:

1859 թ. նոյեմբերի 19-ին Զմյուռնիայում հիմնվեց «Homer» (Հոմերոս) թիվ 806 օթյակը, որի արտոնագիրն «Անգլիայի Մեծ օթյակը» շնորհեց 1860 թ. հունվարի 25-ին: «Հոմերոս» թիվ 806 անգլիախոս օթյակի հիմնադիրներից

---

[30] Տե՛ս **Սիրունի Յ.Ճ.,** Պոլիս եւ իր դերը, հ. 3, Անթիլիաս, 1987:

[31] Հայրենիք, 1937, մարտ, թիվ 5, էջ 82–83:

[32] **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 151:

[33] Հայրենիք, 1937, մարտ, թիվ 5, էջ 83:

[34] Կեանք և Արուեստ, 1935, էջ 74; **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 151:

[35] Հայրենիք, 1937, մարտ, թիվ 5, էջ 83:

Սերովբե Ազնավուրը զբաղեցնում էր Մեծ Վերահսկողի բարձր պաշտոնը[36]: Այս օթյակի անդամ էր նաև վաճառական Միքայել Երամյանը: Օթյակի բացման արարողությունը տեղի ունեցավ 1860 թ. օգոստոսի 7-ին, որը գլխավորում էր Կ. Պոլսում Անգլիայի դեսպան, «Herteford» օթյակի անդամ Հենրի Բուլվեր-Լիթոնը[37]: 1877 թ. փետրվարի 15-ին «Հոմերոսն» իր արտոնագիրը վերադարձրեց «Անգլիայի Մեծ օթյակին»՝ Զմյուռնիայում ծագած քաղաքական խռովության պատճառով, իսկ 10 տարի անց դադարեցրեց իր գործունեությունը[38]: Հ. Բուլվեր-Լիթոնը համոզված էր, որ մասոնությունը մեծ առաքելություն ունի Մերձավոր Արևելքում, ուստի 1860 թ. մարտի 30-ին Կ. Պոլսում հիմնեց գերմանախոս «Deutscher Bund» (Գերմանական միություն), իսկ 1861 թ. մարտի 31-ին Զմյուռնիայում՝ ֆրանսախոս «La victoire» (Հաղթանակ) օթյակները: «Հաղթանակ» օթյակի բոլոր հիմնադիրները «Հոմերոս» օթյակի անդամ էին: Հ. Բուլվեր-Լիթոնը 1861 թ. նոյեմբերի 9-ին Կ. Պոլսում նոր օթյակ ստեղծեց, որն իր անունով կոչվեց «Bulwer» (Բուլվեր) թիվ 891 օթյակ: Այս անգլախոս օթյակը սկզբում գործում էր Բոսֆորի եվրոպական ափին, այնուհետև տեղափոխվեց Բերա թաղամասի «Բալթազար» հյուրանոց: «Բուլվեր» օթյակի առաջին գերիարգելի վարպետներից մեկը Սերովբե Ազնավուրն էր: Օթյակն ուներ 16 մահմեդական և 11 հայ անդամներ, որոնց թվում էին Մարտիրոս Հարենցը, Բ. դռան պաշտոնյա Աստուր Սարգսյանը, դերասան Հակոբ Վարդովյանը, Կ. Պոլսի առևտրի պալատի հիմնադիրներից Սենեքերիմ Մանուկյանը[39]:

1862 թ. հունվարի 25-ին Կ. Պոլսի Բերա թաղամասի անգլիացիների շրջանում՝ Մանչեստր քաղաքում գործող «Odd Fellows» մասոնական օթյակը ստեղծեց մասնաճյուղ՝ «Օրիոն» կամ «Հայկ» անունով[40]: Դրան անդամակցեցին նաև մի խումբ հայեր, որոնց թվում էր Սերովբե Ազնավուրը[41]: Հիմնադրումից օրեր անց՝ հունվարի 30-ին, «Odd Fellows»-ը Կ. Պոլսի Արևելյան թատրոնում կազմակերպեց առաջին տարեկան պարահանդեսը, որից ստացված շահույթը բաժանեց քաղաքի աղքատներին: Փետրվարի 4-ին «Հայկը» Արևելյան թատրոնում հանդիսություն պատվիրեց, որը բացվեց մասոնների երգով՝ ի պատիվ օթյակի: Այնուհետև ներկայացվեց ֆրանսիացի գրող և մասոն Վիկ-

---

[36] Կեանք և Արուեստ, 1935 թ. էջ 78–79:

[37] **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 153: Հայրենիք, 1955, դեկտեմբեր, թիվ 2, էջ 80:

[38] Հայրենիք, 1955, փետրվար, թիվ 2, էջ 79:

[39] **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 154:

[40] Հայրենիք, 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 95–96; **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 155:

[41] Հայրենիք, 1955, փետրվար, թիվ 2, էջ 79:

տոր Հյուգոյի[42] «Անջելո՝ Պադուայի բռնապետը» պիեսը, որտեղ գլխավոր դերերից մեկը կատարում էր Արուսյակ Փափազյանը[43]: Կ. Պոլսում «Odd Fellows»-ի հիմնադրած «Հայկ» մասնաճյուղի բարեգործական բնույթը կասկածի տակ առավ կրոնական ու հասարակական գործիչ Հովհաննես Տերոյենց-Չամուռճյանը: Իր խմբագրած «Երևակ» թերթում, իսկ մի փոքր ուշ նաև՝ իր թարգմանած «Խորհուրդ գաղտնի ընկերութեանց» գրքում գրում էր, որ մի խումբ երիտասարդների հիմնադրած «Odd Fellows»-ը ոչ թե փոխադարձ օգնության և եղբայրության ընկերություն է, այլ մասոնական օթյակ: Նա մասոններին անվանում է անկրոն և չարագործ մարդիկ, ովքեր պաշտում են սատանային և իրենց ընկերության «նպատակը գաղտնի կը պահեն», որպեսզի «ամեն մարդ չիասկընար, մեզ ալ չըգիտցողներուն կարգը կը դնեն»[44]: Մասոնության և «Odd Fellows» ընկերության մասին Հ. Չամուռճյանի «ցափռտուքներուն մտացի, խոհեմ ու քաղաքավար ոճով»[45] պատասխանեց արևմտահայության շրջանում մասոնության զարգացման գործում հայտնի Ս. Ազնավուրը: Նա Կ. Պոլսում գործող մասոնական յոթ օթյակներից հինգի հիմնադիրներից մեկն էր[46] և «կարկառուն դեմք մը Պոլսոյ և Զմիւռնիոյ մէջ»[47]: Մասոնության գիտակ Ս. Ազնավուրը «Մասիս» թերթի խմբագիր Կ. Ութուճյանին 1862 թ. օգոստոսի 25-ին հղած նամակում գրում է, որ Հովի. Տերոյենցը և Կ. Պոլսում լույս տեսնող անգլերեն Levant Herald թերթը սխալվում են՝ «Odd Fellows»-ը անվանելով մասոնական օթյակ, քանզի այն ոչ մասոնական է և ոչ էլ նրա մի ճյուղն է, այլ «բոլորովին զատ և անկախ ընկերութիւն մըն է»[48]: Դրանք միմյանց հետ նույնացնելու շփոթությունը գալիս է նրանից, որ երկու ընկերությունների նպատակը բարեգործական և եղբայրասիրական է: Ինչ վերաբերում է «Հայկ» ընկերությանը, ապա այն Մանչեստրի եղբայրական միության մի ճյուղն է և իր բնույթով նման է Կ. Պոլսում Անգլիայի դեսպանի հովանավորությամբ ստեղծված «Աստղ Արեւելից» ճյուղին: Ըստ Ս. Ազնավուրի՝ «Հայկի»

---

[42] Վիկտոր Հյուգոն բարձրաստիճան մասոն էր: Նա 1844–1885 թթ. «Սիոնի վանահայրության» օթյակի Մեծ վարպետ էր: Տե՛ս **Гоголицин Ю.М.** Тайные общества в истории человечества или кто правит миром, Ростов-на-Дону, 2010, с. 57.

[43] Մասիս, 1862, հունվարի 30:

[44] Չամուռճեան **Տէրոյենց Հ.,** Խորհուրդ Գաղտնի ընկերութեանց, Կ. Պոլիս, 1863, էջ 76–77:

[45] Հայրենիք, 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 93:

[46] Հայրենիք, 1954, դեկտեմբեր, թիվ 12, էջ 95:

[47] Հայրենիք, 1995, փետրվար, թիվ 2, էջ 79:

[48] Մասիս, 1864, ապրիլի 24, թիվ 636:

անդրանիկ նիստը կայացել է 1862 թ. օգոստոսի 21-ի երեկոյան, Բերա թաղամասի Փելես Քրեյմրի սրահում:

Ս. Ազնավուրը, թեպետ փորձում է ամեն կերպ հիմնավորել, որ «Հայկը» սոսկ բարեգործական ընկերություն է և անգամ տպագրում է ընկերության անդամակցության անդամավճարի չափերն ու պայմանները[49], այնուամենայնիվ, կամա թե ակամա, ակնարկում է դրա մասոնական լինելը: Նա յուրաքանչյուր հոդվածում ներկայանում է որպես օթյակի վարպետ՝ ստորագրելով՝ «Սերովբե Ազնավուր, նախագահ՝ հայ օթեակին»[50]:

Հովի. Տերոյենց–Զամուռճյանի հետ բանավեճում Ս. Ազնավուրին սատարեց «Մասիսի» խմբագիր Կ. Ութուճյանը: Մասոնության մասին Հ. Զամուռճյանի դատողությունները նա համարում է «չարախոսութիւն», իսկ «Երևակում» հրատարակած «տխմարութիւնները քանի մը ճիզվիթական թերթերու փսխունք »[51]:

Թեպետ Ս. Ազնավուրն ու Կ. Ութուճյանը ժխտում էին «Odd Fellows»-ի և նրա մասնաճյուղ «Հայկի» մասոնական լինելը, սակայն հակառակը անուղղակիորեն հաստատում է մասոն Ս. Թագվորյանը: Նա 1862 թ. մարտի 14(26)-ին Միքայել Նալբանդյանին հղած նամակում նա հայտնում էր «Հայկ» կամ «Օրիոն» անունով եղբայրական օթյակ ստեղծվելու մասին, որն իշխանություններից գաղտնի ժողովներ անելու թույլտվություն ունի և «ֆրեր մասոններուն եղբայրութեան պէս է»[52]: «Հայկի» օթյակ լինելու իրողությունը հիմնավորվում է նաև Ս. Ազնավուրի՝ 1863 թ. փետրվարի 5-ին Հ. Բուլվեր-Լիթոնին հղած նամակով, որտեղ նա ստորագրում է՝ «Ս. Ազնաւուր՝ Աւագ վարպետ «Արեւելքի աստղ» օթեակի եւ Գերիարգելի վարպետ «Հայկ» օթեակի»[53]:

1862 թ. նոյեմբերի 24-ին Կ. Պոլսում «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի արտոնագրով հիմնվեց ֆրանսախոս «L.Union d' Orient» (Արևելքի միություն) օթյակը, որին անդամակցում էին ֆրանսիացիներ, հայեր, հույներ և թուրքեր: Մեկ շաբաթ անց հիմնադիրներին միացավ Ս. Ազնավուրը, ով 1863 թ. դեկտեմբերի 29-ին ընտրվեց վարպետ: Օթյակի բացման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ 1863 թ. մարտի 23-ին, որին մասնակցեցին 5 հայ ազատ որմնադիրներ: Տարեվերջին օթյակն ուներ 34 անդամ, իսկ մեկ տարի

---

[49] Մասիս, 1862, նոյեմբերի 8, թիվ 560:

[50] Նույն տեղում:

[51] Մասիս, 1864, ապրիլի 25, թիվ 637:

[52] **Նալբանդյան Մ.,** Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Ե., 1983, էջ 362:

[53] **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 154:

անց՝ 65, որից 17-ը պոլսահայեր էին: Մինչև 1866 թ. «L.Union d' Orient» օթյակի անդամ դարձան սեղանավոր Մարտիրոս Մյուհենտիսյանը, բժիշկներ Ներսես Տատյանը, Ստեփան Ասլանյանը, Նահապետ Ռուսինյանը, Հովսեփ Շիշմանյանը (Ծերենց), վաճառական Արթին Նորատունկյանը, ծովային նախարարության թարգմանիչ Թորոս Գիսակը, «Մասիս» թերթի խմբագիր Կարապետ Ութուճյանը, կրթության նախարարության պաշտոնյա Հարություն Սարաֆյանը, ֆինանսների նախարարության խորհրդական Տիգրան Ալիքսանյանը, Բարունակ Ֆերուհխանը (Քրթիկյան) և ուրիշներ[54]: 1867 թ. այս օթյակի Մեծ վարպետը ֆրանսիացի Լուի Ամապլն էր, տեղակալը՝ Ս. Ազնավուրը[55]:

Առաջին հայախոս օթյակը Զմյուռնիայում ստեղծվեց 1864 թ. ապրիլի 27-ին, Հ. Բուլվերի նախաձեռնությամբ և հավանաբար Ս. Ազնավուրի թելադրանքով, «Անգլիայի մեծ օթյակի» հովանավորության ներքո: Հիմնադիրները «Հոմերոս» թիվ 806 օթյակի յոթ անդամներն էին: Նորաստեղծ օթյակը ստացավ «Տիգրան» թիվ 1014 անվանումը: Օթյակի բացումը մեծ շուքով տեղի ունեցավ 1864 թ. հունիսի 5-ին[56]: «Տիգրան» օթյակը գործեց 12 տարի՝ յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթ օրը կանոնավոր անցկացնելով նիստեր և ժողովներ: Վերջին անգամ օթյակում ընդունելություն կատարվել է 1876 թ. ապրիլի 27-ին: Այս օթյակի կարևորությունն այն էր, որ աշխատանքային լեզուն հայերենն էր, թեպետ օթյակն ազգային կազմով միատարր չէր: Իր գործունեության տարիների ընթացքում օթյակն ունեցել է 118 անդամ, որոնցից 108-ը՝ հայ, 7-ը՝ թուրք, 3-ը՝ հույն: «Տիգրան» օթյակին անդամակցել են արևմտահայ մի խումբ անվանի հասարակական գործիչներ, լրագրողներ, ազգասեր, գրասեր և արվեստագետ մարդիկ: Նրանցից Կարապետ Արապյանը հայտնի մեծահարուստ և մեկենաս էր, Հարություն, Կարապետ և Ստեփան Տետեյան եղբայրները՝ տպագրիչներ ու թարգմանիչներ: Օթյակի երևելի անդամներից էին Մատթեոս Մամուրյանը, «Ծաղիկ» հանդեսի խմբագիր Գրիգոր Չիլինկիրյանը, «հայ օրագրութեան մեջ եզական պատկեր»[57] «Արշալույս Արարատյան» թերթի «բազմարդյուն» խմբագիր Ղուկաս Պալդազարյանը,

[54] Հայրենիք, 1955, հունիս, թիվ 6, էջ 94, **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 157–158:

[55] Կեանք և Արուեստ, Զ տարի, 1936, հոկտեմբեր, էջ 226–227:

[56] Հայրենիք, 1955, փետրվար, թիվ 2, էջ 79–81:

[57] Արևելյան մամուլ, 1878, հունիս, էջ 65–66:

հանրահայտ Մեսրոպ Նուպարյանը և շատ ուրիշներ[58]: «Տիգրան» օթյակը, որի անդամներից 70-ը վաճառականներ էին, զբաղվել է նաև բարեգործությամբ, Զմյուռնիայի թեմերի հայ բնակչության համար կատարել դրամահավաք[59]:

«Տիգրան» օթյակը «եղբայրական» հարաբերություններ է պահպանել օտարերկրյա մի շարք օթյակների ու անվանի մասոնների հետ: 1875 թ. օթյակի հյուրը եղել է Ուելսի արքայազն, Անգլիայի ապագա թագավոր Էդուարդ VII-ը, ով «Անգլիայի մեծ օթյակի» Մեծ վարպետն էր[60]: Արքայազնին օթյակում ընդունել են մեծ հանդիսությամբ ու մասոնական պատշաճ արարողակարգով, իսկ երեկոյան նրա պատվին մեծ խնջույք են կազմակերպել ու հայկական երգեր կատարել: «Տիգրան» օթյակն իր գործունեությունը վերջնականապես դադարեցրել է 1894 թ. հունիսի 6-ին[61]:

1864 թ. Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում հիմնադրվեց «Արամ» անունով «Odd Fellows» ընկերության նոր ճյուղ: Ս. Ազնավուրը գրում է, որ թուրքական իշխանություններն այս ընկերության գործունեության ոլորտը արտոնել էին[62]: 1865 թ. կրկին անդրադառնալով «Odd Fellows»-ին և Հովհ. Տերոյենց Չամուռճյանի գրքում գտած «անհեթեթ գրուածներին», Ս. Ազնավուրը բացատրում է մասոնական օթյակների «ազնիվ» նպատակները[63]: Ս. Ազնավուրը չէր թաքցնում, որ երկար ժամանակ փափագում է, որ հայությունը մասոնական ընկերության դեմ ունեցած «անտեղի նախապաշարումները թոթափելով, եղբայրական հիմանց վրայ ընկերութիւն մը հաստատէր», որն ուղղված չլիներ պետության, կրոնի, խղճի և աստվածապաշտության դեմ, ինչպես «ոմանք տգիտաբար կ՛ երեւակայէն»[64]: Ս. Ազնավուրի փափագը իրականություն դարձավ 1866 թ. փետրվարի 22-ին, երբ Կ. Պոլսի Բերա թաղամասի Ասմալը Մեսջիդ փողոցի թիվ 32 տանը, որը պատկանում էր իտալական «Italia Risorta» օթյակին, թվով 8 հայ մասոններ իր գլխավորությամբ հիմնեցին «Սեր» հայ-

[58] Հայրենիք, 1955թ. փետրվար, թիվ 2, էջ 82–83, Կեանք և Արուեստ, 1935, էջ 73, **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 161:

[59] Արշալոյս Արարատեան, 1867, ապրիլի 29, թիվ 804:

[60] Տե՛ս **Морган П.** Секреты масонов, М., 2008, с. 76; **Карпачев С.П.** Краткий очерк истории западноевропейского и русского масонства..., с. 478; **Ридли Дж.,** նշվ. աշխ., էջ 317–320:

[61] Կեանք և Արուեստ, 1935, էջ 73, Հայրենիք, 1955, փետրվար, թիվ 2, էջ 81:

[62] Մասիս, 1864, օգոստոսի 22, թիվ 654:

[63] Նույն տեղում, 1865, մայիսի 1, էջ 95:

[64] Նույն տեղում, 1862, սեպտեմբերի 1, թիվ 551:

կական օթյակը: Որոշվեց, որ օթյակը պետք է լինի հայախոս և ենթակա «Ֆրանսիայի Մեծ Արևելքին»:

1866 թ. մայիսի 7-ին «Ֆրանսիայի Մեծ Արևելքը» արտոնեց «Սեր» օթյակի գործունեությունը: Դեկտեմբերի 22-ին կայացած «Սեր» օթյակի հիմնադրման հանդիսությանը, բացի հիմնադիր 18 անդամներից, մասնակցում էին նաև Կ. Պոլսում գործող անգլիական, ֆրանսիական և իտալական գրեթե բոլոր օթյակների գերհարգելի վարպետները, Անգլիայի հյուպատոսը, ֆրանսիական դեսպանատան առաջին քարտուղարը և ուրիշներ: Նիստը բացեց նախագահող Ս. Ազնավուրը, ով ընտրվեց օթյակի գերհարգելի[65]:

«Սեր» օթյակի ստեղծումը ինքնանպատակ չէր: Այն հիմնվեց ոչ թե «խավարյալների ու լուսավորյալների», «ներսէն-դուրսէնների», «աջակողմների և ձախակողմների» պայքարը շարունակելու համար, այլ ամենից առաջ ազգային միության, համերաշխության, եղբայրության, փոխօգնության և լուսավորության գաղափարներ տարածելու համար: Հայ մասոնները մեծ հույսեր էին կապում այս օթյակի գործունեության հետ՝ դիտարկելով այն «իբրև հայկական մի բարձրագույն դպրոց», որը կլրացնի «բնական գիտությունների և փիլիսոփայության մեծ պահանջը հայերի մեջ»[66]՝ անելով այն ամենը, ինչը չկարողացան «ոչ որևէ հայ ընկերություն, ոչ եկեղեցին, ոչ Ազգային Սահմանադրական ժողովը»[67]:

«Սեր» օթյակն իր գործունեության ընթացքում անդամագրել է մեծ թվով հասարակական և պետական գործիչների, մտավորականների, աստիճանավորների, արվեստագետների ու վաճառականների: Հիմնադրումից երկու տարի անց «Սեր» օթյակն ուներ 64, իսկ 1869 թ.՝ 80 անդամ: Հետագայում նրանց թիվը պակասեց, բայց 1880 թ. կրկին հասավ 80-ի[68]: Օթյակն ընդհանուր առմամբ ունեցել է 168 անդամ, որից 162-ը հայեր էին, հինգը՝ թուրք, մեկը՝ հնդիկ[69]: Օթյակի նշանավոր դեմքերից էին Թուրքիայի արտաքին գործե-

---

[65] Հայրենիք, 1937, ապրիլ, թիվ 6, էջ 127–129: Կեանք և Արուեստ, 1935, էջ 75: **Պէյլէրեան Ա.,** նշվ. աշխ., էջ 166–167:

[66] Հայրենիք, 1937, մարտ, թիվ 5, էջ 83:

[67] Նույն տեղում, էջ 85:

[68] Կեանք և Արուեստ, 1935, էջ 76:

[69] **Պէյլէրեան Ա.,** ԺԹ դարու Հայկական «Սէր» օթեակի անդամ Ազատ-Որմնադիրներու ընդհանուր ցուցակ: Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրութ, 2003, էջ 423:

րի նախարար Գ. Նորատունկյանը[70], պետական գանձապետարանի տնօրեն Լևոն Փափազյանը, պալատական մատակարար Արթին Ասլանյանը, հայ բողոքականների ազգապետ Ղազարոս Տավուտը և շատ ուրիշներ[71]: 1867 թ. մարտի 21-ին «Սեր» օթյակին անդամագրվեց բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը, որի «Եղբայր եմք մեք» բանաստեղծությունը հայ օթյակների համար ծայրահեղորեն քմահաճ մեկնաբանությամբ (բանաստեղծը նկատի ուներ դավանական հակասությունների հաղթահարումը) դարձավ մասոնական օրհներգ[72]: «Սեր» օթյակը կանոնավոր աշխատեց մինչև 1890 թ., բայց գործելուց դադարեց 1894 թ. ամռանը Սասունում տեղի ունեցած հայության կոտորածից հետո, երբ թուրքական իշխանություններն արգելեցին հայկական միությունների հավաքույթները: 1895 թ. հուլիսի 3-ին Հ. Մերեեմգուլին «Ֆրանսիայի Մեծ Արևելքին» գրեց. «Յարգելի Սէր օթեակը իր վերջին հանգիստը մտաւ: Բոլոր վաւերաթուղթերը ապահով տեղ պահուած են»[73]: 1898 թ. «Սեր» օթյակը վերջնականապես փակվեց:

1872 թ. Զմյուռնիայում «Իտալիայի Մեծ Արևելք» օթյակի հովանավորությամբ հիմնվեց «Արմենակ» օթյակը, որի արձանագրություններն ու անդամների ցուցակներն անհետացել են: 1870–1880-ական թվականներին մասոնության գաղափարական ազդեցությունը նկատելի էր «Միություն ի փրկություն», «Սև խաչ», «Պաշտպան հայրենյաց», «Հայրենասերների միություն» և «Երիտասարդ Հայաստան» գաղտնի կազմակերպությունների վրա, որը հայ պատմագրության մեջ դեռևս ուսումնասիրված չէ: Մասոնական օթյակների անդամ էին Հնչակյան, Արմենական, Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունների հիմնադիրներից ու գործիչներից ոմանք:

1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո Կ. Պոլսում եվրոպական օթյակների նախկին գերհարգելի վարպետները հիմնեցին «La Turguie» թիվ 1049 օթյակը՝ «Շոտլանդական Մեծ օթյակի» հովանու ներքո: Օթյակի հիմնա-

---

[70] Գաբրիել Նորատունկյանը մինչ այդ Փարիզի «La clement Armitie» ֆրանսիական օթյակի անդամ էր:

[71] Հայրենիք, 1937, մայիս, թիվ 7, էջ 122–130, 1995, թիվ 7, էջ 95–98: Կեանք և Արուեստ, 1935, էջ 76: Հայկազեան հայագիտական հանդէս, ԻԱ հատոր, Պէյրութ, 2001, էջ 167–168:

[72] Հայրենիք, 1937, մայիս, թիվ 7, էջ 122–123, 1937, հունիս, թիվ 8, էջ 129–133, 1937, հուլիս, թիվ 9, էջ 117, 1995, հունիս, թիվ 6, էջ 95:

[73] Հայրենիք, 1955, ապրիլ, թիվ 4, էջ 101: Հայկազեան հայագիտական հանդէս, 2001, էջ 171–172:

դիրներից երկուսը հայ էին՝ բարձրաստիճան մասոններ Ս. Ազնավուրը և Եդիա Հոշյանը: Վերջինս իտալական «Calcedonia» օթյակից էր, որը գործում էր «Իտալիայի Մեծ Արևելք» օթյակի հովանու ներքո: Ի թիվս այլազգիների, հայերը զբաղեցնում էին օթյակի առաջին վերահսկողի, քարտուղարի և գանձապահի բարձր պաշտոնները: «Թուրքիա» օթյակը գործեց մինչև 1914 թ. օգոստոս և Առաջին աշխարհամարտը սկսվելու հետ դադարեցրեց իր գործունեությունը[74]: Թուրքական օթյակներից մեկի գերհարգելի վարպետը հրապարակագիր և «Սաբահ»-ի խմբագիր Տիրան Քելեկյանն էր[75]: 1909 թ. օգոստոսին հիմնված «Թուրքիայի Մեծ Արևելք» օթյակի 14 գերհարգելի վարպետներից մեկը 33 աստիճանի մասոն Միքայել Նորատունկյանն էր[76]:

1909 թ. Խարբերդում հայ մասոնները հիմնեցին «Եփրատ» թիվ 1078 հայկական օթյակը, որի հիմնադիրներն Ամերիկայի Միացյալ Նահանգներից և Բեյրութից եկած ութ հայ մասոններ էին: «Եփրատ» օթյակի հիմնադիր մասոնները դիմեցին «Շոտլանդական Մեծ օթյակին» և գործունեության արտոնագիր ստացան: Օթյակի առաջին գերհարգելի վարպետ ընտրվեց հյուսեյնիկցի Սերովբե Վարդապետյանը: Օթյակը գործեց հինգ տարի, որի բոլոր անդամները (բացառությամբ Կարապետ Սողիկյանի) դարձան 1915 թ. ցեղասպանության զոհեր[77]:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո մի խումբ հայ մասոններ որոշեցին հայկական նոր օթյակ հիմնել, որն «իր պատուաբեր դիրքն ունենայ յօգուտ հայ ազգին»[78]: 1918 թ. դեկտեմբերի 4-ին յոթ մասոններ «La Turguie» օթյակից և երեք մասոններ անգլիական «Ashton Eagerton» թիվ 2793 օթյակից հիմնադրեցին «Հայաստան» թիվ 1185 անունով օթյակը[79]: Նրանք միաձայն գերհարգելի վարպետ ընտրեցին Թորգոմ Պոյաճյանին[80]:

1919 թ. մայիսի 1-ին Շոտլանդիայի Մեծ Օթյակը վավերացրեց «Հայաստան» թիվ 1185 օթյակի արտոնագիրը, իսկ 1919 թ. դեկտեմբերի 3-ին հայտ-

---

[74] Կեանք և Արուեստ, 1935, էջ 80, 1936, հոկտեմբեր, թիվ 8, էջ 228: Հայրենիք, 1955 դեկտեմբեր, թիվ 12, էջ 75:

[75] Կեանք և Արուեստ, 1935, էջ 80: Հայրենիք, 1955, դեկտեմբեր, թիվ 12, էջ 81:

[76] Հայկազեան հայագիտական հանդէս, ԻԱ հատոր, Պէյրութ, 2001, էջ 173:

[77] Հայրենիք, 1955, թիվ 7, էջ 99–101: Կեանք և Արուեստ, 1935, էջ 77: Պայքար, 1953, թիվ 6: Հիւսէյնիկ, խմբ. Կ.Յ. Աhարոնեան, Պոսթըն, 1956, էջ 106–110:

[78] Հայրենիք, 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 95:

[79] Հայրենիք, 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 94–95: Հայրենիք, 1955, դեկտեմբեր, թիվ 12, էջ 75: Կեանք եւ Արուեստ, 1935, էջ 77:

[80] Հայրենիք, 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 95:

նեց, որ թուրքական տարբեր օթյակների անդամ հայերը չեն կարող համալրել «Հայաստան» օթյակի շարքերը: Օթյակի անդամներին չէր թույլատրվում մասոնական գործունեություն ծավալել և հարաբերվել «Թուրքիայի Մեծ օթյակի» անդամների հետ[81]:

1185 Օթյակի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1920 թ. հոկտեմբերի 18-ի երեկոյան՝ Կ. Պոլսի Բերա թաղամասի Քուլօղլու փողոցի թիվ 1 շենքում՝ երկու հարյուրից ավելի հյուրերի ներկայությամբ: Հայ մասոնության պատմության մեջ առաջին անգամ օթյակն իր աշխատանքն սկսեց Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշի առկայության պայմաններում: 1923 թ. օթյակը գրեթե դադարեց գործելուց՝ իր անդամների մեծ մասի Կ. Պոլիսը լքելու պատճառով[82]:

1919 թ. Կ. Պոլսում հիմնվեց «La Renaissance» (Վերածնություն) ֆրանսախոս օթյակ, որը գործեց ընդամենը երեք տարի: Հիմնադրման պահին օթյակի Մեծ վերահսկող ընտրվեց Հակոբ Նառկիլեճյանը: Օթյակն ուներ 15 հայ անդամ, որոնց մեջ ամենաերևելի մասոնը Գերհարգելի վարպետ Գաբրիել Նորատունկյանն էր: Օթյակը հրատարակում էր «Ռենեսանս» թերթը, որի խմբագիրը Տիգրան Չալյանն էր[83]:

Հայությունը մասոնական գործունեությամբ զբաղվել և ազատ որմնադիրների օթյակները համալրել է ոչ միայն Թուրքիայում, այլև աշխարհի բազմաթիվ երկրներում: Մեզանում այս հարցն առայժմ հիմնավոր ուսումնասիրված չէ, իսկ մեզ հասած փաստերը կցկտուր են: Հայտնի է, որ 1862 թ. հուլիսի 12-ին մի քանի հայեր մասնակցել են Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում անգլիախոս «Սուրբ Հովհաննես» օթյակի հիմնադրմանը: 1866 թ. Ալեքսանդրիայում հիմնվել է նաև «Կրասիա» հունախոս օթյակ, որին անդամագրվել են նաև հայեր: Այս օթյակը 1890 թ. տեղափոխվել է Կահիրե, որի կազմում նույնպես հայեր կային: Նրանք մասոնական գործունեություն են ծավալել նաև 1871 թ. ստեղծված «Արևելքի աստղ» արաբախոս օթյակում: Հայերը մասնակցել են նաև Խարտումի, Պորտ Սայիդի, Կահիրեի, Սուեզի օթյակներին: 1911 թ. Ջիբութիում հիմնված «Ջիբութի-Տիրե-Տավա» ֆրանսախոս օթյակի հիմնադիրների թվում եղել են հայ Բարթողը և Պետրոս Վարժապետյանը: Այս օթյակը գործել է մինչև 1929 թվականը: Հայերը մասնակցել են նաև Սիրիայում, Պա-

[81] Հայրենիք, 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 96:

[82] Կեանք եւ Արուեստ, 1935, էջ 78: Հայրենիք, 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 99–100:

[83] Հայրենիք, 1955, դեկտեմբեր, թիվ 12, էջ 75–76; Կեանք եւ Արուեստ, 1935, էջ 80:

ղեստինում, Լիբանանում գործող արաբախոս և ֆրանսախոս ութ օթյակների աշխատանքներին[84]:

1919 թ. հունիսի 23-ին «Ֆրանսիական Մեծ Արևելք» մայր օթյակի արտոնագրով Փարիզում հիմնվեց «France Arménie» (Ֆրանսիական Հայաստան) ազատ որմնադրության օթյակ: Օթյակի հիմնադիրներն էին Մ. Մարաշլյանը, Սուքյանը, Քյուրքչյանը, Կարագյանը և Ներսիսյանը: Այս օթյակը ֆրանսախոս էր, որի ինչպես հիմնադիր անդամները, այնպես էլ հետագայում համալրած հայ «եղբայրները» Փարիզի նման մասոնական հզոր կենտրոնում միշտ «վառ էին պահում հայ անունը Ազատ Որմնադիրներու աշխարհին մէջ»[85]: 1949 թ. հուլիսին «Ֆրանս Արմենի» օթյակը մեծ շուքով Փարիզի «Cercle Républicain» շքեղ սրահում նշել է իր գործունեության 30-ամյակը[86]: Ֆրանսիական «Grande Loge Nationale» (Ազգային մեծ օթյակ) օթյակի արտոնագրով Փարիզում հիմնվել է «La Confiance» օթյակը, որին անդամակցել են մի քանի հայեր[87]: 1926 թ. «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի հովանու տակ հիմնված «Etoile du Nord» (Հյուսիսային Աստղ) ռուսախոս օթյակում, ի թիվս ռուսական կառավարության նախկին մի խումբ նախարարների և դեսպանների, ընդգրկված էին նաև հայ քաղաքական գործիչներ՝ Ալ. Խատիսյանը, Մ. Տեր-Պողոսյանը, Ստ. Նավասարդյանը, Ա. Ջամալյանը, Գ. Ջանշյանը, Ռ. Բերբերյանը, Ս. Վրացյանը, Վ. Փափազյանը և Հովհ. Զավրյանը[88]: 1990-ական թվականների սկզբում «Ֆրանսիայի Մեծ օթյակը» Փարիզում արտոնեց «RL France-Arménie» թիվ 1381 օթյակի գործունեությունը:

Հայկական մասոնական օթյակ էր գործում Լոնդոնում, որը հիմնադրվել էր 1987 թ., թվով 14 հայ ազատ որմնադիրների կողմից և կոչվում էր «Արարատ լեռ» թիվ 9239 օթյակ (Mount Ararat Lodge N: 9239)[89]:

Հայկական մասոնական մի քանի օթյակներ հիմնվել են Արգենտինայում: Այստեղ Եվրոպայից, Մերձավոր Արևելքից և Հյուսիսային Աֆրիկայից ներգաղթած թվով 11 հայ մասոններ 1957 թ. օգոստոսին հիմնեցին «Ararat» (Արարատ) թիվ 404 օթյակը: Այն ստեղծվեց «Արգենտինայի ազատ և ընդունված մասոնների գերագույն օթյակի» (Gran Logia de la Argentina de Libres y

[84] Կեանք եւ Արուեստ, 1936, հոկտեմբեր, թիվ 8, էջ 229:

[85] Հայրենիք, 1955, դեկտեմբեր, թիվ 12, էջ 76–77, Կեանք եւ Արուեստ, 1935, էջ 81:

[86] Ապագա, 1949, հուլիսի 9:

[87] Հայրենիք, 1956, հունվար, թիվ 1, էջ 88:

[88] Նույն տեղում, էջ 88–89:

[89] Asbarez.com/am/108703/

Aceptados Masones) ներքո: Տարիներ անց այս օթյակի անդամները հասան մասոնության ամենաբարձր աստիճանների և դարձան Արգենտինայի մայր օթյակի ղեկավարներ: Այս օթյակը գործում է մինչ օրս և իրականացնում է բարեգործական բազմաթիվ օգնություններ[90]: 2001 թ. Արգենտինայում հիմնվեց «Urartu» (Ուրարտու) թիվ 442 օթյակը:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայերը մասոնությանն անդամագրվել են դեռևս XVIII դարում: 1799 թ. դեկտեմբերի 24-ին Հովի. Արապյան անունով մի հայ անդամակցել է «Washington» թիվ 59 օթյակին: Նա 1802 թ. դարձել է Ֆիլադելֆիայի «Colombia» թիվ 91 օթյակի գերհարգելի վարպետ: XX դարի սկզբին Նյու Յորքի «Sylvan Grove» թիվ 295 օթյակն ունեցել է 40–50 հայ անդամներ, իսկ «Manhattan» թիվ 62 օթյակի գերհարգելի վարպետներից երկուսը հայեր էին: 1916 թ. աշնանը Նյու Յորքի Հայ բողոքական եկեղեցու հիմնադիր հովիվ, 32-րդ աստիճանի մասոն Հայկակ Խաղոյանը 5 այլ հայ համախոհների հետ միասին հիմնեց «Վարդանանց Ասպետների» ուխտ, որի «տնօրեն ժողովը» համարժեք էր ամերիկյան և անգլիական մեծ օթյակների բարձրագույն մարմնին:

Միչիգան նահանգի Մեծ Օթյակի «Masonic World» պաշտոնաթերթի 1952 թ. հուլիս-օգոստոսի համարը տեղեկացնում է, որ հունիսի 25-ին Դետրոյթում հիմնվել է «Արարատ» թիվ 582 օթյակը: Գերհարգելի վարպետ ընտրվել էր Ժան Բաբելը, Մեծ վերահսկող՝ Ժան Նահապետյանը, Կրտսեր վերահսկող՝ Հենրի Քյուրճյանը[91]:

1994 թ. դեկտեմբերի 10-ին «Կոլումբիայի օկրուգի Մեծ օթյակի» հայ մասոնները ԱՄՆ-ում հիմնեցին «Hayastan» թիվ 94 օթյակը: 1999 թ. դեկտեմբերի 16-ին ամերիկահայ մասոնների «Մասիս» թիվ 99 օթյակը «Կոլումբիայի օկրուգի Մեծ օթյակը» վերանվանեց «Մտահայեցություն» օթյակ, որը պիտի նախապատրաստական աշխատանքներ իրականացներ Հայաստանում Մեծ օթյակ ստեղծելու ուղղությամբ:

Հայկական մասոնական օթյակներ են գործում նաև Ռուսաստանի Դաշնությունում: Մոսկվայում 1998 թ. նոյեմբերի 28-ին հիմնվել է «Հյուսիսափայլ» թիվ 9 օթյակը, 2001 թ.՝ «Սեր» օթյակը, իսկ 2013 թ. հուլիսի 5-ին՝ թիվ 442 օթյակը, որոնք իրենց աշխատանքն իրականացնում են ռուսերենով և հայերենով: Այս օթյակները գործում են «Ռուսաստանի Գերագույն օթյակի» հովանու

[90] Տե՛ս www.louysworld.com/archives/1082

[91] Հայրենիք, 1956, հունիս, թիվ 1, էջ 90:

ներքո[92]: 2001 թ. մայիսին Վաշինգտոնում հրավիրվեց հայ մասոնների համաշխարհային համագումար, որին մասնակցում էին հայ ազատ որմնադիրներ ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Արգենտինայից և Լիբանանից: Նրանց ջանքերը պսակվեցին հաջողությամբ և հայկական մեծ օթյակ ստեղծելու հարցում իրենց համաձայնությունը տվեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների «Կոլումբիայի օկրուգի Գերագույն օթյակը» «Ֆրանսիայի Ազգային Գերագույն օթյակը» և «Ռուսաստանի Գերագույն օթյակը»: Վաշինգտոնում գործող «Մասիս» թիվ 99 օթյակի վարպետ Քրիստոֆեր Սահակյանը ընտրվեց առաջիկայում ստեղծվելիք «Հայաստանի Մեծ օթյակի» Մեծ վարպետ: Այս օթյակը «Հայոց Գերագույն օթյակ» անվանումով 2002 թ. մարտի 5-ին ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվեց որպես «Ազատ և Ընդունված քարտաշներ» հասարակական կազմակերպություն: Հունիսի 10-ին այն վերանվանվեց «Ազատ և ընդունված քարտաշների գերագույն օթյակ հայոց»: Օթյակի հանդիսավոր օծումը տեղի ունեցավ 2002 թ. հուլիսի 30-ին՝ Երևանի Մարիոթ հյուրանոցում:

Մասոնական նոր մայր օթյակի գործունեությունն օրինական և լիարժեք դարձնելու համար ԱՄՆ, Ֆրանսիայի և Ռուսաստանի Մեծ օթյակները 2009 թ. իրենց հովանու տակ գտնվող մեկ օթյակ փոխանցեցին «Հայոց Գերագույն օթյակին»: Ներկայումս «Հայոց Գերագույն օթյակի» հովանավորության տակ գտնվում են 11 օթյակներ: Հայոց օթյակի իրավասության տակ են մեկ դաստիարակչական ուսումնական օթյակ՝ Երևանում և երկու օթյակ՝ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում: 2004 թ. Հայոց օթյակը Երևանից ոչ հեռու գնել է երեք հազար քմ հողամաս, որտեղ նախատեսում է «Հայկական ոգով և որմնադրական ոճով մի գեղեցիկ» տաճար կառուցել[93]: Ըստ «Հայոց Գերագույն օթյակի» համահիմնադիր և նախկին Գերագույն վարպետ Արմեն Ջանյանի՝ ներկայումս աշխարհում հայ մասոնների թիվը կազմում է 2500, որից 200-ը գտնվում են Հայաստանի Հանրապետությունում[94]:

Հայաստանի Հանրապետությունում մասոնական օթյակների հիմնումը վկայում է այն մասին, որ ազատ որմնադիրների գաղափարները և գործունեության հիմնարար սկզբունքները հայության շրջանում չեն կորցրել իրենց կենսունակությունը:

---

[92] **Карпачев С.** Масоны. Словарь, с. 373, 393.

[93] glofarmenia.org/freemasons.in.armenia/

[94] www.mediamax.am/am/news/interviews/10590

MASONRY AMONG ARMENIANS

MOVSISYAN F.

Summary

The information that we have about the Armenians' first contact with masonry dates back to the second half of the 18th century. In 1848, under the influence of the European revolutionary, national, liberation struggle and liberal ideas, a number of representatives of intellectuals from Western Armenia joined the masonry during their stay in Europe. After the East War (Crimea), the policy on "europeanizing Turkey" carried out by the powerful countries and the launch of the second phase of the tanzimat created favourable conditions for spreading masonry among Christians. In the 1850s, Europeans founded permanent lodges in Constantinople, Smyrna and Aleppo, and dozens of Western Armenians joined them. Of all these Armenians, the ideologists and political figures of the national constitutional movement, who had already been canonized as masons in Europe, became the main missionaries of masonic ideas. The first Armenian speaking lodge called "Tigran" N: 1014 was founded in Smyrna, in 1864. The most well-known lodge known in the history of Armenian masonry called "Ser"(Love) was formed in Constantinople, in 1866. The third Armenian lodge "Yeprat" N: 1078 was formed in Kharberd, in 1909. The fourth "Armenia" N: 1185 was formed in Constantinople, in 1919. After the First World War, Armenians became members of masonic lodge in some countries of the Near East, Europe, America and Russia. In 2002, with the warrant of the Great Lodges of the USA, France and Russia, "The Armenian Great Lodge" or "The Armenian Supreme Lodge" was founded in Yerevan, under the protection of which 11 masonic lodges are currently operating.

МАСОНСТВО СРЕДИ АРМЯН

Мовсисян Ф.

Резюме

Сведения о первых связях масонства с армянами относятся ко второй половине XVIII века. Под влиянием идей европейской революции, нацио-

нально-освободительной борьбы 1848 года и либерализма группа западноармянских интеллигентов, временно обосновавшихся в Европе, пополнила ряды масонства. По завершении Восточной (Крымской) войны политика великих держав, направленная на «европеизацию» Турции и формирование второго этапа танзимата, создала благоприятные условия для распространения масонства среди христианских народов. В 1850-е гг. европейцы в Константинополе, Смирне и Алеппо основали масонские канонические ложи, членами которых стали десятки западных армян. Основными пропагандистами масонских идей стали идеологи и деятели национального конституционного движения, которые до этого были посвящены в масоны в Европе. Первая армяноязычная ложа под названием «Тигран» N 1014 была основана в 1864 году в Смирне. В 1866 году в Константинополе сформировалась самая известная в истории армянского масонства ложа «Сер» (Любовь), членами которой были прославленные представители западноармянской интеллигенции. Третья армянская ложа – «Евфрат» N 1078 была основана в 1909 году в Харберде. В 1919 году в Константинополе создали четвертую армянскую ложу – «Армения» N 1185. После Первой мировой войны армяне вошли в ложи вольных каменщиков в ряде стран Ближнего Востока, Европы, Америки, а также России. В 2002 году в Ереване при поручительстве Великих лож США, Франции и России была основана «Великая Ложа Армении», или «Армянская Верховная Ложа», под патронажем которой в настоящее время действуют 11 лож.

АРМЯНЕ В РУССКОМ ТУРКЕСТАНЕ: РАССЕЛЕНИЕ И ВКЛАД В РАЗВИТИЕ КРАЯ

АЛЕКСАНЯН О.
Hovhannesaleqsanyan@ysu.am

Во второй половине XIX века интересы российского капитала и обострение противоречий с Великобританией в Центральной Азии и Каспийском регионе ускорили завоевание Средней Азии, ставшее приоритетной задачей внешней и экономической политики Российской империи. Завоевание Туркестана (в 1867 г. император Александр II утвердил проект об образовании Туркестанского генерал-губернаторства) привело к развитию промышленности в этом регионе и бурному росту различных промыслов. В организации промыслов важную роль сыграли армянские промысловики и торговцы. Туркестанское генерал-губернаторство стало плацдармом для дальнейшей экспансии в регионе, а на генерал-губернатора были возложены полномочия по решению политических, пограничных и торговых дел. Переселяясь в Закаспийскую область, армяне обычно селились в местах укреплений русских войск, где вскоре возникали городские поселения. К 1883 г. армяне составляли весьма значительную часть населения городских поселений области. В Красноводске армяне составляли 25,5% населения города, в Кизил-Арвате – 26,3%, в Асхабаде – 41,7%, в Мерве – 18,3%[1]. В 1890–1895 гг. численность армян в области изменилась незначительно. К 1892 г. она снизилась до 2.871 чел. Спасаясь от вспыхнувшей в области эпидемии холеры, часть армян покинула Закаспий, но уже к 1893 г. число армян в области составляло свыше 3.500 чел. В последующие годы численность армянского населения в области возросла. В 1897 г. в Закаспийской области проживало уже 4.256 армян, из них 3.975 человек – в городах и 261 – на территории уездов. В 1900 г. в Асхабаде проживало

[1] См.: **Григорьянц В.** Переселение армян в Закаспийскую область (конец XIX – начало XX вв.) (Լրաբեր հասարակական գիտությունների, 1977, № 2, с. 64–73).

3.399 армян, в Красноводске – 835, в Кизил-Арвате – 678, в Мерве – 549.

По данным источников, армянское население в области составляло 6.136 человек или 12,4% от числа всего пришлого населения области. Уже к началу второго десятилетия XX в. численность армян превысила 11.000 человек и составила 9,9% от числа пришлого населения области и 2,4% всего населения, включая и коренное туркменское население. При этом в Асхабаде проживало 6.667 армян, в Красноводске – 682, в Мерве – 2.140. Ко второму десятилетию XX в. по подсчетам А.М. Матвеева в Туркестане проживало около 20–21 тыс. армян[2]. Выходцы из Армении стали первыми переселенцами в Средней Азии. Они переселялись как из Закавказья, так и из западноармянских областей Османской империи (в результате геноцида армян). Наибольший приток армянского населения наблюдался в связи со строительством железной дороги Красноводск-Самарканд и во время Первой мировой войны. По данным первой Всероссийской переписи населения, в четырех областях Туркестанского края численность армянского населения к 1897 г. составляла 4.862 человека. Из них 89% (4.317 человек) обосновались в городах, 11% (546 человек) – в сельской местности[3]. Большая часть армян (4799 человек или 98,7%) являлась прихожанами Армянской Апостольской церкви[4]. Основная часть армян (4.206 человек) была сосредоточена в городах Закаспийской области (Ашхабаде, Мерве, Красноводске, Узун-Аде). К 1909 г. армянское население Закаспийской области увеличилось до 11.007 человек.

Краевые власти относились к армянским переселенцам довольно-таки благожелательно, поскольку армяне были христианами, и российская ад-

[2] **Матвеев А.М.** Зарубежные выходцы в Туркестане на путях к Великому Октябрю (1914 – октябрь 1917 гг.), Ташкент,1977, с. 15–16.

[3] **Галстян М.С.** Численность армянской общины в Русском Туркестане. Страны Запада и Востока: проблемы становления и модернизация политических, экономических и культурных форм развития, сб. науч. трудов междунар. науч.- практ. конф., Республика Башкортостан, г. Стерлитамак, 14 ноября 2016 г., Стерлитамак, 2016, с. 116–118.

[4] Ասոյան **Լ.Ա.** Հայերը Ռուսական կայսրությունում 19-րդ դարի վերջին. Պատմաժողովրդագրական հետազոտություն (ըստ 1897 թվականի Համառուսաստանյան մարդահամարի տվյալների), Գյումրի, 2010, էջ 109:

министрация видела в них своих союзников в этом мусульманском регионе. Помимо этого, русские офицеры и чиновники, в большинстве своем не владевшие языком местного населения, вынуждены были прибегать к услугам переводчиков-армян, свободно говоривших на русском, турецком или персидском языках. «Переводчики при чинах военно-народного управления, – с нескрываемой досадой писал Куропаткин[5],– по преимуществу тоже армяне». Армяне активно включились в хозяйственную жизнь всего региона. В городах Туркестанского края появились доходные дома и рестораны, магазины, бани, ремесленные мастерские и фабрики, винодельни, бани, гостиницы, основанные армянами[6]. Вот что писала одна из московских газет об армянских переселенцах: «Этот честолюбивый и очень способный народ, несмотря на свою, сравнительно с другими жителями Туркестана, малочисленность, играет выдающуюся роль как в экономическом, так и в культурном отношении»[7]. Когда же поток переселенцев стал возрастать и армяне Кавказа, Турции и Ирана стали заселять Зарафшан, Фергану, Ташкент, российские власти сочли необходимым ограничить его. Объяснялось это опасением, что ловкие, опытные армянские купцы и предприниматели вытеснят русский элемент из экономики Туркестанского края. Несмотря на ввод ограничений, число армянских переселенцев в Туркестанском крае продолжало расти, расширялась и сфера их деятельности. Много армян находилось на государственной и военной службе. «Пришли русские войска, за ними потянулись армяне, открылись лавчонки; прибыли еще войска – выросли транспортные конторы, заводы, церковь, школа и – армяне, армяне и армяне. Армяне – торговцы вытеснили торговцев татар, армяне портные выгнали портных евреев, армяне – скупщики, перекупщики, содержатели пивных, словом, образовался

[5] Алексей Николаевич Куропаткин – с 1890 г. начальник и командующий войсками Закаспийской области, военный министр (1898–1904 гг.) Российской империи, генерал-губернатор Туркестана (1916–1917 гг.).

[6] См.: **Григорьянц В.** Участие армянского населения в развитии промышленности и промыслов в Закаспийском крае (1881–1917 гг.) (Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, № 5, с. 37–49).

[7] Этнический атлас Узбекистана. Ответ. ред. Алишер Ильхамов, Узбекистан, 2002, с. 34.

особый армянский квартал»[8], – вспоминал генерал-майор Борис Литвинов. В Закаспийской области к 1891 г. армянские торговцы составили 32,2%; из 1.514 торговых заведений в этой области 35,1% принадлежали армянам. Армянские предприниматели играли ведущую роль в нефтедобывающей, обрабатывающей (хлопкоочистительной) и пищевой (мукомольной, маслодельной, винодельной) промышленности Туркестана. В Закаспийской области, наименее развитой в экономическом отношении, армяне стали организаторами рыбного и соляного промыслов. После включения Средней Азии в состав Российской империи рыболовство стало одним из главных занятий местного и пришлого населения Мангышлака и Красноводска. Местным рыбакам не под силу было организовать поставку рыбы и рыбопродуктов в центральную Россию или в города Русского Туркестана. Основную роль в организации промысла и перевозке рыбы стали играть армянские торговцы. Армяне не только являлись скупщиками, но и сами занимались рыбным промыслом. К 1890 г. в Мангышлакском уезде насчитывалось 514 рыболовецких лодок, из них 32 принадлежали армянским рыбакам. В рыбном промысле Красноводского уезда главную роль играли рыболовецкие артели. Армянские торговцы здесь фактически с нуля организовали товарное рыболовство, поставляя местному населению дальноходные лодки и снасти, организуя заготовки рыбы и рыбопродуктов. Поскольку у местного населения не было и не могло быть средств для приобретения современных на тот период лодок и орудий лова, армянские торговцы поставляли их под залог будущих уловов. В 1904 г. насчитывалось 15 ватаг (рыболовецких артелей) – 9 русских и 5 армянских. У них было больше возможностей использовать новейшие снасти и лодки, в том числе и грузовые. Для хранения рыбы и рыбопродуктов стали использоваться садки и ледники. Первый промышленный ледник для замораживания рыбы в Закаспийской области был построен армянским купцом М.И. Аваковым в 1897 г. в Красноводске. К началу XX века «Товарищество южнокаспийских промыслов Г.С. Лианозова» обладало в этих водах полной мо-

[8] **Литвинов Б.** Керки (картинки аму-дарьинской жизни) (Кауфманский сборник, изданный в память 25 лет, истекших со дня смерти покорителя и устроителя Туркестанского края генерал-адьютанта К.П. фон Кауфмана I-го, М., 1910, с. 40–41).

нополией[9]. С рыболовецким промыслом было тесно связано и развитие чрезвычайно прибыльного соляного промысла.

Только на соляных промыслах одного из крупных армянских промышленников Николая Тер-Аванесова добывалось не менее 225 тыс. пудов соли. Несмотря на малочисленность, армянская община прикаспийских областей Русского Туркестана играла важную роль в хозяйственной жизни этого региона. Обладая знаниями и опытом в торговле и имея свободные денежные средства, армянские купцы и промышленники стали организаторами товарного рыболовства и солевого промысла и вплоть до революции играли в них ключевую роль. Активная деятельность армянских торговцев привела к тому, что из 1.514 торговых заведений в области, отмеченных администрацией в 1896 г., 35% принадлежала армянам. Согласно материалам первой всеобщей переписи населения Российской империи 1897 года, в Закаспийской области самостоятельных торговцев из армян (исключая членов их семей) насчитывалось около 1000 человек. Из них торговым посредничеством занималось 37 человек (28% от общего числа торговцев), торговлей спиртными и безалкогольными напитками – 102 человека (57,6%), торговлей тканями – 175 человек (38,8%), содержанием гостиниц, клубов и меблированных комнат – 67 человек (15%), торговлей разного рода сельскохозяйственной продукции – 198 человек (15%), 176 человек (15,6%) занимались различными торговыми операциями, и незначительное число лиц было задействовано в торговле лесом, зерном и скотом[10]. Среди армян, торгующих в Закаспии, нередко встречались персидскоподданные армяне. Так, в Асхабаде ренсковый погреб и бакалейную торговлю имел персидскоподданный Б. Дадашев, в Узун-Аде пароходную транспортную контору имел С. Туманян, содержал трактир А. Хачатуров, а гостиницу – Г. Ованесов. В Кизил-Арвате сравнительно крупный мануфактурный и галантерейный магазин имел В. Григорянц, в Мерве С. Назарянц содержал фотоателье. Таким образом, к началу XX в. ар-

---

[9] **Григорьянц В.Е.** Армяне Средней Азии: история, современное положение, перспективы, Е., 1994, с. 13.

[10] См.: **Григорьянц В.Е.** Участие армян-переселенцев в развитии торговли в Закаспийской области (конец XIX – начало XX вв.) (Լրաբեր հասարակական գիտությունների, 1978, № 6, с. 53–66).

мяне-торговцы сосредоточили в своих руках значительную часть внутренней торговли в Закаспийской области. Армяне принимали также весьма деятельное участие в начинающей только развиваться русско-иранской торговле через Закаспийскую область. Торговля с Афганистаном через Закаспийский край в это время была развита еще весьма слабо, армянские купцы сбывали русский товар афганцам в Иране[11]. Согласно сведениям Доброхотова (командированный в Иран врач асхабадского военного лазарета), представленным начальнику Закаспийской области о ходе русской торговли, в 1898 г. торговые фирмы Гулиянца, Мнацаканова и Тер-Микиртычева[12] продали афганцам в Иране русского мануфактурного товара на 20.000 туманов. Были созданы также новые торговые фирмы и компании, которые вели как внутреннюю, так и внешнюю торговлю. Так, в числе крупнейших фирм Закаспия, занимавшихся в начале 10-х гг. XX в. внешнеторговой деятельностью, наряду с фирмами отмеченных выше крупных армянских купцов, источники упоминают фирмы «Торговый дом С. Ахназарянц», «Г. Абиянц, А. Нерсесянц и К.», «Торговый дом Кеворков и Тер-Саркисов», торговавшие мануфактурой, хлопком, шерстью, коврами, сахаром, фруктами и другими товарами. Среди владельцев крупных фирм и торговых компаний по экспедиторству и транспортированию грузов, принадлежащих другим лицам, названы имена Абрамянца, Каспарянца и Григорьянца.

Представители армянской торговой прослойки в значительной мере способствовали развитию товарно-денежных отношений в дореволюционном Туркестане и тем самым содействовали формированию новых, более прогрессивных производственных отношений.

---

[11] Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. 2, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, խմբ. Միքայելյան Վ., Ե., 2003, էջ 520:

[12] Торговый дом братьев Н. и А. Тер-Микиртычевых, главная контора которого находилась в Москве, начал свою деятельность в Туркестане в 1880 году и занимался крупной торговлей с Персией и Афганистаном. См.: **Григорьянц А.А.** Армяне в Средней Азии (вторая половина XIX в. – 1917 г.), Е., 1984, с. 158.

Небезынтересно, что даже в период правления Закаспийского Временного правительства[13] и затем Комитета общественного спасения сфера торговли и финансов Закаспийской области регулировалась через местные банки, как это было и раньше, при активном участии крупных армянских торговцев, которые одновременно были и владельцами промышленных предприятий[14]. Ключевой ролью армянских предпринимателей в торгово-финансовой системе Закаспийской области, в том числе при Временном правительстве края, обусловлено появление на денежных банкнотах надписей на армянском языке, выпущенных в 1919 году[15].

После Февральской революции в Туркестане создаются общественно-политические организации, представляющие коренное мусульманское население региона. В марте 1917 были созданы «Шуро-и-Исламия» (Исламский совет), идеологически выросшее из либерального движения джадидов, «Шуро-и-Улема» (Совет духовенства), созданное кадимистами (движение исламских традиционалистов), и «Союз трудящихся мусульман», сыгравший важную роль в борьбе за Советскую власть в Туркестане.

В марте 1917 г. генерал-губернатор А. Куропаткин был арестован по приказу Ташкентского Совдепа, регион фактически вышел из-под контроля центральной российской власти, чему во многом способствовала неэффективная деятельность Туркестанского комитета Всероссийского Временного правительства.

---

[13] Закаспийское Временное правительство или Временный исполнительный комитет Закаспийской области действовал в Асхабаде с июля 1918 г. по январь 1919 г.

[14] В Асхабаде имелась большая армянская колония, в основном состоявшая из торговцев и рабочих, которые жили в кварталах неподалеку от железнодорожной станции. Армяне составляли основную часть закаспийских войск. У торгового сообщества, в значительной степени армянского, были деньги, и они тратили их свободно. См.: **Ellis C.H.,** The British Intervention in Transcaspia 1918–1919, University of California Press, Berkeley and Los Angeles, 1963, pp. 105–107; (http://www.archive.org/stream/britishintervent002569mbp/britishintervent002569mbp_djvu.txt)

[15] **Соегов М.** О денежных купюрах Закаспийского Временного правительства (на фоне кредитных обстоятельств Великобритании в 1919 году), Великая Российская революция: достижения и проблемы научного познания и преподавания. Ежегодник. XXI Всероссийские историко-педагогические чтения: сб. науч. ст. /ФГБОУ ВО «Урал. гос. пед. ун-т», часть I, Екатеринбург, 2017, с. 29.

Судьбу армян Туркестана резко изменил большевистский переворот. В годы революции и гражданской войны различные слои армянского населения были втянуты в борьбу как за Советскую власть, так и против нее[16].

Большевистским правительством был принят ряд документов, вызвавших волну национальных демократических движений по всей стране: «Декларация прав народов России» 2 ноября 1917 г., Обращение СНК «Ко всем трудящимся мусульманам России и Востока» 20 ноября 1917 г., которые декларировали равенство и суверенитет народов бывшей Российской империи, их право на свободное самоопределение, вплоть до отделения, отмену национальных и религиозных привилегий и ограничений. В Коканде в ответ на создание в Ташкенте Совнаркома под руководством «Шуро-и-Исламия» был созван IV чрезвычайный краевой общемусульманский съезд, на котором 27 ноября 1917 г. Туркестан был объявлен «территориально автономным в единении с Федеративной Демократической Российской республикой». Было принято решение переименовать Туркестан в Туркестон мухториати [17].

В непосредственной подготовке самой Кокандской автономии русская буржуазия приняла активнейшее участие. Конституцию, принятую правительством Кокандской автономии, совместно с другими русскими юристами разрабатывал присяжный поверенный Нэнэберг. Как только было сформировано правительство Кокандской автономии, на службу к нему поступило много русских офицеров[18]. Как отмечал П. Алексеенков, «Особенно упорно использовалась сторонниками Кокандской автономии ошибка нашей партийной (большевистская партия – А.О.) организации в национальном вопросе. Они на всех углах кричали, что большевики–империалисты, что большевики проводят такую же колониальную политику, какую проводило царское правительство, что большевики хотят по-преж-

[16] См.: **Алексанян О.** Армянские общины в советских республиках в 1917–1941 гг., Е., 2011, с. 28–29.

[17] Туркестанская автономия или Кокандская автономия существовала с 27 ноября 2017 г. (9 декабря 2017 г. по новому стилю) по 18 февраля 2018 г.

[18] **Алексеенков П.** Кокандская автономия. Истпарт Средазбюро ЦК ВКП(б), Ташкент, 1931, с. 34.

нему превратить Туркестан в свою колонию. С этим обстоятельством тесно связывалась националистическая агитация. Лозунг «Туркестан для туркестанцев», всевозможные пантюркистские идеи пропагандировались самым настойчивым образом»[19].

Имевший место в регионе внутренний вооруженный конфликт, царившая здесь политическая анархия, фактическое отсутствие экономических отношений между Туркестаном и Центральной Россией, в том числе с соседним Ираном и Афганистаном, пагубно отразились на экономической деятельности армянского населения в Туркестане. Влиятельная армянская экономическая прослойка края понесла большие убытки.

Вызванная революцией военно-политическая и социально-экономическая анархия существенно изменила социальный состав армянского населения края. Значительная часть армянского купечества, промышленников и промысловиков, зажиточных слоев населения, а также ремесленников и специалистов, спасаясь от разрухи, произвола и грабежа, покинули пределы края.

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԹՈՒՐՔԵՍՏԱՆՈՒՄ. ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ՈՒ ԴԵՐԸ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.

Ամփոփում

Թուրքեստանի նվաճումից և Թուրքեստանի գեներալ-նահանգապետության կազմավորումից հետո տարածաշրջանի տնտեսության զարգացման գործում կարևոր դեր են խաղացել հայ ձեռնարկատերերը, արհեստավորներն ու առևտրականները: Քաղաքներում բացվել են առևտրական տներ, արհեստանոցներ, գործարաններ, գինետներ և այլն:

1897 թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով Թուրքեստանի չորս նահանգներում հայ բնակչության թվաքանակը կազմում

[19] Там же, с. 39–40.

էր 4,862 մարդ, որոնց 89%-ը (4,317 մարդ) ապրում էր քաղաքներում, 11%-ը (546 մարդ)՝ գյուղական բնակավայրերում: XX դարի երկրորդ տասնամյակին Թուրքեստանում բնակվում էին մոտ 20–21 հազար հայեր՝ հիմնականում կենտրոնացած լինելով Ասխաբադ, Մերվ, Կրասնովոդսկ, Ուզուն-Ադա, Չարջույ, Տաշքենդ, Սամարղանդ, Կոկանդ և այլ քաղաքներում: Հայերը ակտիվ մասնակցություն ունեցան նաև ռուս-իրանական առևտրին, որը սկսել էր զարգանալ Անդրկասպյան տարածաշրջանի միջով:

Թուրքեստանի հայերի ճակատագիրը կտրուկ փոխվեց 1917 թ. բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով: Հայ բնակչության տարբեր շերտերը պայքարեցին ինչպես խորհրդային կառավարության կողմից, այնպես էլ նրա դեմ: Տարածաշրջանի հայկական կապիտալը և առևտրատնտեսական շրջանակը մեծ կորուստներ կրելով՝ դուրս մղվեցին տարածաշրջանից:

ARMENIANS IN RUSSIAN TURKESTAN: DISPERSION AND CONTRIBUTION TO THE DEVELOPMENT OF THE REGION

ALEKSANYAN H.

Summary

After the conquest of Turkestan and the formation of Turkestan Governor-Generalship in the region, industry and trades developed. Armenian entrepreneurs, craftsmen and traders played an important role in the development of the economy. Profitable houses and restaurants, shops, craft shops and factories, wineries, hotels, apartment houses opened by Armenians appeared in the cities of Turkestan region. Possessing knowledge and experience in organizing trade and managing free cash, Armenian merchants and industrialists became organizers of commercial fishing and salt fishing and until the revolution played a key role in them.

According to the data of the first All-Russian population census in 1897, in four regions of Turkestan, the Armenian population was 4,862 people. Of these, 89% (4,317 people) lived in cities; 11% (546 people) - in rural areas. By the second decade of the 20th century, about 20-21 thousand Armenians had lived in Turkestan. The main part of the Armenians was concentrated in the cities of

Askhabat, Merv, Krasnovodsk, Uzun-Ada, Chardzhui, Tashkent, Samarkand, Kokand etc.

By the beginning of the 20th century, Armenian merchants had concentrated in their hands a significant part of domestic trade in the Transcaspian region. Armenians also took a very active part in the Russian-Iranian trade, which was just beginning to develop through the Transcaspian region. The fate of the Armenians of Turkestan dramatically changed due to the Bolshevik coup in Russia, in 1917. During the years of revolution and civil war, various strata of the Armenian population of Turkestan were drawn into the struggle both on the side of the revolutionary government and against it. The regional Armenian economic stratum and capital suffered heavy losses and then abandoned the region.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
POLITICAL SCIENCE

THE MYTHOLOGICAL, EPIC, HISTORICAL AND RELIGIOUS LAYERS IN THE ORIGIN OF THE ARMENIAN NATIONAL IDEOLOGY

MANUCHARIAN H.
henzel.manucharyan44@mail.ru

Բառակազմական այս տիպի կրկնավորները բաժանվում են երկու ենթատեսակի ըստ այն բանի, թե բարդ բառի ո՛ր բաղադրիչում է տեղի ունեցել հնչյունական փոփոխություն: Վերջինիս տեսակը որոշելու համար անհրաժեշտ է բացահայտել կրկնավոր բարդությունների անհնչյունափոխ բաղադրիչները. մի հանգամանք, որ կապված է որոշակի դժվարությունների հետ: Բառակազմական այդ տիպը, լինելով տարժամանակյա գործընթաց, իր ակունքներով հասնում է լեզվի հնագույն (կամ վաղնջական) շրջաններին, և այդ առումով դժվարություն է առաջանում բառապատկերի վերականգնման հարցում՝ որոշակի դեպքերում[6]: Այդ հարցում օգնում են ցեղակից լեզուների ընձեռած

---

[4] Գրաբարի կրկնավոր բարդությունների հիմնական տիպերի մասին տե՛ս **Туманян Э.** Древнеармянский язык, М., 1971, с. 168–170:

[5] Էդ. Աղայանը նկատում է, որ կրկնական բարդությունները (տերմինը հեղինակինն է – Լ.Խ.) կարող են կազմվել նաև բառի փոփոխված ձևերով, ինչպես՝ *փայլփլել, վազվզել, կցմցել, մարմրել, խրխնջալ, կասկարմրել,* սակայն չի խորանում «փոփոխված ձևերի» ներքին դասակարգումների մեջ (տե՛ս **Աղայան Էդ.,** Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 275):

[6] Գ. Ջահուկյանը, դիտարկելով կրկնությունների ժամանակագրական փուլերը, նկատում է, որ հնդեվրոպական շրջանից եկող և դրանց նմանակությամբ հետհնդեվրոպական շրջանում կազմված բառերին բնորոշ է մասնական կրկնությունը, որ հաճախ ուղեկցվում է ձայնորդային հերթագայությամբ և երբեմն վերջահավելական տարրերով՝ աճականով (տե՛ս **Ջահուկյան Գ.,** Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 215):

փաստերը և բառակազմական ստուգաբանության եղանակը, հատկապես հնագույն ձևերի վերականգնման մեթոդիկան:

Կրկնավոր բարդությունների արտահայտության պլանի տարժամանակյա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հնչյունական փոփոխությունները կատարվել են բարդության կա՛մ առաջին, կա՛մ երկրորդ բաղադրիչներում[7]: Դիտարկենք այդ կարգի բարդություններն առանձին-առանձին և ցույց տանք դրանց բաղադրիչների և ամբողջական բարդության կիրառական արժեքն Աստվածաշնչի հայերեն թարգմանական գրքերում[8]:

ա) Փոփոխություն բարդության առաջին բաղադրիչում

Այն բարդությունները, որոնց առաջին բաղադրիչում են կատարվել հնչյունական փոփոխություններ, դրսևորում են որոշակի յուրահատկություններ: Բնականաբար, այդպիսի բառերի երկրորդ բաղադրիչը հանդես է գալիս որպես անհնչյունափոխ արմատական բաղադրիչ, սակայն հարցն այն է, որ այդ բաղադրիչները իրենց բառական իմաստներով լիարժեք չեն գիտակցվում՝ չհաշված մասնակի դեպքերը: Աստվածաշնչի թարգմանական գրքերում այդ կարգի բառերի քննությունը կատարելիս անհրաժեշտ է ցուցաբերել տարբերակված մոտեցում:

Այսպես, *բարբառ, թօթափել, կսկծելի* կրկնավորների երկրորդ բաղադրիչները անկախ բառական արժեքներ ունեն և իրենց իմաստով թելադրում են բարդության ընդհանուր նշանակությունը:

Բարբառ կրկնավորի արմատական բաղադրիչն է *բառ* ձևույթը, որ անկախ միավոր է և կենսունակ գործածություն ունի լեզվի տարբեր գոյավիճակներում: Բառակազմության գործընթացում տարնմանության գործոնով պայմանավորված՝ առկա է ռ/ր հերթագայությունը. նշանակում է «ձայն, հնչյուն, աղաղակ, խոսք, լեզու»: Հմմտ. Լեզու մի և *բարբառ* մի ամենեցուն (Ծնն., ԺԱ. 1):

Աստվածաշնչում հանդիպում է այս հիմքով կազմված *բարբառել (իլ)* բայը՝

---

[7] Գրաբարում նույն արմատի կրկնությամբ ստացվող կաղապարներում բաղադրիչների հնչյունական տարբերությունների մասին տե՛ս **Հովսեփյան Լ.,** Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987, էջ 113–114:

[8] Ա. Բագրատունին, իր աշխատանքի «Յաղագս բարդութեան բառից» գլխում քննելով արմատակրկնությամբ առաջացած բարդությունների տեսակները, նկատում է. «Յայսպիսիս ուրեք գիր մի զանց առնի կամ փոխի. փոփոխ, դադար, բաբախ, կակազ, թոթով, թեթև, վավաշ.- հեղեղ, շաղփաղփ, հեծեծեմ, պատատեմ.- բարբառ, կարկառ, թաւթափեմ.- յարմար, լուռմուռ, սուտմուտ.- սարսուռ, սպառսպուռ» (**Բագրատունի Ա.,** Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 660):

«ձայն հանել, գոչել, խոսել» նշանակություններով:

Թօթափել բառի *թափ* արմատական բաղադրիչը հանգում է հնդեվրոպական step - «սյուն, նեցուկ, արմատ, ամրացնել, ոտք դնել» արմատին, գրաբարում ունի ինքնուրույն գործածություն՝ «հատակ, տակ, խորք, պատյան, թափ, ուժ, պտույտ, թափում, կողոպուտ» իմաստներով[9]: Հմմտ. Ի *թափս* դժոխոց հասանեն (Առակ., Թ. 18): (Հմմտ. նաև Աստվածաշնչում այդ հիմքով հանդիպող *թափ անցանել, թափանցանց, թափառական, թափառել, թափել* բառերը): Կրկնավոր բարդության ելակետային վիճակն է՝ *թաւ+թափել* (տարնմանության օրենքով), այնուհետև *աւ* երկբարբառի պարզեցման հետևանքով առաջին բաղադրիչում ունենք *օ* ձայնավորը, որից՝ *թօթափել* բարդությունը՝ «թափթփել, ձգել, փոշին մաքրել» իմաստներով: Հմմտ. *Թօթափէին* զքուրձն առաջի Տեառն (Յուդիթ, Դ. 10):

Կսկծելի բարդության արմատական ձևույթը հանգում է *կծ(ան)ել* բայի *կիծ* արմատին և ծագում է բնիկ հնդեվրոպական gig-, *geig «կծել, խայթել» արմատից[10]: Գրաբարում այն ստացել է «մարմինն այրող քոր, մարմաջ» նշանակություն, որ հանդիպում է որոշ հեղինակների գործերում, ինչպես՝ Մահ և վէրք ի մարդիկ՝ *կիծ* եւ աչացաւութիւն (Շիրակացի, ըստ ՆՀԲ):

Արմատի կրկնության դեպքում հնչյունի տարրալուծման (պարզեցման) օրենքով պայմանավորված՝ տեղի է ունեցել ծ/u հերթագայություն, և բարդությունը ստացել է *կսկիծ* բառապատկերը. այն նշանակում է «սուր՝ ծակող ցավ, փիխբ. դառն վիշտ, մորմոք»: Աստվածաշնչում հանդիպում է *կսկծելի* ձևով՝ «կսկծացնող, մորմոքող» իմաստներով, հմմտ. Բանս *կսկծելիս* թշնամանաց առ իւրանց ի չարի նոսա արծակէին (Բ. Մակ., Ժ. 34):

Այս տիպի կրկնավորների երկրորդ խմբում այն բառերն են, որոնց երկրորդ բաղադրիչն իր բառական իմաստով չի գիտակցվում և ինքնուրույն գործածություն չունի գրաբարում: Աստվածաշնչում հանդիպող այդ կարգի բառերն են՝ *գրգիռ, դանդաղ, խարխաբ(փ)ել, ծանծաղ(ամիտ)*[11], *ծանծաքել, ծիծառն, կարկառ, կարկուտ, կասկածել, շօշափել, պապանձիլ, սօսափիւն, փրփուր:*

Դիտարկենք այդ բառերն իմաստի և կառուցվածքի տեսանկյունից:

---

[9] **Ջահուկյան Գ.,** Ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 262:

[10] Նույն տեղում, էջ 404:

[11] Հայագիտության մեջ *ծանծաղ* բարդության արմատի հարցում հստակություն չկա. այն բխեցնում են անծանոթ *ծան* կամ *ծաղ* արմատից (**Աճառյան Հր.,** Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 445):

Գրգիռ բառը հանգում է հնդեվրոպական *ghers – «զզվանք» արմատին (*ghēr-ghērs>գրգիռ)[12]: *Գիռ* (*ghers) արմատը դեռևս գրաբարում չէր գիտակցվում որպես անկախ ձևույթ. կրկնավոր բարդությունն ունի «հակառակություն, դրդում, ազդակ» իմաստներ: Հմմտ. Դէպ եղեւ … ժամանակն ի *գրգիռ* վայրի դիպել (Բ. Մակ., Ժ. 30):

Աստվածաշնչում հանդիպում են այս հիմքով հետևյալ կազմությունները՝ *գրգռել, գրգռութիւն:*

Դանդաղ բառը կազմված է *դաղ* պարզ արմատի կրկնությամբ, որի տարբերակներն են *դիլ, դուլ* (հմմտ. *անդուլ*), *դլալ*. ծագում է հնխ. dhar «կացուցանել, կալ, ունել տանել, կրել» արմատից[13]: Աստվածաշնչում *դանդաղիլ* բառը գործածված է «ոչ արագ շարժվել, հապաղել, չշտապել, ծուլանալ» իմաստով, հմմտ. Իբրեւ հայեցաւ, ետես զզաւրսն, թէ *դանդաղեցան* անցանել ընդ հեղեղատն (Ա. Մակ. ԺԶ. 6):

Խարխաբել բառի արմատական ձևույթը (խաբ/խափ) վերջնական ստուգաբանություն չի ստացել. այն կապում են կա՛մ *խարխ* արմատի (հմմտ. խարխ+ափ), կա՛մ *խափ* արմատի հետ[14], որի կրկնությամբ՝ *խարխաբ(ել)*՝ «մթնում կույրի պես շոշափելով՝ առաջ գնալ» իմաստով: Հմմտ. Իբրեւ ի գիշերի խարխաբեսցեն (Յովբ., Ե. 14):

Ծանծաքել. հավանական է համարվում նրա կրկնավոր կազմությունը, իսկ արմատի հարցում հստակություն չկա. Գ. Ջահուկյանը թեական է համարում նրա կապը հնդեվրոպական *g′mbh- «կծել, ատամներով ջարդել» արմատի հետ, Հր. Աճառյանը՝ *ծանք* արմատի հետ[15]: Կրկնավոր բարդությունն ունի «ծամծմել, անհագուրդ ուտել» իմաստներ, հմմտ. *Մի՛ ծանծաքեր*՛ գուցէ ատիցիս (Սիրաք., ԼԴ. 19):

Ծիծառն կրկնավոր բարդության հիմնական ձևույթը հանգում է հնդեվրոպական *g′ar բնաձայնական արմատին, որի համարժեքները սեբրենում՝ «երգել», հունարենում՝ «ձայն» իմաստ ունեն[16]: Բարդությունը «ծիծեռնակ» իմաս-

[12] **Ջահուկյան Գ.,** նշվ. աշխ., էջ 176:

[13] **Աճառյան Հր.,** Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 620: Ըստ Գ. Ջահուկյանի՝ *դանդաղ* արմատական բառ է (տե՛ս նշվ. աշխ., էջ 183):

[14] **Ջահուկյան Գ.,** նշվ. աշխ., էջ 321: **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., հ. 2, էջ 346:

[15] **Ջահուկյան Գ.,** Ստուգաբանական բառարան, էջ 359: **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., հ. 2, էջ 445:

[16] **Ջահուկյան Գ.,** նշվ. աշխ., էջ 362: **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., հ. 2, էջ 456:

տով գործածական է գրաբարում, հմմտ. Տատրակ եւ *ծիծառն* թռչունք վայրի պահեցին զժամանակս մտից իւրեանց (Երե., Ը. 7)։

Կարկառ կրկնավոր բարդության հիմնական ձևույթը *կառ* բաղադրիչն է («կառուցում, կանգնեցում»), որ բուն արմատական մասով կապված է *կալ, կայ-, կանգ* արմատների հետ և ծագում է հնդեվրոպական gᵘa- «գալ, գնալ, ծնվել, երևան գալ» արմատից՝ իմաստի յուրահատուկ զարգացմամբ[17]։ Կարկառ բարդությունը «քարակույտ» իմաստով գործածական է գրաբարում, հմմտ. Ի վերայ *կարկառի* քարանց ննջեսցէ (Յովբ., Ը. 17)։ Աստվածաշնչում հանդիպում են այս հիմքով հետևյալ կազմությունները՝ *կարկառակոյտ, կարկառել։*

Կարկուտ բառի նախաձևն է g²rōd-, որ հայերենում կրկնվելով տվել է **կալկրուտ,* այնուհետև դրափոխությամբ՝ *կարկուտ*[18]. նշանակում է «օդում սառցահատիկի ձև ստացած անձրևի կաթիլներ»։ Հմմտ. *Կարկուտ* եթէ իջանիցէ ոչ ի ձեր վերայ (Եսայ., ԼԲ. 19)։

Կասկածել կրկնավորի արմատական ձևույթը՝ *կած,* առաջացել է *կարծ* արմատից հնչյունի անկումով, հմմտ. *կարծ-իք։* Կրկնավոր (բայական) բարդությունը նշանակում է «տարակույս՝ վտանգ՝ երկյուղ ապրել», հմմտ. Որ երկնչի ի Տեառնէ, ոչ յումեքէ *կասկածեսցէ* (Սիրաք, ԼԱ. 15)։

Շօշափել բարդությունը կազմված է *շափ* արմատի կրկնությամբ՝ *շափշափել>շաւշափել* անցումով[19], իմաստն է՝ «ձեռքը քսելով՝ զգալ, իմանալ», հմմտ. *Շօշափեցից* զքեզ իբրեւ զուսեր պողովատիկ պատերազմողի (Զաքա., Թ. 13)։

Պապանձիլ բարդության արմատն է *պանձ,* որ հանգում է բնիկ հնդեվրոպական bhandh արմատին (*bhendh կապել)՝ դ>ձ հնչյունների լծորդության օրենքով[20]։ Բայական բարդության իմաստն է՝ «(լեզուն) կապ ընկնել»։ Հմմտ. Ի ժամանակին յայնմիկ հարաւ Յակիմոս, *պապանձեցաւ* եւ ոչ կարէր խօսիլ բան մի (Ա. Մակ., Թ. 55)։

Սասասփիւն բաղադրության սերող հիմքը՝ *սասասփ,* բնաձայնական կրկնավոր կազմություն է *սասփ* «շարժել, երերալ, դողալ» արմատից և նշանա-

---

[17] **Ջահուկյան Գ.,** նշվ. աշխ., էջ 385։

[18] **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., հ. 2, էջ 556։ Գ. Ջահուկյանն այն բխեցնում է բնիկ հնդեվրոպական gegrōdo (՞) *grōd-/gred արմատից (տե՛ս **Ջահուկյան Գ.,** նշվ. աշխ., էջ 394)։

[19] **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., հ. 3, էջ 547։

[20] **Ջահուկյան Գ.,** նշվ. աշխ., էջ 621։ **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., հ. 4, էջ 26։

կում է «թևերի ալեբախումից առաջացած ձայն, շրշյուն»[21], հմմտ. Ոչ էին կերպարանք առաջի աչաց իմոց, բայց միայն օդ եւ *սօսափիւն* լսէի (Յովբ., Դ. 17):

Տրփում կրկնավորի հիմնական բաղադրիչը հանգում է բնիկ հնդեվրոպական drom «քնել» արմատին, որից՝ **փրում.* կրկնությամբ՝ **փուր-փում>փրփում*[22]: Բարդության բառական իմաստն է՝ «տխուր, վշտալի», հմմտ. Յայնժամ ասէ ցնոսա. *Տրփում* է անձն իմ մինչեւ ի մահ (Մար., ԺԴ. 34):

բ) Փոփոխություն բարդության երկրորդ բաղադրիչում.

Այս տիպի կրկնավորների երկրորդ խմբում այն բառերն են, որոնց հերթագայության կամ ձայնդարձի երևույթ հանդիպում է երկրորդ բաղադրիչում : Այս ենթախմբի բառերը նույնպես կարելի է դասակարգել ըստ այն սկզբունքի, թե որքանով են գիտակցվում դրանց առաջին բաղադրիչները՝ որպես բառակազմության սերող հիմքեր: Ըստ մեծի մասին, դրանց առաջին բաղադրիչներն իրենց բառական իմաստներով չեն գիտակցվում, քանի որ լեզվի տարժամանակյա կտրվածքում ապրել են բառական իմաստի մթագնման գործընթաց, մյուս կողմից՝ կան որոշակի բարդություններ էլ, որոնց առաջին բաղադրիչները պահպանել են իրենց բառական արժեքն ու նշանակությունը: Դիտարկենք այդ բարդություններն առանձին-առանձին:

1) Բարդության առաջին բաղադրիչները գիտակցվում են բառական արժեքով

Աստվածաշնչի թարգմանական գրքերում գործածված բառակազմական այս տիպի շրջանակներում խիստ սակավ են այն կրկնավորները, որոնց առաջին բաղադրիչները գիտակցվում են իրենց բառական արժեքով: Այդ դերով հանդես են գալիս հետևյալ բառերը՝ *կարկատել, սպառսպուռ, սարսուռ*[23]:

Կարկատել կրկնավոր բարդության առաջին բաղադրիչը՝ *կար,* ունի «թոկ, լար, հոդ, կցում, կարելը» իմաստներ: Ստուգաբանորեն այն հանգում է բնիկ հնդեվրոպական *goro - *ger- արմատին՝ «հավաքել, միավորել» նշանակությամբ[24]: Կարկատել բարդությունը «ընդհանրապես՝ կարգի բերել, նորոգել. կցել, միավորել, միացնել» իմաստներով կենսունակ գործածություն ունի գրաբարում: Հմմտ. Եւ որպէս զխեցի ոք *կարկատէ,* այսպէս է՝ եւ որ ուսուցանէ զմորոսն (Սիրաք., ԻԲ. 7):

---

[21] **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., հ. 4, էջ 290–291:

[22] Նույն տեղում, էջ 440:

[23] *Սարսուռ* բառն այս ենթախմբում զետեղում ենք որոշակի վերապահությամբ. ավելի հավանական է *սար* (<սառն) արմատի գիտակցումը, քան *սուռ* (<սառն):

[24] **Ջահուկյան Գ.,** նշվ. աշխ., էջ 389:

Սպառսպուռ համարվում է պահլավական փոխառություն՝ *spar և spur-, որի նշանակությունն է «կատարյալ, լրացած, վերջացած»[25]: Ակնհայտ է, որ պահլավերենում այն նույնպես կրկնավոր կազմություն է՝ a>u ձայնդարձով: Աստվածաշնչում *սպառ* (սպառում. վերջ, ավարտ) արմատական բաղադրիչով հանդիպում են հետևյալ կազմությունները՝ *սպառազէն* (ամբողջովին զինված), *սպառազինութիւն* (լիովին՝ ամբողջովին զինված լինելը), *սպառել* (վերջացնել. ոչնչացնել, վերացնել), *սպառուած* (վերջ, վախճան, ավարտ):

Կրկնավոր բարդությունը նշանակում է «մինչև սպառվելը, լրիվ չափով, ամբողջապես, ամբողջովին. գլխովին». այդ իմաստներով այն գործածվում է Աստվածաշնչում, հմմտ. Եւ խնդրեցին *սպառ սպուռ* զվրէժն արեան եղբաւրն իւրեանց (Ա. Մակ., Թ. 42): Աստվածաշնչում հանդիպում է *ի սպառսպուռ* նախդրավոր կառույցը. Ձեռն իւր ձախ ձգեաց ի ցիցն, եւ զաջ իւր *ի սպառսպուռ* ջախջախանս անպիտանացուցանել, եւ վախճանեցոյց զՍիսարա (Դատ., Ե. 26):

Սարսուռ կրկնավորի *սառն* արմատն ունի «սառույց, սառը» նշանակություն. ստուգաբանորեն այն հանգում է բնիկ հնդեվրոպական *k′ar-n-՝ *k′er- արմատին՝ «սառչել, ցրտել» իմաստով[26]: *Սարսուռ* կրկնավոր բարդությունը «ցրտից կամ վախից դող» նշանակությունից բառիմաստի ընդլայնմամբ ձեռք է բերել «ընդհանրապես՝ դող. սարսափ, երկյուղ» իմաստներ, որոնք հանդիպում են Աստվածաշնչում: Հմմտ. Հարցէ զքեզ Տէր տարակուսանօք, եւ ջերմամբ, եւ *սարսռով,* եւ երկիւղիւ (Բ. Օրէնք, ԻԸ, 22):

2) Բարդության առաջին բաղադրիչները բառական արժեքով չեն գիտակցվում

Այս կառուցատիպով բարդությունների առաջին բաղադրիչները մեռած արմատներ են, որոնց բառապատկերն ու իմաստները մեկնաբանվում են միայն ստուգաբանական եղանակով: Բառակազմության ընթացքում բարդության երկրորդ բաղադրիչները կրել են զանազան հնչյունական փոփոխություններ, որոնք բառակազմական գործընթացի օրինաչափ դրսևորումներ են:

Այդ կարգի բառերից Աստվածաշնչում հանդիպում են հետևյալ կրկնավոր կազմությունները՝ *բողբոջ, կարկամ, հայհոյել, մարմաջել, մարմառ, մորմոքել, շաղփաղփիլ, շոգմոգ, պաղպաջ, սպառսպուռ, քանքարել:*

[25] **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., հ. 4, էջ 260:

[26] **Ջահուկյան Գ.,** նշվ. աշխ., էջ 668:

Դիտարկենք այս բառերի իմաստակառուցվածքային յուրահատկությունները:

Բողբոջ կրկնավոր բարդություն է, որի հնագույն արմատը՝ *բող,* ունի «բույս, ծիլ» նշանակություն և հանգում է հնխ. bhol- ձևույթին՝ նույն նշանակությամբ: Երկրորդ բաղադրիչի հնչյունափոխությամբ ձևավորվել է *բողբոջ* կրկնավոր կազմությունը՝ իմաստային տարբեր զարգացումներով՝ «ծիլ, ընձյուղ. սերունդ, զարմ. ելունդ. պղպջակ»[27]: Աստվածաշնչում գործածված է «ծիլ, ընձյուղ» նշանակությամբ, հմմտ. Թզենի արձակեաց *զբողբոջ* իւր, որթ մեր ծաղկեալք ետուն զհոտս իւրեանց (Երգ., Բ. 13):

Կարկամ համարվում է *կար* արմատի կրկնությամբ կազմված բարդություն, որ հանգում է հնդեվրոպական *ger- «պտտվել, ոլորել» արմատին[28], որից բխում է բաղադրության իմաստը՝ «խիստ ոլորված. կծկված, կորացած, կուչ եկած»: Աստվածաշնչում հանդիպում է «ժլատ, կծծի» իմաստով, հմմտ. Մի՛ լիցիս յաւժար յառնուլն ձեռաւք, եւ ի տալն՝ *կարկամ* (Սիրաք, Դ. 36):

Հայհոյել կազմված է բնածայնական *հայ* արմատից՝ որպես ծաղրական բացականչություն, այն անգործածական բառ է, հմմտ. նաև *յայ յու*[29]*:* Կրկնավոր կազմությունը «անարգել, նախատել. լկտի խոսքեր ասել. չարախոսել, պարսավել» իմաստներով գործածական է գրաբարում: Հմմտ. Զաստուածս քո մի՛ բամբասիցես, եւ զիշխան ժողովրդեան քո *մի՛ հայհոյեսցես* (Ելք., ԻԲ. 28): Կրկնավոր սերող հիմքով Աստվածաշնչում գործածվել են *հայհոյիչ* և *հայհոյութիւն* բառերը:

Մարմաջել կրկնավոր բարդության սերող հիմքն է *մարմաջ,* որի հիմնական ձևույթը հանգում է հնդեվրոպական *mer- «շփել, տրորել»[30] արմատին՝ e>a ձայնդարձով: *Մարմաջ* կրկնավորն ունի «քոր, մորթի գրգիռ» նշանակություն. բայական միավորը «եռք ունենալ, քոր գալ, մորմոքվել, մրմռալ» իմաստներով գործածվում է գրաբարում: Հմմտ. Ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս, ըստ *մարմաջելոյ* լսելեաց իւրեանց (Բ. Տիմո., Դ. 3):

Մարմառ կրկնավոր բարդությունն ունի նույն ծագումը, ինչ որ *մարմաջ*-ը: Այն նշանակում է «մոլաքոր, եռք»: Այդ իմաստով Աստվածաշնչում հանդիպում է *մարմառոտ* կազմությամբ՝ «մոլաքոր հիվանդություն ունեցող» նշանակութ-

[27] **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., հ. 1, էջ 464:

[28] **Ջահուկյան Գ.,** նշվ. աշխ., էջ 393:

[29] **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., հ. 3, էջ 29:

[30] **Ջահուկյան Գ.,** նշվ. աշխ., էջ 517:

յամբ, հմմտ. Զկոյրն կամ զկաղն… *զմարմառուփ* կամ զքոսոտ… մի՛ մատուցանիցեն զայն Տեառն (Ղեւտ., ԻԲ. 22):

Շաղփաղփել կրկնավորի արմատական բաղադրիչն է *շաղփ* առանձին անգործածական արմատը[31], «անհեթեթ՝ անմիտ՝ ցնորամիտ խոսքեր՝ դատողություն» նշանակությամբ: *Շաղփաղփել* բայական միավորը «հիմար-հիմար խոսել, ցնդաբանել, դատարկաբանել» իմաստներով գործածվում է գրաբարում, հմմտ. *Մի՛ շաղփաղփիր* ի բազմութեան ծերոց եւ յուխտի քում զբանս մի՛ կրկներ (Սիրաք., Է. 15):

Աստվածաշնչում հանդիպում է այս սերող հիմքով կազմված *շաղփաղփութիւն* բաղադրությունը՝ «հիմարություն, դատարկաբանություն, շաղակրատանք. ծաղր. զառանցանք, բանդագուշանք» իմաստներով:

Շոգմոգ բարդությունը համարվում է կրկնված անստույգ *շոգ* արմատից[32]:

Կրկնավոր բարդությունը «քսու, շողոքորթ, բանսարկու, բամբասող» իմաստներով գործածվում է գրաբարում: Հմմտ. Սոքա են տրտնջողք եւ *շոգմոգք,* երթեալ ըստ իւրեանց անձանց ցանկութեանց (Յուդա., 16):

Պաղպաջ բարդությունը կրկնված է *պաղ* «փայլ» արմատից. հավանական է համարվում նրա կապը հնդեվրոպական *(s)pel- «փայլել» արմատի հետ[33]: *Պաղպաջ* հին հայերենում նշանակում է «փայլուն բիծ կամ սպի մարմնի վրա, որ ի հայտ է գալիս բորոտություն հիվանդության ժամանակ»: Այս իմաստով այն գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Մարդոյ ուրուք եթէ լինիցի ի մորթ մարմնոյ իւրոյ նշան … պալար կամ *պաղպաջ,* եկեսցէ առ Ահարոն քահանայ (Ղեւտ., ԴԳ. 2):

Աստվածաշնչում հանդիպում է *պաղպաջուն* ածականը՝ «փայլփլուն, պայծառ» նշանակությամբ:

Քանքատել կրկնավոր բարդության սերող (քանքատ) հիմքը *գանգատ* բառի հնագույն ձևն է. նշանակում է «տրտունջ, բողոք»: Հնարավոր է համարվում նրա ծագումը բնիկ հնդեվրոպական *ghan- «բերանը լայն բաց անել, հորանջել» արմատից՝ կրկնության եղանակով[34]: *Քանքատել* նախատիպը «բողոք՝ տրտունջ հայտնել, բողոքել, տրտնջալ» իմաստներով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Հեղիոդորոս… սկսաւ տալ զրոյցս *քանքատելով* եւ ասէ (Բ. Մակ., Գ. 37):

---

[31] **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., հ. 3, էջ 490:

[32] Նույն տեղում, էջ 528:

[33] **Ջահուկյան Գ.,** նշվ. աշխ., էջ 618:

[34] Նույն տեղում, էջ 650:

Այսպիսով, Աստվածաշնչի թարգմանական գրքերում հանդիպող բառակազմական տիպերի համատեքստում յուրահատուկ խումբ են կազմում ձայնդարձով և հերթագայությամբ տիպերը, որոնք բնութագրվում են ձայնդարձի և հերթագայության դիրքերով, ինչպես նաև բաղադրիչների անկախ և կախյալ գործառույթներով: Բառակազմական ձայնդարձով և հերթագայությամբ տիպերի բաղադրիչները (արմատահիմքերը) բնիկ հայկական կամ հնդեվրոպական փոխառյալ արմատներ են, որոնք կենսունակ ձևույթներ են դարձել բառակազմական մակարդակում: Այդ կարգի կազմությունները լայն գործածություն ունեն Աստվածաշնչի հայերեն թարգմանական գրքերում, որոնց ուսումնասիրությունը բացահայտում է հին հայերենի բառակազմական հնարավորությունները լեզվի համաժամանակյա մակարդակում: Մյուս կողմից՝ պատմական բառակազմության եղանակով հնարավոր է բացահայտել այդ կազմությունների մի մասի՝ նախագրային ժառանգության հարցը:

Աստվածաշնչի բառային կազմում ձայնդարձով և հերթագայությամբ տիպերի քննությունը կարող է հիմք հանդիսանալ բառակազմական տվյալ իրողության տարժամանակյա ուսումնասիրության համար ինչպես գրաբարի շրջանակներում (նրա ենթափուլերի միջև), այնպես էլ գրաբարի և միջին հայերենի կամ գրաբարի և ժամանակակից հայերենի միջև:

Համառոտագրություններ «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց» աշխատության

Առակ. - Առակք Սողոմոնի:
Դատ.- Դատաւորք:
Եզեկ.- Եզեկիէլ:
Եսայ.- Եսայի:
Թիւք.- Թիւք:
Ա. Թագ. - Գիրք Թագաւորութեանց Ա:
Բ. Թագ. - Գիրք Թագաւորութեանց Բ:
Գ. Թագ. - Գիրք Թագաւորութեանց Գ:
Իմաս.- Իմաստութիւն Սողոմոնի:
Ծնն.- Ծննդոց:
Ղեւտ.- Ղեւտական:
Ղուկ.- Աւետարան ըստ Ղուկասու:
Բ. Մնա.- Մնացորդաց Բ:
Ա. Մակ.- Գիրք Մակաբայեցւոց Ա:
Բ. Մակ. – Գիրք Մակաբայեցւոց Բ:
Գ. Մակ. – Գիրք Մակաբայեցւոց Գ:
Մաղա.- Մաղաքիա:
Մարկ.- Աւետարան ըստ Մարկոսի:
Յակո.- Թուղթ Յակոբայ Առաքելոյ:
Յեսու.- Յեսու Նաւեայ:
Յովբ.- Յովբ:
Յուդիթ - Յուդիթ:
Սաղ.- Գիրք Սաղմոսաց:
Սիրաք. – Գիրք Սիրաքայ:
Բ. Տիմո.- Թուղթք Պօղոսի Առաքելոյ առ Տիմոթէոս Բ:
Փիլի.- Թուղթք Պօղոսի Առաքելոյ առ Փիլիմովն:
Բ. Օրէնք . - Երկրորդումն Օրինաց:

REDUPLICATIVE WORD-FORMATION TYPES OF ALTERNATION IN THE BIBLE

KHACHATRYAN L.

Summary

The analysis of the word stock of the Armenian translation of the Bible shows that among the word-formation types used here the alternation type of reduplication, forms a unique group, which is characterized by the following formation factors:

1) alternation in the first component e.g *բարբառ, թօթափել, կսկծելի* etc.;

2) alternation in the second component.

The second-type of reduplicative words may be classified based on the principle, whether their components are being accepted as generative word-stems, or not:

a) the first component of composite words has a lexical value e.g. *կարկափել, սպառսպուռ, սարսուռ* etc;

b) the first component of composite words does not have a lexical value e.g. *բողբոջ, կարկամ, մարմաջել, մարմառ, մորմոքել, շոգմոգ* etc.

The alternation-type components of reduplication (root-stems) are either purely Armenian or Indo-European borrowed roots. These stems play a crucial role in the word-formation process of the Armenian language.

Reduplicative words with alternation are widely used in the Bible, the investigation of which can reveal the peculiarities of word-formation in the Armenian language from the perspective of synchronic phase.

РЕДУПЛИКАТИВНЫЕ СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ТИПЫ С ЧЕРЕДОВАНИЕМ ЗВУКОВ В БИБЛИИ

ХАЧАТРЯН Л.

Резюме

Изучение словарного состава армянского перевода Библии показывает, что среди использованных словообразовательных типов особое место занимает тип редупликации с чередованием звуков, характеризующийся следующими формообразующими факторами:

1) чередование в первом компоненте слов: *բարբառ, թոթափել, կսկծելի* и т.д.;

2) чередование во втором компоненте.

Редупликативные слова второго типа можно классифицировать по признаку – воспринимаются ли их компоненты как словообразовательные основы или нет:

а) первый компонент сложных слов имеет значение слова *կարկափել, սպառսպուռ, սարսուռ* и т.д.

б) первый компонент сложных слов не имеет значения слова: *բողբոջ, կարկամ, մարմաջել, մարմառ, մորմոքել, շոգմոգ* и т.д.

Компоненты редупликативных слов с чередованием звуков являются как исконно армянскими, так и индоевропейскими заимствованными морфемами. Эти корни играют активную словообразовательную роль в армянском языке.

Редупликативные слова с чередованием звуков широко использовались в книгах Библии, изучение которых может выявить словообразовательную особенность армянского языка в синхронном срезе.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
REPORTS

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԲՈԼՈՐԵՑ ԻՐ 75-ԱՄՅԱԿԸ

2018 թ. հոկտեմբերի 17-ին մեկնարկեցին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հոբելյանական միջոցառումները: Հանդիսավոր նիստի ժամանակ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային շնորհավորեցին Բելառուսի, Մոլդովայի, Ղրղզստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Տաջիկստանի, Սլովենիայի, Չեխիայի, Ռուսաստանի, Վրաստանի, Մեծ Բրիտանիայի, Ուկրաինայի պատվիրակությունների ղեկավարները, Եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցության (ALLEA) փոխնախագահ Գրեհամ Քեյը, ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահ Ագիբայ Սմագուլովը, Եվրոպական ակադեմիայի փոխնախագահ Օլե Պետերսոնը:

ՀՀ ԳԱԱ 75-ամյակի առթիվ գիտական նվաճումների և գիտության զարգացման համար ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն արժանացավ Մոլդովայի և Ուկրաինայի Գիտությունների ակադեմիաների ոսկե մեդալների, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանը՝ Բելառուսի Գիտությունների ակադեմիայի ոսկե մեդալի:

ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի շնորհավորական խոսքից.

«Մենք ուզում ենք Հայաստանը դարձնել նույնպիսի տեխնոլոգիական առաջատար երկիր, ինչպիսին նա էր ԽՍՀՄ տարիներին և պայմաններում: Դրա համար մենք ունենք ամենակարևորը՝ մարդկային ներուժը, մարդիկ, ովքեր կրում են այդ գիտելիքը, կարող են փոխանցել այն, և կարևորը՝ ավանդույթներ, որոնք կապված են ԳԱԱ գործունեության հետ: Մեծ հույս ունենք, որ Հայաստանի գիտությունը, կառավարությունը և հանրությունն այս հարցի շուրջ յուրօրինակ կոնսենսուս են ձևավորելու և ՀՀ-ում նոր տեխնոլո-

գիական առաջընթաց, նոր տեխնոլոգիական հեղափոխություն իրականացնելու հնարավորություն կստեղծեն:

Մենք հավատում ենք, որ բացարձակապես բոլոր խնդիրների լուծման ամենակարևոր գործիքը մարդկային միտքն է, որ անսահման է: Դա նշանակում է, որ մեզնից յուրաքանչյուրի, յուրաքանչյուր ոլորտի առջև բացված են անսահման հնարավորություններ և հույս ունենք, որ կկարողանանք օգտագործել այդ անսահման հնարավորությունները»:

ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի ելույթից.

«Կարիք ունենք և պարտավոր ենք ընդլայնել ակադեմիայի կապերը միջազգային գիտահետազոտական բոլոր կենտրոնների հետ: Մենք պետք է լինենք միջազգային գիտական գործընթացների մասը, համահունչ լինենք ժամանակի պահանջներին: Համագործակցությունը պետք է լինի իրական ծրագրերի շուրջ, համաշխարհային բոլոր կենտրոնների հետ:

Գիտության հանդեպ վերաբերմունքը պետք է սկսվի կրթական օջախից: Կրթական համակարգը, բացի դասական կրթություն տալուց, պետք է ծառայի երիտասարդների կարողությունների բացահայտմանը և նրանց կապի իրենց ապագա գիտական գործունեության հետ: Կարծում եմ, որ ակադեմիան ինքը պետք է վաղ շրջանից նպաստի այն երիտասարդ գիտական կադրերի պատրաստմանը, որոնք ապագայում դառնալու են ակադեմիական համակարգի մասը: Եվ ընդհանրապես, գիտակրթական համակարգը մեզանում օպտիմալացման և ինտեգրացման կարիք ունի»:

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի ելույթից.

«75 տարիների ընթացքում Հանրապետության բարձրագույն գիտական կենտրոնը դժվարին և բովանդակաշատ ուղի է անցել, մեծ գիտական նվաճումներ ձեռք բերել, արժանացել համաշխարհային ճանաչման:

1935 թվականին Երևանում բացվեց ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը (Արմֆան), որը ղեկավարում էր անվանի երկրաբան, ակադեմիկոս Ֆ. Յու. Լևինսոն-Լեսինգը:

1943 թ. նոյեմբերին, երբ շարունակվում էր Հայրենական մեծ պատերազմը, ՀԽՍՀ կառավարության որոշմամբ հիմնադրվեց Հայաստանի Գիտությունների ակադեմիան: Նորաստեղծ Գիտությունների ակադեմիայի նախագահ է ընտրվում հանրահայտ արևելագետ, ակադեմիկոս Հ. Օրբելին: Ակադեմիայի հիմնադիր կազմում ընդգրկվեց գիտության տարբեր բնագավառների 23 անվանի գիտնական: Հ. Օրբելին միաժամանակ աշխարհահռ-

չակ թանգարան Էրմիտաժի տնօրենն էր և 1947 թ. վերադարձավ Պետերբուրգ:

Ակադեմիայի պրեզիդենտ (նախագահ) ընտրվեց համաշխարհային ճանաչման արժանացած, կազմակերպչական փայլուն ունակությունների տեր, երիտասարդ Վիկտոր Համբարձումյանը: Այս ընտրությունը Հայաստանի համար ունեցավ շատ կարևոր նշանակություն՝ գիտության հետագա զարգացման համար:

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի 46-ամյա ղեկավարման ժամանակահատվածում Հայաստանի Գիտությունների ակադեմիան կայացավ, ունեցավ ծանրակշիռ ձեռքբերումներ, առաջատար դեր ստանձնեց Խորհրդային Միության հանրապետությունների ակադեմիաների շարքում, ճանաչելի դարձավ արտասահմանում:

2009 թ. սահմանվեց Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակ, որ յուրաքանչյուր երկու տարին մեկ շնորհվում է աստղաֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառներում գիտական խոշոր ձեռքբերումներ ունեցած ականավոր գիտնականներին: Մրցանակաբաշխության նպատակն է հավերժացնել Վ. Համբարձումյանի հիշատակը, աշխարհին ներկայացնել Հայաստանի գիտությունը և նպաստել նշված գիտական ուղղությունների զարգացմանը:

1993 թ. Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ է ընտրվում ճանաչված պետական գործիչ, գիտության և գիտական արտադրության անվանի կազմակերպիչ Ֆադեյ Տաճատի Սարգսյանը: Նախագահի պաշտոնը նա ստանձնեց բարդ՝ Հայաստանի Հանրապետության կազմավորման դժվարին ժամանակաշրջանում: 1991 թ. Խորհրդային Միության փլուզումը ծայրահեղ ծանր իրավիճակ ստեղծեց ինչպես տնտեսության, այնպես էլ գիտության ու մշակույթի բնագավառներում: Սկսվեց տնտեսության անկումը, խզվեցին միջպետական սերտ կապերը, դադարեց ԽՍՀՄ հանրապետությունների ակադեմիաների համագործակցությունը:

Գիտությունների ակադեմիայի առաջ ծառացել էին դժվարությամբ ձեռք բերված հաջողություններն ամրապնդելու, խորացնելու, գիտության զարգացման արդի մարտահրավերների ոգով ձեռնարկումներ կատարելու հիմնահարցերը: Նշված դժվարին ու բարդ խնդիրների լուծումը պահանջում էր գիտության բնագավառում իրականացնել բազմակողմանի վերափոխումներ, որոնք կնպաստեին գիտության զարգացմանը:

Անկախության տարիներին գիտության անընդհատ թերֆինանսավորումը բացասաբար է ազդել նրա վերելքի վրա: Մասնագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եթե գիտության ֆինանսավորման չափը փոքր է ՀՆԱ-ի 1 տոկոսից, ապա տվյալ երկրի գիտությունը չի կարող դրական ազդեցություն ունենալ նրա տնտեսության զարգացման վրա, իսկ ինքը՝ գիտությունը, աստիճանաբար կմահանա:

Կադրերի թվաքանակը էական ու կտրուկ կրճատվեց: Եթե մինչև 1990 թ. հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ համակարգում աշխատում էր 7500 մարդ, ապա առ 01.01.2018 թ. այն կիսով չափ նվազեց՝ 3750:

Համակարգի գիտաշխատողները, այնուամենայնիվ, անկախության տարիներին գիտության տարբեր բնագավառներում ունեցել են լուրջ գիտական արդյունքներ, որոնք ճանաչվել են համաշխարհային գիտական հանրության կողմից:

Հասարակության զարգացման գործընթացում գիտության, որպես առաջընթացի հիմնական գործոնի դերը բարձրացնելու նպատակով պետք է վերանայվեն գիտական կազմակերպությունների, պետության և հասարակության փոխհարաբերությունները: Անկախության տարիների ընթացքում ոչ միայն գիտության վարկի խիստ անկում է նկատվում, այլև հանրային գիտակցության մեջ համառորեն ներդրվում է այն տեսակետը, թե Հայաստանում գիտական հետազոտությունները արդյունավետ չեն, չափից անց մեծ են, որ պետությունն ի զորու չէ պահել և զարգացնել այն:

Գիտության ոլորտի առջև ծառացած առաջնահերթ խնդիրներից է գիտական կադրերի երիտասարդացման հարցը: Չնայած պետական տարբեր մակարդակներում ընդունված որոշումներին ու ծրագրերին, երիտասարդ կադրերի համար գիտությունը, այնուամենայնիվ, մնում է պակաս գրավիչ, շարունակվում է երիտասարդ կադրերի արտահոսքը գիտությունից այլ ոլորտներ, նաև արտերկիր: ԳԱԱ բաժանմունքների և ինստիտուտների գործունեության հիմնական ուղղություններից մեկը երիտասարդ կադրերով հետազոտական աշխատանքների ապահովվածությունն է:

Համակարգի հիմնական կադրային պոտենցիալը ձևավորվում է բուհերի և ԳԱԱ-ի ուսումնագիտական կենտրոնի շրջանավարտների հաշվին: Ակադեմիան, որպես շահագրգիռ կողմ, ակտիվ համագործակցում է հանրապետության առաջատար բուհերի հետ:

Վերջին տարիներին էապես բարելավվել է միջազգային գիտակրթական կենտրոնի գործունեությունը: Կենտրոնը, որպես կրթական հաստա-

տություն, բարձր վարկանիշ ունի ոչ միայն հանրապետությունում, այլև ողջ տարածաշրջանում, որտեղ ուսանել են ցանկանում դիմորդներ՝ տարածաշրջանի երկրներից: Կենտրոնն ուսուցումն իրականացնում է ասպիրանտական և մագիստրոսական ծրագրերով... Այն իր ուսումնական և գիտական ծրագրերով կարող է դառնալ հետազոտական համալսարան:

Մեծապես ակտիվացել է ակադեմիայի միջազգային համագործակցությունը: Նոր պայմանագրեր են ստորագրվել Ռուսաստանի Դաշնության, Լիտվայի, Ռումինիայի, Չինաստանի հասարակական գիտությունների, Հնդկաստանի գիտությունների ակադեմիաների հետ: Համատեղ գիտական կառույցներ են ստեղծվել ֆրանսիական մի քանի համալսարանների և մեր՝ Ֆիզիկական հետազոտությունների, Երկրաբանական, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների հետ:

2018 թ. սկզբին ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ են ընտրվել 135 հայազգի հանրահայտ գիտնականներ՝ 23 երկրներից: Սփյուռքահայ գիտնականների հետ մեր գիտնականների համագործակցությունը բազմազան է ու բազնաբնույթ:

ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական ինստիտուտները, կարևորելով պետության տնտեսական և սոցիալական կարիքներին նպաստումը և գիտելիքի հիմքի վրա կառուցվող տնտեսության մեջ ներդրումների կատարումը, առաջարկություններ է ներկայացնում ՀՀ կառավարություն:

2017 թ. իրականացվել է համակարգի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատումը:

ԳԱԱ-ում իրականացվող բարեփոխումների ծրագրերում ներառված են բազմաթիվ միջոցառումներ, ինչպիսիք են ներքին կառուցվածքային բարեփոխումները և օպտիմալացումը, գիտական ուղղությունների և թեմաների արդիականացումը, կիրառական ուղղվածության աշխատանքների և գիտական արդյունքների առևտրայնացման ավելացումը, գիտության և կրթության ինտեգրացման խորացումը, բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստումը և այլն:

Իր գոյության 75 տարիների ընթացքում ակադեմիան կուտակել է գիտագործնական հսկայական փորձ, արժանացել է միջազգային գիտական հանրության բարձր գնահատականին: Ակադեմիայի համակարգում ձևավորվել են բազմաթիվ գիտական դպրոցներ, որոնք միշտ էլ պատվով են ներկայացրել Հայաստանը միջազգային ասպարեզում:

Հատկապես մեծ է ակադեմիայի համակարգող դերը հայագիտության, հասարակական այլ հիմնարար ու կիրառական, բնական գիտությունների բնագավառում»:

ՀՀ ԳԱԱ հոբելյանական հանդիսավոր նիստում Եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցության (ALLEA) փոխնախագահ Քեյ Գրահամի ելույթից.

«Մենք ALLEA-ում Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան համարում ենք այդ ընկերակցության ճանաչված և բարձրարժեք ակադեմիաներից մեկը: ALLEA ցանցը բաղկացած է 58 ակադեմիաներից, որոնք գտնվում են Եվրախորհրդի տարածքում և ԵՄ-ից դուրս: Մենք ներկայացնում ենք գիտության ակադեմիաները և բոլոր ոլորտները՝ սկսած հասարակական և հումանիտար գիտություններից մինչև բնական և կիրառական գիտություններ:

Ձեր հոյակապ հաստատությունը վերջին հինգ տարիների ընթացքում եղել է ALLEA ցանցի լիիրավ անդամ, և մենք ուրախ ենք, որ դուք և այս պատմական հաստատությունը, որտեղ մենք այսօր հավաքվել ենք, անընդհատ զարգացող ALLEA համայնքի մի մասն է:

ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և գիտահետազոտական կենտրոնների ցուցահանդեսը մեզ ցույց տվեց Հայաստանում որակյալ և գերազանց հետազոտությունների լայն շրջանակը: Ձեր ակադեմիան խթանում և իրականացնում է հիմնարար ու կիրառական հետազոտությունները գիտական ոլորտի տարբեր բնագավառներում, ինչպես նաև համակարգում է հետազոտությունները Հայաստանի ողջ տարածքում՝ ավելի քան 35 գիտական հաստատություններ, 3700 գիտաշխատող, այդ թվում 87 ակադեմիկոս:

Դուք նաև ունեք տպավորիչ միջազգային շփումների ցանկ և ուրախ եմ տեսնելու, որ դրանցից մեկը իմ սեփական ակադեմիայի՝ Էդինբուրգի Թագավորական Միության հետ է:

Ձեր հաջողությունն ամենաազդեցիկն է, երբ հայացք ենք գցում վերջին 75 տարիների ընթացքին: Հայկական ակադեմիայի ուղին, իր ներկա նվաճումներով հանդերձ, հարթ չի եղել: Այս հաստատությունն ականատեսն է եղել այնպիսի պատմական իրադարձությունների, որոնք իրենց ազդեցությունն են թողել ոչ միայն այս ակադեմիայի, այլև եվրոպական մայրցամաքի, ընդհանրապես ամբողջ աշխարհի պատմության վրա:

Այս ակադեմիան վեր է հառնել 1943 թ. նոյեմբերին, այն ժամանակ, երբ մայրցամաքն ապրում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի տարինե-

րը: Գրեթե երեք տասնամյակ առաջ ԽՍՀՄ-ի փլուզումը նույնպես ազդել է այս երկրի, այս տարածաշրջանի վրա՝ առաջացնելով քաղաքական և տնտեսական անկայունություն և դժվարություններ: Անշուշտ, ՀՀ ԳԱԱ գիտական աշխատանքը ևս կրել է դժվարություններ այդ տարիներին, սակայն վերջինիս հաջողվեց հաղթահարել այդ փուլը և հաստատակամորեն առաջխաղացումներ ձեռք բերել գիտական բոլոր ոլորտներում:

Գիտական ակադեմիան երբեք չի կորցրել իր կենսական դերը հայ հասարակության զարգացման և առաջընթացի գործում՝ շնորհիվ ձեր լուսավոր առաջնորդների և նախագահների, ի դեմս պրոֆեսոր Օրբելու և 2006 թվականից ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ջանքերի:

Այս հաստատությունը օրինակ է, թե ինչպես պետք է հարմարվել դժվարություններին և ինչպես բարեփոխվել՝ լավագույնս լուծելու հասարակության կարիքները. այն ջանքեր է գործադրել, որպեսզի պահպանի իր առանցքային գիտական ծրագրերը, պահպանի իր կարողությունները և ընդլայնի միջազգային կապերն ու համատեղ ջանքերը, որոնք զորացնում և ամրապնդում են մեր ունակությունները գիտական ջանքերի ներգրավման և առաջխաղացման համար: ՀՀ ԳԱԱ-ն պատմական գանձ է, և ես անկեղծորեն հույս ունեմ, որ այն շարունակելու է վկա լինել իր հիմնադրման համար նշվող ավելի շատ հոբելյանների:


Սակայն գիտության, փորձաքննության և ապացույցների վրա հիմնված գիտելիքների ստեղծման մարտահրավերները ոչ միայն չեն վերացել, այլև փոխակերպվել են՝ դառնալով ավելի բարդ և խրթին: Եվրոպական գիտական ակադեմիաները չեն կարող դիմակայել նրանց, երբ մեկուսի աշխատեն միմյանցից. միջազգային գործընկերների հետ մեր համագործակցությունը շատ կարևոր է:

Մեր անդամ ակադեմիաներին միավորելով միասնական ցանցում՝ մենք ձգտում ենք հասնել գիտության զարգացմանը՝ միևնույն ժամանակ մնալով անկախ քաղաքական, առևտրային և գաղափարական շահերից:

Մեր նպատակն է անցյալի ձեռքբերումներին նայել ժամանակակից տեսանկյունից՝ ավելի լավ ապագա կառուցելու համար, մի ապագա, որը ես ուրախ եմ ասելու, իսկապես ներառում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան:

Այս ակադեմիան կայունության և տոկունության օրինակ է թողել, և մենք բոլորս պատրաստ ենք սովորելու նրա պատմությունից և գիտական ձեռքբերումներից»:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ
BOOK REVIEWS



ABEL MANOUKIAN'S BEARING WITNESS TO HUMANITY: SWITZERLAND'S HUMANITARIAN CONTRIBUTION DURING THE ARMENIAN GENOCIDE IN THE OTTOMAN EMPIRE 1894–1923. MUNSTER, 2018, 605 PAGES

KHOSROEVA A.
akhosroyeva@yahoo.com

Dr. Abel H. Manoukian studied Theology at the University of Vienna, receiving his Masters of Theology in 1987 and the Doctorate Degree in 1993. He has served communities of the Armenian Church in Austria, Armenia, Canada and Switzerland for more than 32 years. He is an author of numerous books and articles in Western and Eastern Armenian, German, English and French. Currently he is engaged as a Scientific Assistant at the Federation of Swiss Protestant Churches and as a General Secretary of the Swiss Council of Religion.

The current English version of the book of Dr. Abel H. Manoukian titled "Bearing Witness to Humanity: Switzerland's Humanitarian Contribution during the Armenian Genocide in the Ottoman Empire 1894–1923" may be one of many hundreds on this subject, but certainly counts as one of the more significant and important researches dedicated to the history of the 100th commemoration of the Armenian Genocide.

The book contains a Preface to the English Edition, Foreword, Preface, 17 chapters, 69 subchapters, Postscript, Appendix, Bibliography, List of Illustrations, and Index (605 pages).

Although this book seeks to pay tribute to the Swiss people's unprecedented solidarity with the Armenians in their most trying times, and without doubt certainly achieves its aim, there is another addition of great significance: at the beginning of his book Dr. Manoukian provides a comprehensive overview of the Armenian history and the events leading to the massacres and genocide perpetrated against the Armenians. He starts his book with the history of the Armenians from scratch: the Armenian Highlands – historical Armenia as a homeland of Armenians, verifying that the Armenians are the indigenous people of that land, going on with discussions on Urartu, then the Armenian Kingdoms including all dynasties – the Yervanduni, the Artaxiads, the Arsacids, after which the author gives a short review of how at the beginning of the 4th century in 301 Armenia became the first country in the world to adopt Christianity. Continuing through the book we see what happened to Armenia under the Arab crescent in the 7th century, where Dr. Manoukian gives a brief review on the Bagratid dynasty and kingdom, which played a significant role in the Armenian history; also he describes two noteworthy religious social movements such as the Paulicians and the Thondracians. One further highlight of this part of the book is when the author describes the history of the Armenian Kingdom of Cilicia. Continuing chronologically, readers get to the history of Armenia under the Ottoman yoke, Western Armenia within the Era of Reform in the Ottoman Empire and Eastern Armenia – under the wings of the Russian double-headed eagle (as the chapter is titled).

In summary, from the introduction of the book up to page 169 Dr. Manoukian describes the history of Armenia in great detail, supplemented with the illustrated descriptions and various maps. The author has all the skills of a historian, including his knowledge of investigation, inquiry, research, account, description, written account of past events, writing of history, historical narrative, recorded knowledge of past events and historical narrative, has prepared a truly methodological textbook of the history of Armenia in English for everyone who desires to learn and study this history and cannot find the appropriate literature. As such, this part of the book alone is significant and could be published and used as a textbook.

Visually, the second part of the book starts with the detailed history of Hamidian massacres of Armenians organized by Ottoman Sultan Abdul Hamid II (1894–1896) and continues to the history of the Armenian genocide during the First World War (1914–1918) organized by the Young Turks' government. Dr. A. Manoukian in his book describes and explains how the Swiss people took a stand alongside their Armenian brothers and sisters in the Christian faith during that trying time. A stark contrast emerges between the merciless policy of annihilation implemented by the Ottoman Empire and the shining examples of selflessness provided by aid workers from Switzerland, who – as doctors, nurses and educators – gave the Armenian people formidable assistance in the most adverse circumstances.

Let's see how the Swiss Humanitarian Aid movement started. In the chapter called "Reaction to the Armenian Massacres in Switzerland" Dr. A. Manoukian writes that on December 28, 1895 under the title "Les massacres en Armenie", the first of a whole series of articles about Armenia was published, written by the Neuenburg professor of theology Georges Godet (1845–1907). Later on, in April of 1896 he published a brochure entitled «Les Souffrances de l'Armenie». Meanwhile the central committee of the Evangelical Alliance in Lausanne launched an urgent appeal to help the Armenians who had suffered at the hands of fate. The events in distant Armenia became a major issue in the Swiss society at that time, intensely preoccupying not only the media but also the churches. After the massacres of Van in June, 1896, massive rallies took place in Lausanne which received exceptionally wide coverage in the Swiss press - which strongly supported the call for a countrywide campaign to collect signatures for a petition. The numbers of signatures were growing and by March 26, 1897 a total number of 453, 015 Swiss citizens had signed a petition in support of the Armenian cause.

It was the first time in the history of the Helvetian people that there had been concerted engagement across the broad circles of Evangelical, Catholic and Jewish Switzerland for a general humanitarian cause and in pursuit of an aim that was solely altruistic. As such, this was a big step from Solidarity Rallies to the Petition.

In the text of the Petition, the Swiss people chiefly emphasized these two points:

- Swiss politics has always been oriented towards the conscientious observation of neutrality.

- The Swiss people view it as a moral obligation to lodge a protest against these crimes which cast shame upon our times.

The charitable work of the Swiss for the Armenians started in January, 1896 when Pastor Antistes Salis from Basel sent a written enquiry to the Swiss Federal Political Department in order to enquire how, money donated to the Armenian cause could be reliably received by those for whom it was intended. William W. Peet who was the general manager of the headquarters of the American mission recommended the city of Sivas (Sebastia) as a good place to locate the branch of the Swiss Armenian Aid, because no other aid society was active in that region. Finally after a lot of efforts on the part of the Swiss, some 230 sponsored Armenian children were accepted into the American missionary stations of Sivas and Gurun. The Development of Swiss charity work in the Ottoman Empire continued many years until 1922 when after the notorious Smyrna catastrophe it was decided to close down the orphanage being run in Constantinople and flee with its orphans to Switzerland. During these years locations where the Swiss provided humanitarian aid to the suffering Armenians included Sivas, Gurun, Kharbert, Marash, Aintab, Hadjin, Marzvan, Brussa, Bardezag, Constantinople, Urfa, Zinjidere near Caesarea, Khoy, Urmia, Salmast, Jerusalem, Beirut, and Begnins (Switzerland).

Although the German Aid Work for Armenia didn't have a dedicated committee in Switzerland, many *Swiss* humanitarian *aid workers* were engaged at German missionary stations from 1897 alongside many others who worked directly in the Swiss Armenian Aid Organizations in collaboration with the American missionary societies.

I would like to highlight just one brief example of how the author in his book describes and truly honours Swiss missionaries and their work helping Armenians during these difficult times. In the chapter "Children without a Childhood" (page 306 of the book) Dr. Manoukian writes about Hans Fichter, the orphan preacher from Basel who was serving in Sivas in April, 1897. Here the Swiss Armenian Aid had provided sponsorship for children in the three orphanages called "Swiss Home", "Annexe", (for boys) and "Nest" (solely for girls). They were located in the newly established Armenian quarter on the northern side of the city, near to the consulates of France, England and the US. They comprised newly constructed private houses, which after the massacres had been left empty and reconstructed as ideal homes for the orphans. These 3 homes housed 160 children, 90 of them

